# ԱԶԱՏԱԶՐԿՈ՞ՒՄ, թէ՞ ՏԱՌԱՊԱՆՔ

## Կյանքը քրեակատարողական հիմնարկներում

### Զեկույց

Helsinki Committee of Armenia
Հայաստանի Հելսինկյան Կոմիտե

The Norwegian Helsinki Committee

Open Society Foundations

Helsinki Committee of Armenia
Հայաստանի Հելսինկյան Կոմիտե

THE NORWEGIAN HELSINKI COMMITTEE

OPEN SOCIETY FOUNDATIONS

ԱՎԵՏԻՔ ԻՇԽԱՆՅԱՆ, ՌՈԲԵՐՏ ՌԵՎԱԶՅԱՆ

# ԱԶԱՏԱԶՐԿՈ՞ՒՄ, ԹԵ՞ ՏԱՌԱՊԱՆՔ

## Կյանքը քրեակատարողական հիմնարկներում

Զ ե կ ո ւ յ ց

Երևան
Հայաստանի Հելսինկյան կոմիտե
2013 թ.



# Հայաստանի Հելսինկյան կոմիտե

Երևան 2013



ՀՏԴ 343.8(042.3)
ԳՄԴ 67.99(2)8
Ի 684

Ուսումնասիրությունն իրականացվել է Նորվեգիայի Հելսինկյան կոմիտեի և Բաց հասարակության հիմնադրամների ֆինանսական աջակցությամբ:

Խմբագիր և սրբագրիչ՝ Թ. Սուալիյան
Ձևավորումը՝ Ա. Ուռուտյանի

Կյանքը քրեակատարողական հիմնարկներում՝ ըստ նախկին դատապարտյալների շրջանում անցկացված ուսումնասիրության արդյունքների
Զեկույց

Ի 684 Իշխանյան Ա.
Ազատազրկո՞ւմ, թե՞ տառապանք: Զեկույց / Ավետիք Իշխանյան,
Ռոբերտ Ռևազյան.- Եր.: «Հայաստանի Հելսինկյան կոմիտե» ԻՀԿ, 2013,- 120 էջ:

Գրքույկում ներկայացված են Հայաստանի Հելսինկյան կոմիտեի կողմից Հայաստանի քրեակատարողական հիմնարկների ներքին կյանքի ուսումնասիրության արդյունքները: Ուսումնասիրության նպատակն է բացահայտել ազատազրկված անձանց խնդիրները ազատազրկման ընթացքում և դրանից հետո, մասնավորապես, միջանձնային հարաբերությունները այլ ազատազրկվածների և վարչակազմի աշխատակիցների հետ, զբաղվածության և աշխատանքի հարցը թե՛ ազատազրկման ընթացքում և թե՛ ազատ արձակվելուց հետո, ինչպես նաև հասարակությանը վերաինտեգրման այլ խնդիրներ:

ՀՏԴ 343.8(042.3)
ԳՄԴ 67.99(2)8

ISBN 978-99941-2-924-9
© «Հայաստանի Հելսինկյան կոմիտե» ԻՀԿ, Երևան, 2013

## Բովանդակություն

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ . . . . . . . . . . 5

I. Պահելու պայմանները . . . . . . . . . . 8

II. Միջանձնային հարաբերություններ . . . . . . . . . . 13

III. Ազատ արձակվելուց հետո և վերաինտեգրում . . . . . . . . . . 27

Առանձին պատմություններ . . . . . . . . . . 31

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ . . . . . . . . . . 37

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ . . . . . . . . . . 41

Կյանքը քրեակատարողական հիմնարկի ներսում . . . . . . . . . . 42

Վարդգես Գասպարիի հուշերից.
Քաղբանտարկյալը կալանավայրում . . . . . . . . . . 50

Ա.Բաղդասարյան.
«Երբեմն հսկիչները ջարդում
կամ խցից տանում էին այն ամենը,
ինչ բանտարկյալների
հարազատներն էին բերել» . . . . . . . . . . 54

Ա.Գրիգորյան.
Բանտից Ռուսաստան . . . . . . . . . . 55

Ք.Հայրապետյան.
«Ախր դու չես պատկերացնում՝
ի՞նչ տեղ ա բանտը» . . . . . . . . . . 56

Մ.Մաթևոսյան.
Էլ չէր ուզում հիշել . . . . . . . . . . 58

Ս.Հունանյան.
«Ամեն ինչ հասկըցա, ամեն ինչ գիտեցա»,-
առանց ափսոսանքի ասում է նախկին
դատապարտյալը . . . . . . . . . . 59

Դարպասի փոքրիկ դռան վերևը կար մի երկաթյա թակոց, որով և միլիցիապետը թակեց ուղղիչ տան դուռը: Բախումից անմիջապես հետո դռան ձախ կողմից բացվեց մի փոքրիկ պատուհան, որի միջից երևաց զինվորականի գլխարկով մի դեմք: Ցած ձայնով ասվեցին ինչ-որ խոսքեր, որից հետո դուռը բացվեց, և մենք մտանք ուղղիչ տունը - առաջ ես, հետո՝ միլիցիապետը: Կյանքի այլ պարագաներում առաջինը մտնելը նշան է հարգանքի, իսկ այստեղ այդ, իհարկե, մի քիչ այլ իմաստ ուներ, իբրև մարդկային հարաբերություն... Այս ամենը թողեց ինձ վրա ծայր աստիճանի ծանր, ճնշող տպավորություն. - մշուշոտ, վայրկենական զառանցանքի նման մտքիցս անցավ Ֆեոդոր Դոստոևսկու «Մեռյալ տունը», և ինձ թվաց, թե կյանքը, աշխարհը, իմ բոլոր կապերն ու ծանոթությունները, անգամ արևն ու կապուտակ երկինքը մնացին մեր հետևից փակված դարպասի այն կողմը, իսկ թե ի՞նչ էր ինձ սպասում դարպասի այս կողմը - այդ մութն էր դեռ ինձ համար և այդ մթությամբ՝ ճնշող ու անձկալի:

*«Երևանի ուղղիչ տնից»*
Եղիշե Չարենց

# 1. Ներածություն

Հայաստանում ազատազրկվածները՝ որպես խոցելի խումբ, անտեսված են թե՛ պետության և թե՛ հասարակության կողմից: Հայտնվելով ազատության մեջ՝ նրանք կանգնում են որոշակի խնդիրների առջև, մասնավորապես՝ գործազրկության և հասարակությանը ինտեգրման: Որոշ երկրներում պետությունն իր վրա է վերցնում պատիժը կրած և ազատություն ստացած իր երկրի քաղաքացուն ժամանակավոր կացարանով, աշխատանքով, առողջապահական և հոգեբանական ծառայություններով ապահովելու խնդիրը՝ դրանով իսկ օգնելով նրան հասարակության մեջ իր տեղը գտնելու: Հայաստանում, սակայն, նախկին կալանավորներից շատերն ազատություն ստանալուց քիչ անց կրկին դիմում են հանցագործության, որովհետև կալանավայրից դուրս գալուց հետո չեն կարողանում հասարակության մեջ հարմարվել և ապրել: Քրեակատարողական հիմնարկից անձի ազատվելուց հետո պետությունը կարծես թե ձեռքերը լվանում է և մի կողմ կանգնում: Այդ մարդիկ, քրեակատարողական հիմնարկից դուրս գալով, որպես կանոն, աշխատանք չեն գտնում, կորցրած են լինում իրենց մասնագիտական ունակությունները, որոշ դեպքերում նաև ունենում են քայքայված ընտանիք, և սա հանգեցնում է նրան, որ մարդիկ նորից հայտնվում են քրեակատարողական հիմնարկում:

2011 թ. մայիսին ԱԺ հայտարարած համաներմամբ ազատ արձակվեցին ավելի քան 400 դատապարտյալներ, սակայն կարճ ժամանակ անց նրանցից մի մասը վերադարձավ բանտ: Նրանք կրում են «նախկին դատապարտյալ» խարանը: Նրանց որպես լիարժեք քաղաքացու չեն ընկալում, զգուշանում են աշխատանքի ընդունելուց: Խնդրի շուրջ տարբեր հասարակական կազմակերպություններ պարբերաբար մտահոգություններ են հնչեցնում, որոշ պետական պաշտոնյաներ երբեմն նույնպես բարձրաձայնում են խնդրի մասին, սակայն պետությունը չի ձեռնարկում խնդրի լուծման գործնական քայլեր:

Քրեակատարողական հիմնարկներում գտնվող անձինք, որպես կանոն, խուսափում են պատմել այնտեղ տիրող իրավիճակի մասին՝ զգուշանալով ճնշումներից ինչպես վարչակազմի, այնպես էլ այլ ազատազրկվածների կողմից: Հայտնվելով ազատության մեջ՝ նրանք դառնում են ավելի անկաշկանդ և կարող են ներկայացնել քրեակատարողական հիմնարկների իրական պատկերը և խնդիրները:

Նպատակ ունենալով ավելի մանրամասն բացահայտել ազատազրկված անձանց խնդիրները ազատազրկման ընթացքում և դրանից հետո, մասնավորապես, միջանձնային հարաբերությունները այլ ազատազրկվածների և վարչակազմի աշխատակիցների հետ, զբաղվածության և աշխատանքի հարցը թե՛ ազատազրկման ընթացքում և թե՛ ազատ արձակվելուց հետո, ինչպես նաև այլ խնդիրներ, Հայաս-

տանի Հելսինկյան կոմիտեն իրականացրեց սույն ուսումնասիրությունը: Ամբողջ հարցաշարը բաժանվել է երեք մասի. առաջին խումբը վերաբերում է քրեակատարողական հիմնարկներում պահման պայմաններին, երկրորդը՝ միջանձնային հարաբերություններին և ծագած խնդիրների լուծմանը, երրորդը՝ ազատ արձակվելուց հետո վերաինտեգրման խնդիրներին:

Ուսումնասիրությանը մասնակցել են կազմակերպության մարզային ցանցի կամավորներ և կազմակերպության աշխատակազմի անդամներ (16 անձ)՝ ներառելով մարզերի հետևյալ քաղաքները՝ Գորիս, Սիսիան, Վայք, Եղեգնաձոր, Ջերմուկ, Երևան, Հրազդան, Արարատ, Ճամբարակ, Գավառ, Աշտարակ, Գյումրի, Ստեփանավան: Ընդհանուր առմամբ հարցազրույցներ են անցկացվել նախկինում դատապարտված 33 անձի հետ, ում ազատազրկման կրման որոշակի ժամկետը ներառել է 2000-ից մինչև 2013-ն ընկած ժամանակահատվածը:

Ուսումնասիրությունն իրականացվել է Նորվեգիայի Հելսինկյան կոմիտեի և Բաց հասարակության հիմնադրամների ֆինանսական աջակցությամբ:

Գորիսի և Գյումրու կամավորները ընդգրկված են նաև Հայաստանի Հելսինկյան կոմիտեի կողմից իրականացվող և Նորվեգիայի Հելսինկյան կոմիտեի կողմից ֆինանսավորվող «Քաղաքացիական հասարակության և ԶԼՄ-ների համագործակցության ապահովումը Հայաստանում՝ մարդու իրավունքների պաշտպանության մոնիթորինգի գործում» ծրագրի մեջ, որի շրջանակներում, բացի ուսումնասիրություն անցկացնելուց, նրանք պատրաստում են նաև թեմայի շուրջ հոդվածներ: Հոդվածները տեղադրվում են կազմակերպության կայքում և տարածվում առցանց այլ լրատվամիջոցներով՝ խնդիրը հանրության լայն շրջանակներին հասանելի դարձնելու նպատակով:

Այդ աշխատանքները համակարգել է Խոսքի ազատության պաշտպանության կոմիտեի փորձագետ Մեսրոպ Հարությունյանը:

1991 թ.-ից՝ Հայաստանի անկախացումից մինչև 2001 թ., բանտային համակարգը փակ կառույց էր՝ ինչպես խորհրդային տարիներին, և այնտեղ տիրող բարքերի մասին հասարակությունը տեղեկանում էր կցկտուր տեղեկություններով, երբեմն չղարշված «ռոմանտիկ» պատմություններով: Իրավիճակը փոխվեց 2001 թվականից, երբ Եվրոպայի խորհրդի պահանջով բանտային համակարգը փոխանցվեց արդարադատության նախարարության ենթակայության ներքո: 2004 թ.-ից գործում է ՀՀ ԱՆ հասարակական վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդների խումբը, որը փորձում է բացահայտել քրեակատարողական համակարգում տիրող բարքերը, մասնավորապես, ազատազրկվածների միջանձնային հիերարխիկ հարաբերությունները: Խմբի հիմնական գործիքները են դիտարկումները և հարցումները: ՔԿՀ համակարգի ինչպես նյութական պայմանների, այնպես էլ վարչակազմի վերաբերմունքի և միջանձնային հարաբերությունների մասին պատկերացում կարելի է կազմել հիմնականում դիտարկումների միջոցով: Ինչ վերաբերում է ՔԿՀ-ներում ազատազրկվածների իրավունքներին վերաբերող տարբեր հարցերին (զբոսանք, նամակագրություն, դիմում-բողոքներ, սնունդ, վարչակազմի վերաբերմունք, միջանձնային հարաբերություններ), զրույցների ժամանակ ազատազրկվածները, որպես կանոն, տալիս էին հետևյալ պատասխանները. այստեղ ամեն ինչ նորմալ է, բողոքներ չունենք, սնունդը նորմալ է և այլն: Բողոքները լինում են հիմնականում իրենց քրեական գործերից, վաղաժամկետ ազատման անկախ հանձնաժողովից:

Իհարկե, դիտարկումների ընթացքում զգացվում է, որ ինչ-որ բան այն չէ, կան արտնայլներ: Ուշագրավ է, որ ՔԿՀ-ներում տիրող հիերարխիկ հարաբերությունների մասին առավել անկեղծ խոսում են ՔԿՀ-ների վարչակազմի աշխատողները՝ բացատրելով այն մի շարք հանգամանքներով. խորհրդային շրջանից ժա-

ռանգություն մնացած հիմնարկների շենքային վաս պայմանները, աշխատողների ոչ բավարար թիվը և ցածր աշխատավարձը: Սակայն չունենալով կոնկրետ փաստեր՝ խումբն իր զեկույցներում անդրադարձել է հիմնականում ՔԿՀ-ների նյութական պայմաններին: Խնդիրն ավելի է բարդանում այն պատճառով, որ նախկին ազատազրկվածները նույնպես դժվարությամբ են պատմում ՔԿՀ-ներում տիրող իրավիճակի մասին: 2006 թ. մի նախկին ազատազրկված, կարդալով դիտորդական խմբի հերթական հաշվետվությունը, հետևյալ կարծիքը հայտնեց. «Պայմանների մասին ճիշտ է գրված. մեկուսարանը մոծականոց է, խցերը՝ խոնավ ու գարշահոտ: Բայց հասարակական դիտորդներին խորհուրդ կտայի զրուցել ոչ միայն կալանավորների, այլ նաև նրանց հարազատների և դատապաշտպանների հետ: Ազատազրկված անձը շատ բան չի ասում»: Նա նաև անանուն հուշեր պատմեց, որոնք հրապարակվեցին «Դիտորդ» հանդեսում (տե՛ս http://armhels.com/publications/%D5%A4%D5%AB%D5%BF%D5%B8%D6%80%D5%A4-n-535/): Առավել արժեքավոր էր 2008 թ. նախագահի ընտրությունների հայտնի իրադարձությունների ժամանակ ազատազրկված քաղբանտարկյալ Վարդգես Գասպարիի հուշերը, որոնք նույնպես հրապարակվեցին «Դիտորդում» (առավել մանրամասն հուշերին կարելի է ծանոթանալ վեբ-կայքում՝ http://armhels.com/wp-content/uploads/2012/06/946arm-Ditord–846–2009.pdf):

**Ուսումնասիրության արդյունքները**
**Հարցազրույցներ նախկին ազատազրկվածների հետ**

# I. *Պահելու պայմանները*

**1. Ինչպիսի՞ն էին բանտախցի պայմանները (քանի՞ հոգով եք եղել, ի՞նչ չափսերի էր բանտախուցը, կայի՞ն պատուհաններ, օդափոխման, ջեռուցման համակարգեր, սանհանգույց և այլն):**

*Այս հարցին հարցվածները տարբեր պատասխաններ են տվել:*

«Կար ընդամենը մեկ պատուհան 6x8-ի վրա տարածքում, ուրիշ ոչ մի բան չկար, ջուրը ժամով էին տալիս: 8 հոգու համար նախատեսված կամեռում 13 հոգով էինք մնում, մարդ կար՝ քնում էր սկամեյկի վրա»: «Նախատեսված էր 3 հոգու համար, և երեքով էլ մնում էինք, չափսը 4x5մ, եվրոպատուհաններ, ներսից բացվող, ջեռուցումը՝ նորմալ, նույնիսկ լավ, որ մեկ-մեկ 15 օրվան չէինք սրպասում, ջուր էինք քաշում լողանում, տուալետը խցից առանձին էր, ընդեղ մարդիկ կային, որ բերում մաքրել էինք տալիս, մի տուփ սիգարետ էինք տալիս, մաքրում էր: Իսկ խուցը, դե, պրրում էինք ընդեղ կարծես մեր տունը, մենք էինք մաքրում, էդ երեքս»: «Պայմանները նորմալ էին, մեր կամեռը լավերի կամեռն էր, բայց կար ընդամենը 12 մահճակալ 23 բանտարկյալի համար, 5x6 մետրի վրա»: «Բանտախուցը նախատեսված էր 12 հոգու համար, բայց բանտախցում ազատազրկման պահին կային 6 հոգի: Դա եղել է իմ և բանտակից ընկերներիս ցանկությունը, քանի որ մենք պրպահովված ընտանիքներից էինք: Բանտախուց կար, որն ուներ ավելի շատ բանտարկյալներ, քան նախատեսում էր սենյակը, ու շատ հաճախ տեղ չէր լինում քնելու: Բանտախցում կային պատուհաններ, որոնք էլ հանդիսանում էին օդափոխիչ համակարգը: Սանհանգույցը ևս առկա էր հենց բանտախցում, որը որ հարմարեցված և վերանորոգված էր իմ և իմ ընկերների ֆինանսական և անմիջական մասնակցությամբ»: «15-20 քառակուսի մետրի վրա մոտավորապես 12 հոգի Սովետաշենում, իսկ Կոշում մեծ սենյակ էր, որտեղ մոտավորապես 100 հոգի էինք: Սովետաշենում սանհանգույցը ներսում էր և բաց էր, ու երկրորդ հարկում պառկած մարդիկ կարող էին տեսնել քեզ, դրա համար հասուկ սավանով հարմարեցրել էինք և հնարավորինս փակել զուգարանը, սական դրա համար ևս ամեն շաբաթ վճարում էինք, որպեսզի ստուգող հսկիչները չտրկեին սավանը: Օդափոխություն չկար, անգամ պրակիներ չկային, ձմռանը փակում էինք ցելոֆաններով, իսկ ամռանն էլ բաց էր, ձմռանը նաև գաղտնի պլիտա էինք միացնում»: «10 տեղ՝ 24 մարդ, քնում էինք հերթով, չափերը մոտ 5x6-ի էին, կար 1 պատուհան»:

**2. Ինչպիսի՞ն էր բանտի կողմից տրամադրվող սննդի որակը և չափաբաժինը:**

*33 հարցվածներից 22-ը դժգոհել են սննդի որակից և նշել, որ սնունդը հիմնականում բերվում էր դրսից՝ հարազատների կողմից, նրանք երբեմն օգտվում էին միայն հացից: Հնչել են նույնիսկ խիստ գնահատականներ:*

«Սնունդը, եթե դրսից չբերվեր, կալանավորները կմահանային»: «Շան կեր»: «Սահմանվում էր հերթականություն, վեց հոգանոց խմբում յուրաքանչյուրի հարազատը բերում էր շաբաթը մեկ անգամ: Սահմանված կարգի համաձայն յուրաքանչյուր բանտարկյալի հարազատ բերում էր վեց հոգու համար սնունդ»:

**3. Ի՞նչ հաճախականությամբ էիք լոգանք ընդունում:**

*33 հարցվածներից 20-ը պատասխանել են, որ շաբաթական մեկ անգամ, որից մի մասը պատասխանել են, որ մեկ անգամից ավելի լողանալու համար պետք է գումար վճարեին, իսկ 8-ի դեպքում լոգանք ընդունել են 10 և 15 օրը մեկ անգամ, 1 դեպքում՝ ամիսը 1 անգամ, մնացածները պատասխանել են՝ երբ ցանկանում էին, միայն պետք է գումար ունենաս: Հարցվածներից մի մասը նշում էին, որ խցերում պայմաններ էին ստեղծել և լողանում էին նաև խցերում (մասնավորապես զուգարանում):*

«Կոնկրետ չեմ հիշում՝ քանի օրը մեկ (15 կամ 12), բայց հիշում եմ, որ չէինք դիմանում այդքան: Եթե ուզում ես գնալ լողանալ, 1000 դրամ տուր, թող տանեն՝ լողացի: Բաղնիք էլ չէր... մի խողովակ էր, միջից էլ ջուրը թափվում էր գլխիդ»: «Լոգանքի համար սահմանափակում չի եղել, ով որքան ուզենար կարող էր լողանալ, միայն պետք է գումար ունենալ այդ արտոնությունից օգտվելու համար»: «Երբ ուզում էինք՝ լողանում էինք, նույնիսկ կարաս 2 անգամ լողանաս, եթե փող ունես»:

**4. Արդյոք բավարարո՞ւմ էին բանտի կողմից տրամադրված միջոցները (հիգիենայի պարագաներ, արտահագուստ), և արդյոք ստացե՞լ եք նշված պարագաները հարազատներից:**

*33 հարցվածներից 25-ը պատասխանել են, որ հիգիենայի պարագաները հիմնականում ստանում էին դրսից՝ հարազատներից, մի մասը պատասխանել էին, որ ամիսը 1 անգամ հնարավոր էր սև օճառ տային:*

**5. Ո՞ւմ էին տրվում արտոնություններ (լրացուցիչ լոգանք, հավելյալ սնունդ, հագուստ, պարագաներ, մեկ այլ բանտախուց), և որո՞նք էին դրանց ձեռքբերման պայմանները:**

*33 հարցվածներից 22-ը պատասխանել են, որ արտոնություններ տրվում են հանցագործ (գողական) աշխարհի ներկայացուցիչներին և ֆինանսական միջոցներ ունեցողներին:*

«Գումարով կարելի էր ձեռք բերել ամեն ինչ»: «Արտոնություն տրվում էր այն անձանց, ովքեր «պերվի կրուգ» տղա էին համարվում... աշխատակազմի հետ սուրճ էին խմում, նրանք կարող էին զբոսանքի շատ գնալ, դուռը բաց թողնել և օդափոխել սենյակը, կարող էին բանտում ազատ տեղաշարժվել, որը մյուսները չէին կարող անել»: «Օգտվում էին այն մարդիկ, ովքեր հարուստ էին, «գողական» և ամենակարևորը՝ ովքեր դրսի գողական աշխարհից օգնություն էին ստանում: Խեղճերը միշտ տուժում էին, նույնիսկ իրենց ուղարկված ուտելիքն էին վերցնում: Բանտախցի աշխատակիցներին կաշառում էին, և դա նրանց հաջողվում էր»: «Արտոնություններ չկային, եթե ես ուզում էի, օրինակ, գնայի մեկ այլ բանտախուց, ման գայի գայի կամ մարդ տեսնեի, ուրեմն 500 կամ 1000 դրամ

տալիս էի ու գնում, բայց դա վատ էր: Դա մեր համար էր արվում, կարող ա ես էնտեղ ծանոթ-բարեկամներ ունեի, ուզում էի տեսնել: Դա արվում էր մեզ համար, և մենք էլ շատ գոհ էինք»:

## 6. Ո՞վ էր պատասխանատու բանտախցի մաքրության համար:

*33 հարցվածներից 25 պատասխանել են, որ բանտախցի մաքրությամբ զբաղվում էին հենց իրենք՝ աշխատանքները միմյանց միջև բաժանելով, միաժամանակ նրանցից մի քանիսը նշել էին, որ լինում էին մարդիկ, ովքեր երբեք մաքրությամբ չեն զբաղվել: 5-ը պատասխանել են, որ այդ գործերը կատարում էին նրանք, ովքեր «լավ» գործով չէին նստած, «լավ տղա» չէին համարվում, նրանց ճնշում էին ու ստիպում, որ մաքրությամբ զբաղվեն:*

«Գաղութում հիմնական գործ անողները՝ մաքրություն ապահովել, ավել անել, աղբը թափել, սեռական փոքրամասնություններն են: Նրանցից բացի, ոչ մի «մաքուր տղա» չի գնա զոնա ավլի, դա նրանց պարտականությունն է: Յուրաքանչյուրը գիտի իր տարածքը»: «Մաքրություն էին անում նրանք, ովքեր գողական կյանքում ապրելու իրավունք չունեին: Այսինքն՝ այնպիսի արարք էին կատարել, որ գողականը չէր ընդունում (բռնաբարություն, անչափահասի, անտեղի մարդկանց սպանություն, պոռնկությանը նպաստող արարքներ): Նրանք դառնում էին ամենավատ գործ կատարողները: Գողականը կոնկրետ հանցագործներ են... իրենք են ընդունում իրենց օրենքները: Իրենք իրենց ինքնասիրության համար կյանք խլողներ են»: «Բանտախցի մաքրության համար պատասխանատու էին «ճտերը»: Այդպիսին էին համարվում այն մարդիկ, ովքեր առավել ճնշված էին «խառոշիների» կողմից, որոնք էլ հենց մաքրում էին բանտախուցը և լվանում «խառոշիների» շորերը:

## 7. Ինչպիսի՞ն էր ձեր առօրյան բանտում (զբոսանք, ժամանց, գնումներ տեղի կրպակից, կրպակի գները):

*Հարցվածների հիմնական զբաղմունքը եղել են հեռուստացույցը, զբոսանքը, թերթ, գիրք կարդալը, տարբեր խաղերը, եթե ինչ-որ բան պետք էր, ձեռք էր բերվում տարբեր կերպ:*

«Գաղութում խանութ կա, որտեղ գները դրսի գներից երկու անգամ թանկ են. այնտեղ ծխախոտ էին վաճառում, ատամի խոզանակ, հիգիենայի պարագաներ... Նաև էրոտիկ ամսագրեր կարող էիր գնել, դրանք տարբեր գներ կարող էին ունենալ՝ 5-10 հազար, գինը կախված է բովանդակությունից, և թե ինչ տեսակի նկարներ կան ամսագրում...»: «Ամեն օր 30 րոպե զբոսանք մաքուր օդում: Զբոսանքի ժամանակ խուցը տակն ու վրա էին անում՝ ստուգելու համար՝ կտրող, ծակող գործիքներ կա՞ն, թե՞ ոչ: Երբ վերջացնում էին, ներս էինք գալիս: Ոչ մի տեսակի զբաղմունք չենք ունեցել, և դա էր հիմնականում վեճերի պատճառը»: «Հաճախ է եղել, որ դուրս չենք եկել զբոսանքի, քանի որ ՔԿՀ-ի աշխատողները տրամադրություն կամ հավես չեն ունեցել դատապարտյալների զբոսանքն ապահովելու»: «Զբոսանք չէի ասի, ուղղակի գնում ես բանտի կտուր քայլելու: Նույն բետոնե պատերն են, ուղղակի վերևից մաքուր օդ ա գալիս»: «Տեղի կրպակից չէինք օգտվում: Այն, ինչ մեզ պետք էր, մեր հարազատներից էինք խնդրում: Այդ կրպակի գործունեությունը իրականացնում էր նաև հսկիչը: Նրա մոտ կային որոշակի քանակությամբ սնունդ, ծխախոտ, ու վաճառում էր մեկուկես անգամ ավելի թանկ»: «Խաղում էինք շաշկի, նարդի, շախմատ, կարտ: Կրպակ կար, գնումներ ես անձամբ արել եմ, սիգարետ էինք առնում, ասենք, կրկնակի գումար էինք տալիս հսկիչին, որ դրա կեսը վերցնի, մյուս կեսին մեր ուզածը բերի... կրպակում քառակի թանկ էին ապրանքները, բայց, դե, պետք էր, առնում էինք, գումարն էլ տանից էինք ուզում, ուղարկում էին»: «Ամիսը

մի անգամ դուրս էին հանում մաքուր օդի, բանտում էլ շախմատ, շաշկի էին խաղում, կրակի գներն էլ կրկնակի-եռակի թանկ էին»: «Ես հաճախ դուրս չէի գալիս, հեռախոսով էի թաքուն պահում և հիմնականում ինտերնետով զբաղվում, երբեմն գիրք էլ էի կարդում»: «Գումար էի տալիս ադմինիստրացիայի աշխատակցին և դրսից սիգարետ, պաղպաղակ և ներկի պարագաներ էր բերում, որովհետև այնտեղ նկարում էի»:

## 8. Անցե՞լ եք արդյոք նախնական բուժզննում: Ազատազրկման ժամանակ բժշկական հետազոտության կարիք ունեցե՞լ եք: Ի՞նչ կերպ է տրամադրվել բուժօգնությունը, ինչպիսի՞ն էր բժիշկների վերաբերմունքը:

*33 հարցվածներից 9-ը պատասխանել են, որ բուժզննում չեն անցել, մեկն ընդհանրապես չէր հիշում, ևս 9-ը գոհ են եղել բժիշկների աշխատանքներից, 3-ը բուժօգնության կարիք չեն ունեցել, մնացածները դժգոհ էին բուժսպասարկման որակից:*

«Գալիս և ստուգում էին հազարից մեկ, բայց ինչքան էժան դեղ կար՝ տալիս էին, ո՞վ իմանա, կարող ա՝ ժամկետն էլ անց էր, վերաբերմունքը իրենց տրամադրությունից էր կախված»: «Խոնավությունից ու ոչ նորմալ պայմանների պատճառով ստացել եմ մաշկային հիվանդություն, բայց որևէ բժշկական միջամտություն չի եղել: Բժիշկները ծայրահեղ վատ վիճակի դեպքում նոր կգային, կնայեին ու կասեին բան չկա, իսկ շատ պնդելու դեպքում նոր կտանեին բուժկետ ստուգելու: Այն էլ՝ ոչ բոլորին, միայն նրանց, այսինքն՝ «լավ աչքով նայած մարդկանց»: «Բանտում անորակ սննդի պատճառով ունեցել եմ ստամոքսի լուրջ խնդիրներ: Շատ հաճախ էի բուժզննման կարիք ունենում, բայց դժվարությամբ էին բժիշկ տրամադրում, ավելի ճիշտ՝ չէին հավատում, որ խնդիրներ ունեմ: Այնտեղ մինչև վիճակդ չի վատթարանում, բժիշկ չեն տրամադրում: Իրենց թվում է, թե ուղղակի պատճառ ենք փնտրում, որ արևի լույս տեսնենք: Կամ էլ՝ մարդ մեռնում էր, նոր էին անհրաժեշտ բուժօգնություն տրամադրում, բայց արդեն ուշ էր լինում»: «Բուժօգնության կարիք ունեցել ենք և օգնություն ստացել ենք, ինչ հնարավորություն որ ունեցել են իրենք, ըստ դրա՝ ցուցաբերվել է օգնություն: Այն բավարար չի եղել, բայց հարմարվել ենք: Եթե հիվանդությունը լուրջ է լինում, տեղափոխում են բերդի հիվանդանոց: Կար ատամնաբուժարան, որտեղ ցավացող ատամները հանում էին, ոչ մի ատամ չէր բուժվում: Իմ ազատազրկված ժամանակ մոտ 10-15 հոգի մահացել են տարբեր՝ թոքերի, սրտի և այլ հիվանդություններից: Եղել է դեպք, երբ ազատազրկվածը գաղութում մահացել է, հետո են տարել Ցեբե, հետո՝ միայն հանձնել հարազատներին, եթե հարազատ չունեցավ՝ իրենք տանում են, թաղում»: «Բանտում ունեցել եմ բուժզննման կարիք, ու բժիշկները օգնել են միայն դեղեր տալով. այն էլ այն դեպքում, երբ մենք էլ իրենց էինք «լավ» նայում»: «Երբ ինչ-որ խնդիր էինք ունենում, դժվարությամբ էին բժիշկ տրամադրում, ձայներս բարձրացնում էինք, բողոքում, հայհոյում, նոր էդ ժամանակ էին բարեհաճում մեզ բժիշկ տրամադրել»:

## 9. Ի՞նչ հաճախականությամբ եք տեսակցել ձեր հարազատների հետ և ի՞նչ պայմաններում:

*Հարցվածները հիմնականում նշել են, որ տեսակցությունները տրվում էին ամիսը մեկ անգամ, մի քանիսը պատասխանել են, որ իրենք են հրաժարվել տեսակցություններից, քանի որ ընտանիքը ֆինանսական լավ վիճակում չէր:*

«Ամիսը մեկ անգամ հարազատներս կարող էին այցելել... Եթե արտահերթ տեսակցություն էին ուզում, մյուս բանտարկյալները փողով կարողանում էին նման իրավունք ստանալ»: «Մեզ տեսակցություն չէր թույլատրվում և ոչ մեկիս,

զանգի հնարավորություն էլ չկար, ուղղակի եթե ցանկանում էինք զանգել, լեզու էինք գտնում հերթապահների հետ, տալիս էին՝ զանգենք, դե, գիտեք, էլի, էդ ոնց ա լինում, փողով չէ, ուղղակի կարող ա տանից բերած ինչ-որ բան տայինք»: «Հարազատների հետ հանդիպում էինք այնքան, որքան ուզում էինք՝ օգտագործելով ծանոթ-փող-բարեկամ տարբերակը»: «Ամիսը երկու անգամ տեսակցության օր էր: Ցանկացած աշխատանքային օր՝ 6-ից հետո, կարող էին ուտելիք բերել: Չնայած կարող էիր փողը տալ ու ամեն օր գնալ տեսակցության»: «Մինչև դատը տեսակցում էինք շաբաթական մեկ անգամ, իսկ դատից հետո էլ արդեն ամիսը մեկ անգամ՝ անվճար, իսկ ավելի հաճախ նաև՝ վճարովի»: «Տեսակցությունները ընդհանրապես ամիսը երկու անգամ են լինում, նախատեսված կարգով, սակայն էլի կարելի է պայմանավորվել գումարով»: «Հատուկ հանդիպման սենյակ էր, 30 րոպե տեսակցման իրավունք ունեինք: Մեզ հետ սենյակում կողմնակի մարդ չկար, աշխատակիցները կանգնում էին սենյակի դռան հետևում: Դրսից հնարավոր չէր տեսնել սենյակի ներսը»: «Երկու անգամ եմ տեսակցել հարազատներիս, սենյակ կար, գումարը տալիս էինք, իջնում, շփվում: Բայց կար հեռախոս, ու հեռախոսի սկայպով ամեն օր խոսում էինք, կարիք չի եղել շատ տեսակցելու»:

## 10. Կապն արտաքին աշխարհի հետ (հեռախոս, ինտերնետ, նամակ):

*Հարցվողներից 4-ը որպես կապի միջոց նշել են նամակագրությունը, մնացածների համար կապն արտաքին աշխարհի հետ եղել է տաքսաֆոնների և բջջային հեռախոսների միջոցով:*

«Կար բջջային հեռախոս, որը բոլորիս համար էր, լիցքավորում էինք մեր միջոցներով: Կարող էին օգտվել բոլորը: Օբշյակի փողով էլ էինք լիցքավորում հեռախոսը»: «Տեղում ունեցել եմ հեռախոս, որից օգտվել են օրվա մեջ մեկ անգամ քարտով, որն էլ բերել են հարազատները, իսկ բջջային հեռախոսը չնայած պաշտոնապես արգելված է եղել, սակայն ես անձամբ ունեցել եմ»: «Միայն գաղտնի հեռախոս, սակայն ցանկացած նամակ և ինֆորմացիա դուրս կամ այլ բանտախուց հնարավոր է եղել հասցնել հսկիչների միջոցով»:

# II. *Միջանձնային հարաբերություններ*

## 1. Ի՞նչ հարաբերություններ էին խցակիցների միջև:

*Հարցվածներից միայն 3-ն են նշել, որ հարաբերությունները վատ են եղել, մնացածները նշել են՝ նորմալ կամ լավ:*

«Լինում են դեպքեր, երբ լարված են լինում: Այնտեղ կան պայմանական խավեր՝ «գողական» և «չընդունվածներ», «լիդերներ», հաճախ հենց նրանց միջև էլ տեղի են ունենում բախումները»: «Գաղութում ամեն մեկն իր շրջապատն ունի, այնտեղ կա բժիշկ, գիտնական, դասախոս, ամեն կատեգորիայի մարդ կա, ամեն մեկն իր հոգուն հարազատ մեկին գտնում է և շփվում նրա հետ»: «Լարված... Կռիվ միշտ եղել է: Ամեն մարդ ուզում էր շեֆ լիներ, այստեղից սկսվում էր վեճն ու վերածվում ծեծկռտուքի: Բախումներ ու լարվածություն խցակիցների միջև միշտ եղել են, ամեն մեկն ուզում էր իրենից ավելի թույլերին խեղճացնել»: «Շատ բան կախված էր նրանցից, թե ով ինչ գործով է նստել: «Վատ գործով» նստողներին կա՛մ ճնշում էին, կա՛մ մեկուսացնում մյուսներից: Բանտային աշխատանքները նրանք էին անում: «Վատ գործը» բռնաբարությունն էր, երեխայի նկատմամբ բռնությունը»: «Յուրաքանչյուրն ուներ իր ընկերը, իր հացի ընկերը: Առանց գողերի բաները դժվար է կամ անհնար է կառավարելը: Նույնիսկ երբեմն այլ ՔԿՀ-ներից բերվում էին գողեր բանտային կարգուկանոնը հաստատելու համար»: «Այնտեղ աշխատում են, սենց ասած, մի մասի մարդկանց մի տեղ հավաքել: Մեր խցում նորմալ մարդիկ էինք՝ ոչ գողական, ոչ սբոր՝ թափթփուկներ: Ու իրար հասկացած՝ սպասում էինք»: «Բանտում լարվածություն միշտ կար. թեթևակի հողում, նույնիսկ մի անզգույշ հայացք, վեճն ու կռիվը պատրաստ էր: Մի անգամ նստած դոմինո էինք խաղում: Խաղի կեսից ես դուրս եկա, վերադարձա ռոպեներ հետո ու տեսա, որ իմ տեղն արդեն նստել էին: Ճիշտ է, ես զգում էի, որ կռիվ է լինելու, բայց փորձեցի պաշտպանել իմ իրավունքը և նստել իմ տեղն ու շարունակել իմ խաղը: Այստեղից սկսվեց կռիվը: Կռիվ, որը լուծվում էր ըստ բանտի կանոնների: Ըստ այդ կանոնների՝ բանտ նայողները աշխատում են ինքնուրույն լուծել այդ հարցը: Բանտ նայողները՝ «գող» ու «խառոշի» տղաներն իրենց ճշտով լուծում էին նմանատիպ հարցերը»:

## 2. Ինչպիսի՞ն էին հարաբերությունները վարչակազմի աշխատակիցների հետ:

*Այս հարցին հարցվածները հիմնականում պատասխանել են, որ հարաբերությունները*

*եղել են նորմալ:*

«Հարաբերությունները նորմալ էին: Ես աշխատում էի նրանց հետ չփչվել: Երբեմն օբշչյակից գումար էինք տալիս ստուգողներին, որ չգան ստուգումներ անելու»: «Իհարկե համագործակցում էին, և այն մարդիկ, ովքեր դրսից օժանդակություն էին ստանում: Եվ ինքնըստինքյան հասկանալի էր, որ համագործակցության հիմնական գործոնը այդ օժանդակությունն էր, որը դառնում էր լավ հարաբերությունների հիմնաքարը»: «Վատն այն է, որ կան մարդիկ, ովքեր զուտ հսկիչներ են ու դիմացինին ընդունում են զուտ կալանավորի, որի հետևանքով էլ սկսվում է կոնֆլիկտը: Խցում միշտ լինում է մեկը, ով ադմինիստրացիայի հետ իրականացնում է շփումը»: «Նուբարաշենը» «գողական» բերդ էր համարվում: Կան համապատասխան մարդիկ, ովքեր շտկում են ռեժիմի հետ հարաբերությունները, որպեսզի կալանավորները լավ զգան իրենց: Կալանավորները դումար են խաղում, որի արդյունքում գումարները կուտակվում են, ու այդ կուտակված գումարը փոխանցվում է ՔԿՀ-ի «նայողին», իսկ ինքն այդ գումարով հարցերն է լուծում»: «Նայած, եթե իրանց կողմից չէին պահում՝ նորմալ, բայց պատահում էր՝ գալիս էին, հայհոյանքով խոսում բանտարկյալների հետ: Ո՞նց կլինի՝ մլիցեն քեզ քֆուր տա, դու չպատասխանես, էլ հարգված չես լինի»: «Պատճառ էին ման գալիս, որ «նառուշենի» տային, պարտադիր ամսվա գումարը պետք է տային՝ 10 հազար դրամ, թե չէ կծեծեին և այլն... Օրինակ՝ հեռախոսով տեսնեին խոսում ես, 5 հազար դրամ տուգանք էր, եթե տվել ես, հանգիստ խոսում ես, եթե ոչ՝ ծեծվում ես»: «7 խցով հացադուլով կարողացանք ադմինիստրացիայի հետ այնպիսի հարաբերություններ ստեղծել, որ գոնե երբ զանգը տան գիշերը, մահճակալս հավաքեմ, բայց պառկեմ, ոչ թե կանգնեմ տեղս: Տանջում էին մարդուն... Որոշակի բաներ փոխեցինք էդ ՔԿՀ-ում... Մարդիկ գտանք, ում հետ արդեն կարողանում էինք լեզու գտնել, նույնիսկ նամակ էին տանում-բերում»: «Հիմնական հարաբերությունները կարգավորվում էին «զոն նայողի» կողմից, և ադմինիստրացիան գրեթե դերակատարություն չուներ: Ադմինիստրացիան կպնում էր միայն նրանց, ովքեր գումարով խաղ էին խաղում»:

## 3. Լինո՞ւմ էին արդյոք ճնշումներ խցակիցների կամ վարչակազմի կողմից: Եթե այո, ապա՝ ի՞նչ:

*Հարցվածներից 16-ի դեպքում ճնշումներ եղել են. 7 դեպքում՝ վարչակազմի կողմից, 5 դեպքում՝ խցակիցների, իսկ 4 դեպքում՝ և՛ վարչակազմի, և՛ խցակիցների կողմից:*

«Խցակիցները ճնշումներ գործադրում էին հատկապես այն ժամանակ, երբ հայտնի էին դառնում մեղադրականները: Ըստ կատարած հանցանքի խստության՝ ճնշումները խցակիցների կողմից խստանում էին»: «Ադմինիստրացիայի կողմից ֆիզիկական ճնշում չկար, կար միայն հոգեբանական ճնշում: Ֆիզիկական ճնշում իրականացնում է միայն «զոն նայողը», միայն նա իրավունք ունի ֆիզիկական բռնություն իրականացնելու»: «Սկզբում գլազոկով նայում էին, երբ տեսնում էին՝ նստած ենք տեղաշորին, գալիս ծեծում-ջարդում էին, այդպես մեկ ամիս, հետո հասկացան, որ չենք ենթարկվում, էլ բան չէին ասում»: «Մի անգամ պետն իմանալով, թե տվյալ մարդն ինչի՛ համար է ազատազրկվել, հրամայել է «խուզել նրա շատ երկար մազերը» և պատժել»: «Ճնշումներ լինում էին «վատ գործով» նստողների նկատմամբ: Դատապարտյալները երբեմն հոգեբանորեն ճնշում էին նրանց, ովքեր դումար չէին խաղում ու օբշչյակին գումար չէին վճարում»: «Եթե քեզ թույլ պահես, անպայման կլինի: Սկզբում եղել է իմ վրա ճնշում, նրանք ուզում էին մեզ կոտրեին, բայց իմ համար զանգել են, ու նորմալ դարձավ ամեն ինչ, փող են ուզում,

ներխաշում են գումարով խաղերի մեջ, փորձում են ճնշել»: «Մի անգամ ռեժիմի պետը ինչ էր ծխախոտ տամադրել, նրան բողոքեցի, վիճաբանություն սկսվեց, ու էդ ծեծկռտուքից հետո մի ժամի օր պատժախցում անցկացրի, դրանից հետո էլ ոչ մի ճնշում չի եղել»: «Եթե իրանք անհարգալից էին խոսում, ուշունց էին տալիս, պատասխանում էինք, ու ըստեղից վիճաբանություն էր լինում: Բայց որ խփում էին, աշխատում էինք չպատասխանել, չխփել, որ լուրջ հարցեր չառաջանային, մեր վիճակը ավելի չվատեինք: Իսկ ինքնուրին պատասխանելու դեպքում էլ շատ-շատ մի 10-15 սուտկա կարցեր էին տանում: Ես էլ եմ նստել մի ժամի անգամ: Իսկ բանտարկյալների հետ կռիվը չէր հարգվում, տենց բաներ չկար»: «Իհարկե լինում էր: Չէր լինում միայն այն դեպքում, եթե դու գտնվեիր պտուշի դերում ու ենթարկվեիր «գող» ու «խառոշի» տղաներին: Դրանք էին թելադրում իրենց կանոնները բանտում»:

## 4. Ի՞նչ պատժամիջոցներ էին կիրառվում (պատժախուց, մահակ, էլեկտրաշոկ և այլն):

*Որպես պատժամիջոց հարցվածները հիմնականում նշել են պատժախուցը, մահակը և ծեծը, միայն մի դեպքում է նշվել գրավոր նկատողությունը, էլեկտրաշոկը և ինչ-որ բաներից զրկելը:*

«Անկարգությունների ժամանակ առանձին ջոկաս կար, որ տանում էին և առանձին զբաղվում»: «Պատժամիջոցներ միշտ եղել են՝ մահակի միջոցով խփում էին անխնա»: «Բանտի աշխատակիցների հետ կոպիտ խոսելու կամ չենթարկվելու դեպքում տանում էին պատժախուց: Օրինակ՝ բանտի աշխատակիցը եթե մտներ խուց ու պառկած դասապարտյալին ասեր՝ վեր կաց կանգնի, ու նա չենթարկվեր, դրա համար կարող էին պատժախուց տանել»: «Եթե կամեռում արյուն չի թափվել, ոչ մի բան էլ չեն անում, եթե արյուն կա, մտնում են դուբինկեքով ու սկսում են ջարդել»: «Հսկիչները գալիս են, մտնում խուց, ինձ մասով չեն դիպչում, իրանք վախեցել են փաստաբանից, հացադուլից ու նման ինչ-որ բաներից, չնայած հենց խցի դռան մոտից էնպիսի գոռոցներ էի լսել, էնպես էին ծեծում կալանավորներին: Մտնում են խուց, բոլորիս ներքնակները հանում են խցից ու ասում՝ դե քնեք: Ո՞նց քնենք էդ երկաթե ճաղերի վրա»:

## 5. Կայի՞ն արդյոք ազատազրկված անձինք, ովքեր թմրամիջոցներ էին օգտագործում: Եթե այո, ապա ինչպե՞ս էին դրանք ձեռք բերում:

*Հարցվածներից միայն 7-ն են պատասխանել, թե տեղյակ չեն՝ թմրամիջոցներ օգտագործողներ կայի՞ն, թե՞ ոչ, մնացածները տվել են դրական պատասխան:*

«Կային մարդիկ, ովքեր օգտագործում էին և՛ թմրամիջոց, և՛ ցանկացած այլ արգելված բաներ: Ե՛վ հսկիչներին, և՛ ադմինիստրացիային գումար տալու դեպքում ամեն ինչ հնարավոր էր ձեռք բերել»: «Թմրամիջոցները, փողը գալիս էին հսկիչի, սննդի միջոցով, բնականաբար, հսկիչին փող էինք տալիս դրա համար: Գեյերը դիմեդրոլ, անալգին, հոգեմետ դեղեր էին վաճառում: Դրոժ էինք առնում 5000 դրամով, թողնում էինք թթվի մի շաբաթ, ու եթե մինչև այդ հսկիչները չէին գտնում, գինու պես մի բան էր դառնում (բռաշկա), խմում էինք»: «Թմրամիջոցները տարբեր ձևով էին հասնում խցեր. հսկիչների միջոցով ու հիմնականում ծխելու թմրամիջոցներ (պլան), մնացածի մասին բան ասել չեմ կարող, չեմ տեսել: Պլանը ավելի հեշտ էր հասնում խուց, քան ալկոհոլը»: «Թմրամիջոցներ օգտագործել է գրեթե 80%-ը՝ թե՛ բանտարկյալները և թե՛ ադմինիստրացիայի աշխատակիցները: Խցակից ընկերներիցս 6-ն ունեցել են «գող» մականունը: Նրանք գրեթե ամեն օր դրսից՝ մի պաշտոնյայից ստացել են

տոտրակներով լի ուտելիք և հիգիենայի պարագաներ, որի միջոցով էլ՝ նաև թմրամիջոցներ: Այդ օգնությունը նաև ադմինիստրացիայի աշխատակիցների միջև է բաժանվել: Ադմինիստրացիայի աշխատակիցները լավ հարաբերություններ մեջ էին «գող» մականուն ունեցող բանտարկյալների հետ, քանի որ դրսից հովանավորություն են ունեցել»: «Ամեն մեկը մի ձևով ձեռք է բերում: Եղել է մարդ, որ կնոջն էլ է դասարանի առջև կանգնացրել. թմրանյութը կինն էր բերել և բռնվել... Ամեն մեկը մի ձև գտնում էր, լինում է՝ որ բռնվում են... Լինում է նաև, որ վարչական աշխատողներն էլ են օգնում: Կարող է՝ այնպիսի վարչական աշխատող լինի, որ հանում փողի թմրադեղ բերի: Փողը քաղցր բան է, փողի համար ամեն ինչ էլ կարող են անել»: «Կլինեին, տարբեր ճանապարհներով, շատը հենց ներսի աշխատողների միջոցով: Լսել եմ, որ մի անգամ բուժքույրերից մեկը ամորույքի մեջ պահած թմրանյութ էր բերել: Հետո, ինչքան գիտեմ, հանեցին գործից»: «Օգտագործողներ կային, ու ադմինիստրացիան նրանց բոլորին գիտեր հաս առ հաս: Յուրաքանչյուրն իր ձեռք բերելու կանալն ուներ, չէր բացառվում նաև ադմինիստրացիայի միջոցով ձեռք բերելը, բայց մեծ մասամբ բերում էին տան սննդի հետ միասին: Յուրաքանչյուր ՔԿՀ-ում կային օպերներ, ովքեր հստակ բոլորի մասին ինֆորմացիայի էին տիրապետում՝ ինչ կյանքով են ապրել մինչև բանտ ընկնելը, ու ըստ դրա հեշտ էր իմանալ՝ թմրամիջոց օգտագործո՞ւմ էին, թե՞ ոչ»:

## 6. Արդյոք լինո՞ւմ էին գումարով խաղեր:

*Այս հարցին հարցվողներից միայն 4-ն են բացասական պատասխան տվել, մնացածները տվել են դրական պատասխան:*

«Այո, զառ էինք գցում, թղթախաղ, շախմատ»: «Գաղութները հենց գումարով խաղեր խաղալու համար են: Առանց դրա գաղութն անհնար էր»: «Առաջին խցում դրվածքն այնպիսին էր, որ խաղեր չէինք խաղում, բայց երկրորդ խցում ջահելությունը շատ էր, ու խաղում էին: Ինձ ասում էին՝ «հոպա՛ր, էս քո տեղը չի... սա քո մահճակալն ա, քեզ համար հանգիստ պառկի»: Դե, իհարկե, հանգիստ պառկել չէր ստացվում, երբ որ տեսնում էի մարդկայինից դուրս ինչ-որ հարաբերություններ էին ուզում ստեղծվել»: «Գումարով խաղերը բանտում միշտ կային, որի միջոցով էլ սարքում էին մեր գլխին ու փող աշխատում: Ինձ մեծ դժվարությամբ հաջողվեց խուսափել, որպեսզի չներքաշվեմ այդ խաղի մեջ»: «Չկա քրեակատարողական հիմնարկ, որ գումարով խաղեր չլինեն»:

## 7. Ինչպե՞ս էին մարդկանց ներգրավում գումարով խաղերի մեջ:

*Հարցվածներից 2-ը այդ հարցին չեն պատասխանել, 5-ը նշել են խաղերի մեջ ներգրավելու տարբեր միջոցներ՝ թե՛ ֆիզիկական և թե՛ հոգեբանական:*

«Եթե չես ուզում խաղաս, ահավոր լոմկեք են անում, ստիպված նստում ես, խաղում ես, լոմկա վիճակում էլ խաղաս, անպայման կկրվես, կրվածն էլ 150-200 հազարից ա սկսում: Բայց իմ համար զանգեցին, ես մեկ անգամ եմ խաղացել ընդամենը»: «Ստիպում էին, նաև՝ ծեծի միջոցով: Եղել են դեպքեր, երբ մեր գլխին սարքել են»: «Հաճախ դասապարտյալին թասիբի էին գցում, և նա ներգրավվում էր խաղի մեջ»: «Առաջարկում էին խաղալ «գողերին» ավելի օգտակար լինելու համար, հոգեբանական ճնշման միջոցով կամ նույնիսկ կարծիք էլ չէին հարցնում, տալիս էին խաղաթղթեր, ու էլ հետ կանգնել չէր լինում»: «Եթե դու դրսում խաղում էիր, ուրեմն այդ «քոսը» քո մեջ արդեն կա, ու դու բանտում առիթը բաց չես թողնի, որ նորից ու նորից խաղաս: Բացի դրանից, խաղն այնպիսի մի ուժ ունի է, որ եթե պարտվում ես,

էլի ուզում ես խաղաս, որ հետ բերես պարտվածը: Կա «օբշյակ» և «պալաժենիա» հասկացություն: Օբշյակը գողական աշխարհն է, պալաժենիան այն մարդիկ, ովքեր գողականից չեն, բայց իրենց հետ բոլորը հաշվի են նստում: Օրինակ՝ եթե 100 հազար ես կրել, 25%-ը, այսինքն՝ 25 հազարը տալիս ես պալաժենիային, իսկ պարտվելու դեպքում 100%-ն ես տալիս օբշյակին: Ստացվում է այնպես. որ խաղում կրես-չկրես, մեկ է՝ պարտված ես»: «Կային մարդիկ, ովքեր ուզում էին խաղալ: Ովքեր չէին ուզում խաղալ, նրանց հոգեբանորեն ճնշում էին, օրինակ՝ կարող էին այնքան շատ ասել՝ խաղա, խաղա, որ մարդուն ուրիշ ճար չէր մնում»: «Խաղերի մեջ չեն ներքաշում, ոչ մեկին չեն ստիպում, դա կամավոր է, գումար ունես՝ խաղում ես, չունես՝ յան տուր, քեզ համար ապրի, ոչ ոք քեզ չի ասի՝ արի, խաղա: Դրա համար «զոն նայող» կա, կգնաս-կասես, կբռնեն՝ հերը կանիծեն»: «Այդ հարցերը «զոն նայողն» է կարգավորում: Կա դրված. եթե մարդը չի ցանկանում, իրա կամքին հակառակ չես կարող ստիպել, որ խաղա...» «Չգիտեմ, ես կտրուկ ասել եմ՝ չեմ խաղում ու վերջ: Դե, բնականաբար, սկզբից եկան, համոզում էին, ինչ-որ բաներ էին ասում, ես կտրուկ ասել եմ. «Վեր կացեք, ռադներդ քաշեք ստեղից, դուք ո՞վ եք, որ ինձ ասեք՝ ինչ անեմ, չե՛մ խաղում, ինձ հանգիստ թողեք ու վե՛րջ»: Հետո «զոն նայողն» էլ եկավ մոտս, խոսեցինք, ասեցի, որ չեմ ուզում խաղամ, ո՛չ իրենք ինձ բան ունեն ասելու, ո՛չ էլ ես՝ իրենց: Ուզո՞ւմ եք՝ խաղացե՛ք, ինչ ուզում եք արեք, ես ոչ տեսել եմ, ոչ գիտեմ, ինձ թողեք: Ու թողեցին»: «Յուրաքանչյուրին ներքաշում էին, հսկիչի աչքի առաջ խաղում էին, նախօրոք նրանց բաժինը տալիս էին: Սկզբում մի հատիկ ծխախոտի վրա էին խաղում, հետո՝ մի տուփի, ապա անցնում էին փողի»: «Համոզում էին, հետը աշխատանքներ էին տանում, մանրբաշ էին կերցնում: Իսկ ովքեր անեն դեպքում չէին խաղում, ապա առանձնանում էին և իրավունք չունեին խառնվելու գողական բազարներին կամ որևէ խոսակցության»: «Շատ դժվար է չներքաշվել էդ խաղերի մեջ: Բայց պիտի նաև վստահ լինես, որ պարտվելու դեպքում կարողանալու ես պարտքդ փակել: Դե, բայց քաշում են, խաղացնում են, ասում են՝ «Եկել ես, էս կյանքին ինչո՞վ պիտի պիտանի լինես, կարգեր կա, բան կա, պիտի էդ մարդկանց օգնեք»: «Տարբեր, ամեն մեկին մի ձևով, բայց տպավորությունը էնենց ա, որ ստիպողաբար չի, եթե չես ուզում, կարաս և չխաղաս: Բայց վերջում ընենց էր ստացվում, որ չխաղացող չէր լինում: Ասենք՝ մեկն ասում էր, որ նա խաղում ա, ես ինչի՞ պտի չխաղամ, ինչո՞վ եմ պակաս, սպասի՝ ես էլ փորձեմ: Էն մեկը, ասենք, ընկերոջ խաթեր ա խաղում, խոսքի՝ ընկերը պարտվել ա, ինքն էլ խաղում ա, որ ընկերոջն օգնի՝ նրա կրվածը շահելու հույսով: Մարդ էլ կա՝ համոզում են, էնքան են ասում՝ խաղա-խաղա, մի անգամ փորձի, վերջը ասում ա՝ սպասի, էս մի անգամը խաղամ-պրծնեմ: Բայց խաղում ա ու չի պրծնում, ընկնում ա... Դժվարը հենց էդ մի անգամն ա»:

## 8. Պարտվելու դեպքում ինչպե՞ս էր պարտքը վերադարձվում:

*Հարցվածներից 8-ը նշել են, որ պարտքի գումարը դրսում էին ստանում, հիմնականում հարազատներից, 4-ը չեն պատասխանել, մնացածները տվել են տարբեր պատասխաններ:*

«Դիմում են հարազատներին, ընկերներին, անպայման պիտի տաս, եթե չտվեցիր, մնում ես թավանի տակ, էդ թեմա ա, էլ չես հարգվում, կոտրվում ես»: «Ով չէր կարողանում փողը փակվեր, պարտքը փակվել, իր համար վատ էր լինում... Ինքը կարող է հայտնվել գեյերի մոտ, ինքնասպանության փորձ անել... իրեն կոտրում էին հոգեբանորեն»: «Պարտքը չվերադարձնել չկար: Եթե հասնում էր պարտքը վերադարձնելու օրը, պետք է տայիր, հակառակ դեպքում ծեծն էլ էր քիչ լինում: Ծեծում էին մինչև սպանելը կամ

ուրիշ բան էին անում (սեռական ոտնձգություններ)»: «Դու ունես մեկ ամիս պարտքը վճարելու համար. կա՛մ ընտանիքդ է վճարում, կա՛մ էլ դրա դիմաց որոշակի աշխատանքներ ես կատարում (մաքրություն, քո բաժին սնունդդ ես իրենց տալիս)»: «Եթե խաղալու ընթացքում գումար է պարտվել և ուշացրել ու փողը չի տվել, ապա նրա անունն ընկնում է: Այդպիսի ազատազրկվածներին ֆուֆլոշիկ են կոչում: Նրանք այլևս իրավունք չունեն խաղալու»: «Որ ճար չունեն պարտքը տալու, հո չե՞ն տա՝ սպանեն: Մարդ կա, օրինակ, թասիբ ունի, եթե փողը չի կարողացել բերել, գնացել է և իրեն կախել»: «Պարտված գումարը վճարելու օրը խաղից առաջ է որոշվում, և այդ օրվա մինչև 24:00-ը պայմանավորվածությունն ուժի մեջ է: Եթե գումարը չեն մուծում, ապա նրանց հետ ոչինչ չի պատահում, ուղղակի դրանից հետո նրանք արդեն մի քիչ քաշված են ապրում, չեն կարող մտնել գողական ռազբորկաների մեջ, որովհետև կասեն՝ «դու ֆուֆլոշիկ ես, գնա, քո համար քո անկյունում ապրի», նեղություն չեն տա, բայց իրենք էլ չեն կարող խառնվել [ինչ-որ հարցերի], լավ զգալ իրենց...»: «Լավ տղեն իրավունք չունի սուտ ասի: Եթե ես ասում եմ՝ այսինչ օրը քեզ այսինչ բանը կտամ, ապա պարտադիր պետք է տամ: Սուտ խոսելու դեպքում արդեն հարգանքը կորում ա, և այլևս չեն հարգի»: Իսկ հարցին, թե «ֆուֆլոշիկները» դառնո՞ւմ են պոտենցիալ մաքրություն պահպանողներ, թե՞ ոչ, նա ասաց, որ՝ ոչ, դուրսը մաքրում են միայն նրանք, ովքեր մաքուր չեն [սեռական փոքրամասնություններ]»: «Ինքն է մարում, կամ էլ ընտանիքն է փակում: Չես կարող չտալ, գետնի տակից էլ լինի՝ պիտի տաս, այլապես երկար չես ապրի բանտում»: «Ժամանակի ընթացքում պարտադիր վերադարձնում էին՝ հսկիչներին տալով համապատասխան մարդկանց կոնտակտները: Օրինակ՝ եթե պարտվել էր 10 հազար դրամ, ապա դրսից իրեն ուղարկում էին 11 հազար դրամ, որից 1000-ը հսկիչն էր վերցնում, իսկ մնացածն էլ հասցնում էր իրենց»: «Կամ պիտի հարազատներդ վճարեն, եթե փողով չեն կարողանում վճարել, ապա կարող էին պարտքի դիմաց առաջին անհրաժեշտության իրեր, մթերքներ բերել: Իսկ եթե վճարել չէին կարողանում, «գալուբոյ զոնա» էին ընկնում, որտեղ էլ ամենակեղտոտ աշխատանքներն են անում»: «Եթե պարտվում ես, պետք է վճարել ինչպես ուզում ես: Կա հստակ սահմանված ժամկետ, ու այն երկարացվում էր միայն, եթե ծանոթ էին լինում պարտատերերը: Ուշացնողներին կա՛մ ֆուֆլո էին անվանում, կա՛մ ծեծում էին: Մի անգամ պարտքը վճարել չկարողանալու պատճառով մի բանտարկյալ կտրել էր երակները: Բժիշկները փրկեցին, իսկ «զոն նայողն» ասում էր՝ թողե՛ք թող սատկի, իսկ դրանից հետո էլ նրան «գծերից քցեցին»:

**9. Վարչակազմը խտրական վերաբերմունք ունեցե՞լ է ձեր կամ ձեր բանտակիցների նկատմամբ (ֆինանսական կարողություն, սեռական, կրոնական կամ ազգային փոքրամասնություն, նախկին պաշտոնյաներ, քրեական հեղինակություն և այլն):**

*Հարցվածներից միայն 8-ն են բացասական պատասխանել, մնացածները տվել են դրական պատասխան:*

«Խտրական վերաբերմունք բանտակիցների հանդեպ եղել է, թույլ ու խեղճերին միշտ ճնշել են: Մենք իրենց միշտ գումարով մաղարիչ էինք անում, որ մեզ էլ լավ նայեն: Թույլերը, որոնք դրսից պաշտոնյաներից աջակցություն չունեին, միշտ նրանց թիրախում են հայտնվել: Իսկ անունով «գողերը» ադմինիստրացիայի աշխատակիցների աչքի լույսն են եղել, որովհետև նրանց եկամտի աղբյուրն են եղել»: «Եղել են, օրինակ՝ սեռական փոքրամասնությունների հետ կապված, այսինքն՝ տուալետները դրանց էին բերում մաքրել տալու»: «Այո՛, փողով ամեն ինչ հնարավոր էր դառնում: Ով ֆինանսական միջոցներ

ուներ, արտոնություններ էր ստանում: Կար նաև «զոն նայող», ում հանդեպ վերաբերմունքը ևս այլ էր»: «Սեռական և կրոնական փոքրամասնություններն ունեին առանձին խցեր, օրինակ՝ 7-րդ խուցը Եհովայի վկաներինն էր, հիմնականում առանձին էին, բայց, դե, մենք էլ ճնշում էինք»: «Բա ո՞նց... բա տերն ու անտերը որտե՞ղ են տարբերվում: Տերունի մարդն ունի մախսիմալ հնարավորություններ՝ լավ խուց... Իսկ ով էլ անտեր ա, էն ա անտեր ա...»

## 10. Ինչպե՞ս էին մյուս ազատազրկվածները վերաբերվում վարչակազմի կամ բանտակիցների դեմ ուղղված բողոքներին:

*4 մարդ չի պատասխանել, 2-ն ասել են՝ չգիտեն, 6-ը նշել են, որ նման դեպք չի եղել, 5-ը նշել են, որ նորմալ են վերաբերվում, մնացած դեպքերում վերաբերմունքը եղել է բացասական:*

«Եթե բողոքում էին մի քանի հոգի, ապա նրանց միանում էին բոլորը»: «Եթե բողոքդ արդար է՝ նորմալ, եթե տղեքի դեմ ես բողոքում՝ չես հարգվի, կկոտրեն»: «Խցակիցների փոխարեն որոշում կայացնում էր միայն ընտրյալը, ով էլ որ պետք եղած ժամանակ հայտնում էր «նադզորին» բողոքը, իսկ ադմինիստրացիան միշտ արձագանքում էր: Սակայն հնարավոր չէր առանց ընտրյալին տեղյակ պահելու ինչ-որ բողոք հնչեցնել ադմինիստրացիային: Բողոքելու դեպքում պատիժը խիստ էր»: «Եթե խցի դրվածքներին կամ ինչ-որ մեկին էր վերաբերում բողոքը, նույնիսկ մարդկայնորեն չէր ընդունվում, իսկ եթե բողոքները կենսապայմաններին էին վերաբերում, որը համընդհանուր շահից էր բխում՝ ոչ մի խնդիր»: «Ցանկացած հարցի դեպքում, բացի պալաժենեցից, կարող ես դիմել նաև գողին: Խցից ոչ ոք չի բողոքի, քանի որ մինչև այդ արդեն այնպիսի պայմաններ կստեղծեին, որ նրան խցից հանեին: Եթե պարզվեց, որ խցից ինֆորմացիա է գնում, բոլորն ընկնում էին կասկածի տակ, ու երբ գտնում են «ծախողին», ինքը դառնում էր բոլորի աչքի փուշը»: «Նման մարդկանց չէին հարգում: Նրանց հետ մյուսները չէին շփվում, աշխատանքի մեջ էին «օգտագործում»: «Բանտակիցների կողմից բռնություն է կիրառվել ծեծի միջոցով»: «2 ամիս կալանքի տակ ես մնում»: «Շատ վաս, և որակվում էին որպես «գործ սվող»: «Վաս: Խաբարբզիկությունը ոչ մի տեղ էլ չի հարգվում, նեղում էին: Գողական օրենքներով չէին ներում, ինքը էլ չէր կարա լավ տղա ըլներ, զուգարան ավլող էր դառնում»: «Ընդհանրապես բողոքներն ադմինիստրացիային հիմնականում չէին հասնում, հիմնականում զոնի ներսում է լուծվում, բայց եթե հասնում էր, վաս էին վերաբերվում բողոքողին... ուրիշ կամեռ էին գցում, փչացնում էին, զուգարան մաքրող ու տրուսիկ լվացող էին դարձնում»:

## 11. Որքանո՞վ էր վարչակազմը միջամտում միջանձնային հարաբերություններին:

*3 մարդ չի պատասխանել հարցին, 7-ը նշել են, որ անհրաժեշտության դեպքում միջամտում էր, 8-ը նշել են, որ ադմինիստրացիան չի միջամտում, մնացածը նշել են, որ գրեթե միջամտություն չի լինում, քանի որ ադմինիստրացիան հիմնականում տեղյակ չի լինում վեճերին, եթե իմանում են՝ միջամտում են:*

«Նորեկների հետ կարող էին կոնֆլիկտներ լինել, դա էլ այն պատճառով, որ նորեկներին մենք ընդունել ենք ընտանիքի անդամի պես, իսկ ինքը չի ցանկացել մեզ նման ապրել: Ստիպված ենք եղել ուժի դիմել: Ադմինիստրացիան եկավ ու էդ մարդուն տարավ մեր խցից, հետո ինքը նամակ գրեց ու ներողություն խնդրեց, բայց արդեն ուշ էր: Քանի որ նրան տարան մի այնպիսի խուց, ասես հանգստյան տնից բերդ ընկած լիներ: Փոշմանեց, բայց արդեն

ուշ էր...» «Այն դեպքում, երբ հարաբերություններն խցակիցների միջև շատ էին լարվում, նրանց առանձնացնում էին: Բայց դա հազվադեպ էր լինում, քանի որ եթե դաստիարակյալը փոխում էր խուցը, նա համարվում էր դավաճան, և նրան այլևս այդ քայլի համար չէին հարգում»: «Եղել է դեպք, որ զոնում կալանավորները երկու մասին էին բաժանվել, կամ՝ եթե բունտ է լինում, նման դեպքերում ադմինիստրացիան խառնվում է, կարմիր բերետավորներ են մտնում: Նման դեպքի ականատես եղել եմ, պատճառը «զոնը նայելու» պրոբլեմներն են եղել, հիմնականում «պերվի կրուգ» տղերքն են իրար հետ վիճել, սովորական [շարքային] կալանավորը ինքն իրա համար ապրում է: Սովորական կալանավորը ստիպված չէ ինչ-որ մեկի կողմնակից դառնալ, նա կարող է իր համար մի կողմ քաշվել, ու նրան ոչ ոք չի ասի՝ խառնվի»: «Ադմինիստրացիան շատ քիչ ազդեցություն ունի միջանձնային հարաբերություններում: Երբ խոսքը գնում է կենցաղային հարցերին, ադմինիստրացիան կարող է միջամտել, բայց մնացած անձնական հարցերը լուծում է «զոն նայողը»: «Իրար էինք ուտում, բայց նրանք չէին միջամտում»: «Միայն երբեմն հանդիմանում էին ծեծկռտուքի ժամանակ, ինչից ես հատկապես շատ էի վախենում, որովհետև նույն խցում ապրել մարդասպանների հետ շատ դժվար է»: «Նրանք մեզանով համարյա թե չէին էլ հետաքրքրվում»: «Դե, եթե գործը հասնում էր իրենց, միջամտում էին: Բայց ադմինիստրացիան գողերին հենց նրա համար է պահում, որ միջանձնային հարաբերություններին ինքը չխառնվի, այլ ավտորիտետները, պալաժենեցը (քրեական հեղինակությունները, զոն նայողը) իրենք տեղում հարթեն ամեն ինչ: Ընդհանրապես բերդի ներքին կարգուկանոն որոշողը, պահողը պալաժենեցն ա, էդ կավբոյները զուտ գլխաքանակ հաշվող են»: «Ադմինիստրացիան շատ քիչ ազդեցություն ունի միջանձնային հարաբերություններում, օրինակ՝ կենցաղային հարցերի դեպքում երբեմն միջամտում էր»: «Ադմինիստրացիայի կողմից ընդհանրապես միջամտություն չկա միջանձնային հարաբերությունների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ միջանձնային հարաբերություններն ավարտվում են ծեծկռտուքով»: «Եթե տեսնում էին՝ միջամտում էին: Բայց, դե, հիմնականում չէին տեսնում: Ընենց չի, որ մլիցեն գա, դու կռիվդ շարունակես իրանց ներկայությամբ: Եթե խաբարբզիկություն չէին անում, չէին բողոքում, տենց էլ չէին իմանում, որ միջամտեին»:

## 12. Ադմինիստրացիայի կողմից պահանջ լինու՞մ էր ֆինանսական միջոցներ կորզելու, թե՞ ոչ:

*5 մարդ հարցին չի պատասխանել, 9-ը ժխտել են նման փաստի գոյությունը, 9-ն ասել են, որ նման դեպքեր լինում են: Մնացածը նշել են, որ թեպետ ուղղակի ֆինանսական միջոցների կորզում չի լինում, բայց շատ մեծ տեղ է զբաղեցնում կաշառքը:*

«Այո, լինում են, բայց եթե հնարավորություն չեն ունենում, չեն տալիս, հետևանքները տարբեր ա լինում»: «Ֆինանսական միջոցների կորզումը այսպես էլ է կատարվում. ցանկացած ծառայության դիմաց գումար էիր տալիս (նամակ փոխանցել, դռնակը բացել, խցում հեռուստացույց պահել...)»: «Ցանկացած բան ձեռք բերել հնարավոր էր կաշառելու դեպքում: Ադմինիստրացիայի աշխատողները գիտեին յուրաքանչյուր դաստիարակյալի ֆինանսական վիճակի մասին»: «Կաշառելու դեպքում փոխանցում էին խցից խուց ցանկացած բան, բացի խաբարներից»: «Եթե դրսից ինչ-որ բան էր պետք լինում, փող էինք տալիս, որ թույլ տային ստանալ»: «Հարազատների կողմից ուղարկված ուտելիքն ու գումարը շատ դեպքերում տալիս էինք ադմինիստրացիայի աշխատակիցներին, որպեսզի մեզ էլ լավ նայեն»: «Ընդհանուր վերաբերմունք էինք ցուցաբերում»: «Մեկ-մեկ

փող էինք հավաքում ու տալիս»: «Լինում էր: Կարող ա իրանք ղրյամոյ չդաhաանջեին, բայց սիտուացիան ընենց լիներ, որ դու ինքդ առաջարկեիր ու դրանով հարցդ լուծեիր»: «Կոնկրետ ադմինիստրացիայի՝ չէ: Էլի չերեզ «զոն նայող» էր կազմակերպվում էդ ամեն ինչը: Ասենք՝ փողը հավաքվում էր «զոն նայողի» մոտ, նա իրա փայը վերցնում էր, մնացածն ուղարկում, ասենք, բանտի ղեկին, իրա վերևներին... Ցեխ-ում «զոն նայողի» համար օրական 3 անգամ խորովածով հաց էին բերում, բա էդ ի՞նչ փողերով էր»: «Նման բան չի կարող լինել, ֆանի որ նման հարցերը «զոն նայողն» է կարգավորում»: Հարցին, թե կարելի՞ է ասել, որ անգամ ադմինիստրացիան է ենթարկվում «զոն նայողներին», պատասխանել է, որ նրանք իրենց ներքին «կուխնյան» ունեն, մենք [սովորական կալանավորներ] չենք իմանում այդ ամենի մասին:

## 13. Հնարավո՞ր էր գումարով արտոնություն ստանալ:

*Հարցվածներից 2-ը հարցին չեն պատասխանել, 2-ը պատասխանել են՝ չգիտեն, միայն 3-ն են բացասական պատասխանել, մնացածները տվել են դրական պատասխան:*

«Այո՛: Ավել տեսակցության, խցում հեռուստացույց, սրճաք, սառնարան պահելու համար»: «Այո՛, գումարով այնտեղ ամեն ինչ էլ հնարավոր էր»: «Այո՛, հնարավոր էր, օրինակ՝ լոգանքի պարագայում, դրսից սնունդ բերելու հարցում, սակայն կրկին նայած, թե ում համար էր հնարավոր»: «Այո՛, գումարով ամեն բան էլ հնարավոր էր: Կոն էինք աշխատեցնում՝ թելով վերևի հարկից ներքև էինք փոխանցում տարբեր իրեր, օրինակ՝ ծխախոտ: Կոնի փոխարեն 1000 դրամ տալիս էինք կլյուչնիկին, ինքն էր դրանք փոխանցում: Եթե լրացուցիչ ինչ-որ բան էինք ունենում, տալիս էինք ցմահ դատապարտյալներին»: «Այո՛, արտոնություններից օգտվելու համար պիտի փող տաս, այդտեղ էլ առևտրային հարաբերություններ են. օրինակ, եթե ուզում ես մոտդ հեռախոս ունենաս, պիտի փող տաս, որ իրանք «չնկատեն», որ մոտդ հեռախոս կա, կամ եթե ուզում ես լավ կամերում մնաս, էլի փող ա, ես ամսական 50 հազար դրամ եմ տվել, որ լավ պայմաններում մնամ»: «Այո՛, գումարով հնարավոր էր ամեն բան, հսկիչները մեր «ոսքերն» էին»:

## 14. Ֆինանսական մասնակցություն ունեցե՞լ եք օբշչյակում:

*Հարցվածներից 6-ը բացասական են պատասխանել, 3-ը չեն պատասխանել, իսկ մնացածները տվել են դրական պատասխան:*

«Գողական կամեռը պետք ա ամսական մի որոշակի X գումար ուղարկի պալաժենեցին, որ նա էլ կարգավորի բերդի ընդհանուր հարցերը: Ես խուց նայողն էի ու խաղ չէի առաջարկում, բայց առաջարկեցի ամեն մեկս մի որոշակի գումար դնենք, որ փակվենք էդ ամսականը»: «Անպայման ունենում ես, եթե չունենաս՝ չես հարգվում: Նույնիսկ քեզ եկած գումարը պիտի տաս կամեռ նայողին, նա ա տնօրինում բոլորի փողերը՝ տալիս ա հսկիչին, շմոնչուն, որ մեզ լավ նայեն»: «Աշխատել եմ օբշչյակից հեռու մնալ (որը շատ դժվար է եղել), ամեն ինչ անում էի, որ գումար չուզեն, որովհետև տնից ուղարկված գումարը հազիվ բավականացնում էր ադմինիստրացիայի աշխատակիցներին»: «Եթե գումար ունես, ապա ինքդ ես վճարում, քեզ ոչ ոք չի ստիպում, դա կամավոր սկզբունքով է: Օրինակ՝ մարդ կա, որ լուրջ հիվանդ է, իսկ դեղեր էլ չկան, ու դրսից պետք է բերել՝ չե՞ս ցանկանա օգնել: Նման դեպքերում դեղերը գնում են ընդհանուր գումարից: Օրինակ՝ ես աշխատել եմ որպես ..., մարդիկ կան, որ գաղութում աշխատել են և գումար են ստացել, և այդ գումարից էլ օգնել են: Ազատազրկվածները իրենց ստացած պերեդաչիներից մաս են

առանձնացնում օբշչյակի համար, և այդ հավաքվածից բաժանվում է նրանց, ով կարիք ունի: Ասենք, օրինակ, եթե ծխախոտ չի լինում, ապա հավաքված ծխախոտից դու էլ կարող ես ծխել: Ազատության մեջ որ ծխախոտ չունենաս, ոչ ոք քեզ չի տա, իսկ բանտում քեզ առանց ծխախոտի չեն թողնի, ոչ մի խտրականություն չկա, անգամ ծխախոտով ապահովում են սեռական փոքրամասնության ներկայացուցիչներին, եթե նրանք ծխող են: Տրվում է նաև սուրճ, թեյ»: «Այո՛: Կային խաղեր, որ խաղում էինք օբշչյակի համար, ու խաղից ստացվող ողջ գումարը տալիս էինք օբշչյակին: Եթե անհատական խաղ էր, գումարն ինձ էի պահում՝ իմ հայեցողությամբ կարող էի մի մասը տալ օբշչյակին կամ չտալ»: «Եթե դու քեզ բանտում լավ ես զգում, պետք է վճարել օբշչյակին: Առանց դրա անհնար է, ու մուծումն ըստ ցանկության էր կատարվում»: «Ո՛չ: Ես ոչ մեկին ոչինչ տալու չունեի... Նարկոշներից, խաղացողներից, ծխողներից են հավաքում օբշչյակի փողը: Ես դրանցից ոչ մեկի մեջ չեմ եղել: Հետո ոչ մեկն այնտեղ ինձնից ավել չուներ էդ բերդի համար արած:

## 15. Ի՞նչ է լինում այն անձանց հետ, ովքեր օբշչյակին գումար չեն մուծում:

*Հարցվածներից 11-ը պատասխանել են, որ ոչինչ չէր լինում, 6-ը չեն պատասխանել, մնացածները նշել են ինչ-որ հետևանքներ:*

«Այն մարդիկ, ովքեր գումար չէին ունենում, նրան զրկում էին խոսքի իրավունքից, բայց նման մարդիկ չկային, իսկ եթե կային, ապա նրանք հատուկ խուց ունեին»: «Պարտադիր չէր ամսական վճարելը, բայց եթե չվճարի, հեղինակությունը կընկնի»: «Այն մարդիկ, ովքեր գումար էին ունենում և չէին մուծում օբշչյակին, ծեծում էին և սեռական ոտնձգություններ թույլ տալիս»: «Ասում էին, որ իրենք էլ ուրիշ ձևով օգտակար լինեն»: «Դա ստիպողաբար չի եղել, ցանկացողներն են միայն մասնակցել... Կարծում եմ՝ դա իրենց համար է արվում. մասնակցես էլ՝ քեզ համար է, չմասնակցես էլ՝ քեզ համար է»: «Շատ հազվադեպ է լինում, երբ տվյալ մարդը չի վճարում, գտնի տակից էլ լինի՝ գտնում են, հաճախ հարազատներն են բերում: Մի տեղից էլ ա գտնում ու թավան բերում են»: «Ճնշում ու սպառնում էին»: «Ոչ մի բան: Ուղղակի հետո եթե ինքը օգնության կարիք ունենար, չէին օգնի»: «Հիմնականում տալիս էին, չտվող չկար, վախենում էին»: «Օբշչյակին գումար չմուծելու դեպքում հարցերը լուրջ կլինեին»: Այն հարցին, թե ի՞նչ է նշանակում՝ լուրջ կլինեին, զրուցակիցը մտահոգ նայել է ու, խոր հոգոց հանելով, պատասխանել. «Ախր, որ ասեմ, իմ ասածները քար կծակեն, բայց չեմ կարող, ամաչում եմ: Բացի օբշչյակի գումարը, նաև այլ բաներ էլ էին ուղարկում, մեկը մյուսի հետ կապ ուներ: Գումարը պտտվում էր այլ բաներում»:

## 16. Լինո՞ւմ էին արդյոք պարտադրված աշխատանքի դեպքեր (ադմինիստրացիայի կամ այլ բանտարկյալների պարտադրմամբ):

*Հարցվածներից 11-ը պատասխանել են ոչ, 6-ը չեն պատասխանել, մնացածը տվել են դրական պատասխան:*

«Խցում սահմանված էր հերթապահություն, բայց խցեր կային, որ միայն մեկ հոգին էր միշտ մաքրում: Նույնիսկ ես, երբ գալիս էր իմ հերթը, գտնում էի մեկ այլ թույլի և ստիպում մաքրել իմ փոխարեն»: «Պարտադրված աշխատանքի դեպքեր չեն լինում, քանի որ աշխատակիցներն ամեն ինչն էլ անում են, ոչ մեկին աշխատացնելու կարիք չկա ... Ով ինչի արժանի է, էդպես էլ ապրում է»: «Լինում են, ինձ հետ նման դեպք չի եղել, բայց կան մարդիկ, ում ստիպել են որոշակի մաքրման աշխատանքներ

կատարել»: «Իրենց լավ տղու տեղ էին դնում ու պարտադրում խեղճերին իրենց փոխարեն մաքրությամբ զբաղվել: Հիմնականում բանտակից ընկերների կողմից էր ճնշումը»: «Պարտավորվածություն չկար, բայց բռնաբարության հոդվածով նստածները գիտեին, որ զուգարան մաքրելն իրենց գործն է»: «Կային մարդիկ, որ փորձում էին ավելի խեղճերին ու թույլերին ստիպել, որ իրենց փոխարեն աշխատեն, իսկ ադմինիստրացիայի կողմից պարտադրված աշխատանքի դեպքեր լինում էին միայն ծանր հանցանք կատարած, մասնավորապես, բռնաբարության հոդվածով մարդկանց նկատմամբ»:

## 17. Ստորադասական աշխատակազմում ովքե՞ր էին հայտնվում (խոհանոց, սանհանգույց, մաքրման աշխատանքներ):

*Հարցվածներից 5-ը չեն պատասխանել, մնացածները տվել են տարբեր պատասխաններ:*

«Խոհանոցն ուներ մշտական աշխատողներ՝ ընտրված ադմինիստրացիայի կողմից, իսկ սանհանգույցը մաքրում էին սևագործները, որոնք առանձին բանտախցում էին»: «Կալանավորներ, ովքեր կամերաներում չեն ուզում մնալ, նրանք էին կատարում այդ աշխատանքները, օրինակ, Եռովայի վկա»: «Ճաշարանում աշխատողների նկատմամբ սովորական են վերաբերվում, ավելի շատ հարգում են աշխատող մարդուն, որովհետև նա իր համար գումար է աշխատում, ինքը գործ չի տալիս, մարդ չի ծախում: Ամեն մարդ չի ցանկանա ընդունվել այնտեղ. իրեն թունդ գողականի տեղ դնողը չի գնա՝ սեղան հավաքի, քանի որ եթե դիմեցիր աբլուգ [ստորադասկող] աշխատելու, էլ չես կարող գողական շրջապատի մեջ լինել: Այնտեղ աշխատանքի մտնողն իր համար մի կողմ քաշված ապրում է՝ նեղություն չտալով ընտանիքին. ապրելու խնդիր է»: «Կային մարդիկ, որ ստիպված էին անում, կային, որ իրենց ցանկությամբ էին անում ու վարձատրվում էին 30 հազար դրամ: Գաղութի տարածքը մաքրում էին արվամոլները, իրանց ստիպում էին»: «Բանտում կային «աբլուգներ», ովքեր ազատ ելք ու մուտք ունեին, և մաքրման աշխատանքներն էին անում, և խոհանոցի: Ամեն մարդ չի ուզում դառնալ «աբլուգ»: Դրանք հիմնականում այն մարդիկ էին, ովքեր վախենում էին կալանավորներից»: «Հիմնականում սեռական և կրոնական փոքրամասնությունները, բայց, օրինակ, մենք երբեք թույլ չէինք տա, որ գալուբոյները մեր համար հաց սարքեին»: «Խոհանոցում բռնավորներից էին կցված, իսկ զուգարան մաքրողները՝ փչացրածներն էին»: «Նրանք, ովքեր տեղում իրանց ճիշտ չեն պահել, դիշովի բաներ են անում կամ էլ վատ հոդվածով են նստել, որ ներելի չի»:

## 18. Կայի՞ն արդյոք արտոնյալներ (ի՞նչ):

*Հարցվածներից 7-ը պատասխանել են ոչ, 8-ը չեն պատասխանել, մնացածները տվել են դրական պատասխան:*

«Այո՛, կային, ով գումար ուներ, նա օգտվում էր տարբեր տեսակի արտոնություններից՝ լոգանք, զբոսանք, տեսակցություն և այլն»: «Այո՛, ով փող և հեղինակություն ուներ, արտոնյալ էր»: «Կային, կամեռ նայողները, հարուստների կամեռներում նստածները, պալաժենեցը (զոն նայողը)»: «Եթե դու «զոն նայող» ես, ուրեմն դու արտոնյալ ես, ու քո շրջապատը նույնպես արտոնյալ է դառնում»: «Կային՝ «զոն նայողը», փողավորները աղավարի ապրում էին, առանձին լյուքս խցեր՝ տելեվիզորներով...»: «Արտոնյալներ կային, ու տրվում էր միայն գողական ու բանտը նայող դասապարտյալներին, գումարի ու դրսում ծանոթ ունենալու միջոցով: Եթե մեզ խելոք պահեինք, նույնիսկ գողական տղաներն էլ էին մեզ լավ նայում ու չէին թող-

նում, որ մեզ ներքաշեին կռվի մեջ»: «Հեղինակություններին, հարուստներին, պաշտոնյաներին, նաև ստուկաչներին արտոնություններ էին տալիս: Ստուկաչները գաղտնի կապ ունեն ադմինիստրացիայի հետ: Ինչ կատարվում է խցերում, հայտնում են հսկիչներին՝ դրա դիմաց ստանալով մեկ տուփ ծխախոտ: Նման մարդիկ տեղ չունեն գողական աշխարհում»: «Բերդի գողն ու իրա մոտիկները: Ցեբե-ում նույնիսկ շատ ժամանակ իրանք են որոշում, թե ով որ խցում պիտի մնա, ոչ թե բժիշկը»:

## 19. Ինչպե՞ս և ո՞ւմ էր տրվում արտոնությունը:

*Հարցվածներից 16-ը չեն պատասխանել, մնացածները տվել են տարբեր պատասխաններ:*

«Հիմնականում այն մարդկանց, ովքեր ծանր հոդված չունեին, ծանոթ ունեին, կամ իրենց համար ասված էր: Իրենց դրսից կարելի էր ամեն բան, օրինակ՝ արևածաղիկ, և քանի որ իրենց վրա վստահ էին, հիմնականում իրենց սնունդը չէին ստուգում»: «Օրենքով գողերն էին նշանակում արտոնյալներին, ով փող ուներ: Օրենքով գողերն էին կարգ ու կանոն սահմանում և կարող էին օգտվել ամեն ինչից, նրանք էին ամենաարտոնյալները»: «Հարուստներին հիմնականում, փողով ու դրսի զանգերով»: «Դրսի գողական աշխարհից էլ էին որոշում, ով է բանտում «զոն նայող» դառնում»:

## 20. Ի՞նչ խնդիրներ կարող էին առաջանալ:

*Հարցվածներից 10-ը հարցին չեն պատասխանել, մնացածները տվել են տարբեր պատասխաններ:*

«Խնդիրները հիմնականում առաջացել են անիմաստ տեղը մարդուն դատելու ժամանակ, գործած հանցանքին ոչ համապատասխան պատիժ սահմանելու ժամանակ և նմանատիպ հարցերում: Իսկ բանտախցի հիմնական խնդիրը տեղի, տարածքի խնդիրն է եղել, մարդիկ շատ են եղել, տարածքը՝ քիչ»: «Եթե հիվանդանաս, ու մոտդ մարդ չգա, ու քեզ չօգնեն, դա խնդիր է: Իսկ եթե հիվանդացել է ու դրսից օգնող չունի, ապա ցեբե-ում ինչ հնարավորություն կա, ինչ դեղեր որ ունեն՝ դրանով կօգնեն: Բանտում շուրջօրյա աշխատող բժիշկ կա, և ցանկացած մեկը կարող է դիմել նրան: Սեռական փոքրամասնություններն էլ են նույն կերպ բժշկական օգնություն ստանում: Ցեբեում էլ կա առանձնացված տեղ սեռական փոքրամասնությունների համար»: «Հիմնականում խնդիրներ առաջացնում էին անբարոյական և ծանր հոդվածներով դատված մարդիկ, ովքեր անընդհատ կռիվներ էին սարքում, անպատիվ խոսքեր էին ասում և սենյակը պահում էին լարվածության մեջ, ինչից ամեն մարդիկ շատ էին վախենում և անընդհատ լարված էին»: «Խնդիրներ կարող են առաջանալ ցանկացած հարցից: Օրինակ՝ լինում են դեպքեր, երբ դրսից ինչ-որ մեկը՝ վրեժխնդրությունից դրդված, գումար է տալիս պետին, ու նա, մի թեթև առիթ գտնելով, ծեծում է տվյալ մարդուն: Այդ ժամանակ խցերում անկարգություններ են սկսվում՝ արդարություն պահանջելու համար: Ափսեներ են կոտրատում, հայհոյում ադմինիստրացիային: Կամ՝ ադմինիստրացիան ինչ-որ մեկին պատժելու համար, մինչ մենք զբոսանքի ենք դուրս գալիս, գալիս ու տակնուվրա են անում խցերը»: «Ցանկացած հարց, որը լուծում չի ստանում, վերածվում է խնդրի: Օրինակ, երբ բանտարկյալը, դիմելով հսկիչին, ուզում է տեղեկություն ստանալ ընտանիքից, բայց նրանք ուշացնում են, այդ ժամանակ վիրավորանքներ են լինում, գոռոցներ, խռովություններ»: «Հիմնականում վիճաբանություններ խաղերի հետևանքով, որ, ասենք, վզին դնում են, որ պիտի էքսան փող տա, հաքաթա են տալիս... Յանը քաշած մարդը խնդիր չի ունենում»:

## 21. Եթե խնդիր էր լինում, ո՞ւմ էին դիմում:

*Հարցվածներից 9-ը հարցին չեն պատասխանել, մնացածները տվել են տարբեր պատասխաններ:*

«Դիմում էինք «զոն նայողին»: Եթե ադմինիստրացիային դիմեինք, լավ աչքով չէին նայի»: «Խնդիրներ կային՝ դիմում ես հարկի իրավաբանին, կան խնդիրներ՝ դիմում ես կամեռ նայողին, եթե չի կարողանում՝ դիմում ես «պալաժենեցին», եթե նա էլ չի կարողանում՝ դրսով ա լուծվում»: «Խնդիր լինելու դեպքում հիմնականում լռել ենք, բարձրաձայնելու դեպքում խցի նայողների հետ գործ կունենայինք»: «Զոն նայողին»: Բանի պետին չես դիմում, վաբշե տը պետը «զոն նայողի» հետ ներքին դագավոր՝ պայմանավորվածություն ունի, որ էդ հարցերը «զոն նայողը» լուծի, որ ինքը ընենց անի, որ սաղ տոչնի ըլնի, որ կռիվ-բան չլինի, որ շեստոյ օտդելը չգա, իրանց վրա խոսակցություններ չլինեն... Էդ սաղ «զոն նայողը» նալադիտ ա անում»:

## 22. Խնդիրներն ինչպե՞ս էին լուծվում:

*Հարցվածներից 14-ը հարցին չեն պատասխանել, մյուսները տվել են տարբեր պատասխաններ:*

«Հիմնականում խնդիրներ լուծողը «պալաժենեցն» է»: «Զոն նայողը» որոշում էր ճիշտն ու սխալը, հետո ով մեղավոր էր՝ ձեռքերը դնում էր մեջքին, և «զոն նայողը» բոլորի ներկայությամբ ապտակում էր երկու անգամ»: «Ծեծի, կռվի կամ գումար տալու միջոցով»: «Նայած խնդիր: Լինում է՝ գումարով էինք լուծում, լինում է՝ փոխհամաձայնության էինք գալիս»: «Զոն նայողին» ես դիմում, ամեն ինչ չերեզ իրան: Եթե կռվի մեջ ես ընկել, խփելու իրավունք չունես, բանի որ դիմացինդ մարդ ա, իսկ եթե քեզ են խփել, «զոն նայողին» ասում ես, ինքը լուծում ա հարցը, հիմնականում՝ արդար: Եվ մեղավորը կրում է համապատասխան պատիժը, ասենք, ներողություն խնդրելու տեսքով կամ այլ»:

## 23. Արդյոք եղե՞լ են ինքնավնասման և փախուստի դեպքեր:

*Հարցվածներից 5-ը հարցին չեն պատասխանել, 4-ը բացասական են պատասխանել, մնացածները տվել են դրական պատասխան:*

«Էդպիսի դեպքերը սովորական էին՝ բերան էին կարում, հաց չէին ուտում, երակ փրթում»: «Այո՛, մի անգամ փախուստի դեպք է եղել, բայց բռնել են ու ժամկետն ավելացրել, հետո իրան տեղափոխեցին բերդ: Երկու անգամ ինքնավնասման դեպք է եղել, երկուսն էլ կանխվել են: Առաջինը չգիտեմ ինչու է արել նման բան, իսկ երկրորդը բանտում է հայտնվել բռնաբարության համար, և իրեն թվում էր, որ դրա համար նրան վաս կվերաբերվեն բանտակիցները: Երկուսին էլ տարան բուժկետ և հետո ապաքինվելուց հետո էլի գտնվում էին գաղութում»: «Եղել են ինքնավնասման մի քանի դեպք՝ երակներն են կտրել, իրենց վնասել սուր, ծակող գործիքներով»: «Եղել է, որ մեկն իր երակներն էր կտրել իր նպատակին հասնելու համար, իհարկե, տարան-կարեցին, իսկ նպատակին նա չհասավ, ոչինչ չփոխվեց: Նման դեպքերին կալանավորները վաս չեն վերաբերվում, քանի որ տվյալ մարդը ճշտի համար է պայքարում, իսկ ճշտի համար պայքարելու ցանկացած ձև ընդունված է»: «Եղել է մի փախուստի դեպք Կոշում կամ Արթիկում [հաստատ չէր հիշում]. 3 հոգի փախան, երկուսին մի օր հետո բռնեցին, մյուսին՝ 3 տարի հետո: Նրանք հանդիպումների սենյակի պատը ծակեցին, փախան: Բռնվողներին չպատժեցին, ընդամենը 3 տարի ավելացվեց նրանց ազատազրկման ժամկետին: Եթե փախուստի ընթացքում մարդ չես խփել,

առա 3 տարի է ավելանում արդեն ունեցած ազատազրկման ժամկետին»: Այլ դատիժներ եղել են, թե ոչ, հնարավոր է՝ ոստիկանները ծեծեն, բայց այդ մասին ծարխային ազատազրկվածը չի իմանում, ծեծվողը նույնպես բան չի ասում այդ մասին: Չնարավոր չէ իմանալ՝ ծեծե՞լ են, թե՞ ոչ: Փախուստի դեպքերում ազատազրկվածին նույն գաղութ հետ չեն տանում, այլ փոխում են գաղութը: «Եղել են հացադուլի դեպքեր. հացադուլ կատարողները հիմնականում բողոքել են նրանից, որ իրենց պատժին չեն համապատասխանել: Եվ դա հիմնականում փոփոխություն չի բերել»: «Եղել է մեկ ինքնավնասման դեպք, երբ բանտարկյալը, մերժվելով դատարանի կողմից վաղաժամկետ ազատումից, իրեն դանակով կտրվածներ էր հասցրել, բարձրացել ծառը և չէր իջնում»: «Փախուստի մի քանի դեպք էր եղել, երկուսն էլ տնից հետ էին բերվել: Չետ դառնալուց հետո բանտարկյալները խիստ պատժել էին փախուստի դիմածներին, քանի որ իրենց պատճառով բանտի ռեժիմը խստացրել էին. ոչ ֆիլմի դիտում, ոչ հեռուստացույցի, բոլոր սենյակները փակ էին»: «Այո, 2 տղա, որից մեկը՝ 30 տարեկան, իրենց կախեցին»: «Ինքնավնասման՝ էնքա՞ն, լիքը. ինչքան նարկաման կար, երակ էին կտրում, փոր թափում, իրանց գժի տեղ դնում: Մեկը կար, հենց ցեքե-ից հանում էին, մի ծաբաթ հետո հետ էր գալիս՝ ամեն անգամ մի մասը կտրած: Ձեռքերից մեկի վրա մի մաս էր մնացել, մյուսի վրա՝ երկու: Փախուստի դեպք իմ նստած ժամանակ չեմ լսել… Ադմինիստրացիայի հետ պիտի կապված լինես, որ կարողանաս փախչես, թե չէ ուրիշ ձև հնարավոր չի»: «Իմ նստած ժամանակ 2 փախուստի դեպք ա եղել, մեկը առաջին պատը որ անցել էր, նկատել էին, զգուշացրել, որ հետ դառնա, չէր դարձել, ոտին կրակել էին, բռնել, բայց ավելի վատ եղավ իրա համար, սռոկն ավելացրին մի տարով, տարան Գորիսի բերդ, արդեն կամերային սիստեմով»:

# III. *Ազատ արձակվելուց հետո և վերաինտեգրում*

**1. Պատիժն ամբողջությա՞մբ եք կրել, թե՞ ազատվել եք վաղաժամկետ (համաներմամբ):**

*Հարցվածներից 11 պատիժը կրել են ամբողջությամբ, 12-ը ազատվել են վաղաժամկետ, մնացածը ազատվել են այլ պայմաններով (օրինակ՝ կիրառվել է համաներում, ներում, օրենքի փոփոխություն և այլն):*

**2. Եթե վաղաժամկետ (համաներմամբ) եք ազատվել, ապա գումար տվե՞լ եք և որքա՞ն:**

*Հարցվածներից 5-ը նշել են, որ վաղաժամկետ ազատման համար որոշակի գումար են վճարել, 7-ը չեն պատասխանել կամ նշել են, որ գումար չեն տվել:*

«Տվել եմ, առանց դրա հնարավոր չէր, ինչքան ուզում ա դու առանց նառուշենի, նորմալ նստած լինես, մեկ ա՝ պետի փող տաս, որ սռոկդ պակասացնեն, ազատվես... Շատ, մերոնք տունը ծախեցին, որ ազատեն ինձ»: «Դատավորները ամիսը մեկ անգամ գալիս էին, իսկ ղեկավարությունն էլ ցուցակ էր ներկայացնում՝ ըստ վարքի միջնորդությամբ ազատվելու համար, նախապես 100 դոլար պետք է վճարեիր, որ քո անունն այդ ցուցակում գրվեր, և հետո էլ՝ մի այդքան դատավորներին, որ «բավարարեին» միջնորդությունը: Սակայն քանի որ դատավորներն ու իր ծանոթները իրեն խոստացել էին, որ դատարանի դահլիճից իրեն ազատ են արձակելու, սակայն չէին կարողացել կատարել իրենց խոստումը, ապա հետագայում հենց իրենց միջնորդությամբ և առանց գումարի գործը գլուխ էր եկել»:

**3. Եթե վաղաժամկետ չեք ազատվել, ապա՝ ինչո՞ւ:**

*Հարցվածներից 1-ը նշել է, որ հնարավորություն չի եղել վաղաժամկետ ազատման համար, մնացած 10-ը հարցին չեն պատասխանել:*

**4. Ո՞րն էր ամենամեծ խնդիրն ազատվելուց հետո:**

*Հարցվածներից 12-ի համար ամենամեծ խնդիրը ազատվելուց հետո կապված է եղել աշխատանքի, 2-ի համար՝ բնակարանային խնդիրների հետ, 5-ը պատասխանել են, որ իրենց համար ամենամեծ խնդիրը եղել է հասարակության մեջ հարմարվելը, 1-ը նշել է առողջական և հոգեբանական խնդիրները, մնացածները հարցին չեն պատասխանել:*

## 5. Ինչպիսի՞ն է շրջապատի վերաբերմունքը (հարազատներ, հասարակություն):

*Գրեթե բոլոր հարցվածների (բացառությամբ 3-ի) նկատմամբ հարազատների կողմից վերաբերմունքը դրական է եղել, իսկ հասարակության կողմից՝ տարաբնույթ:*

«Հարազատներս լավ ընդունեցին, մարդիկ, որ անցնում էի, երկար նայում էին ու փսփսում, թե էս էն նստած-հելածն ա, տղես էլ չդիմացավ էդ խոսակցություններին ու երկիրը լքեց, թողնելով ինձ մենակ, բայց ես իրան չեմ մեղադրում, ճիշտ արեց»: «Մարդ կար՝ խուսափում էր, հանցագործի տեղ էին դնում: Բայց հասկացողը չէր խուսափում, հասկանում էին, որ մարդ կարա և սխալվի: Անգամ հավանածս աղջկան էին իմ դեմ տրամադրում, թե դու ո՞նց ես դրան ուզում, չե՞ս վախում էդ հանցագործի հետ ամուսնանաս, նոր ա դուրս եկել բանտից, ո՞նց ես ռիսկ անում»: «Նախկինի նման, դեռ ավելի լավ, որ իմանում են՝ լավ ես նստել, լավ են վերաբերվում»:

## 6. Ազատվելուց հետո լինո՞ւմ են ճնշումներ, հսկողություն կամ հետապնդում ոստիկանության կամ նախկին խցակիցների կողմից:

*Հարցվածներից 9-ը նշել են, որ եղել են հետապնդումներ ոստիկանության կողմից:*

«Խնդիրը մեծ էր: Այն տարածքում, որտեղ որ ես ապրում եմ, ինչ գողություն որ լիներ, առաջինն ինձ էին տանում ու ստիպում, որ մեղքը վերցնեմ ինձ վրա, բայց ես նույն սխալը երկրորդ անգամ չէի կրկնի: Ու գիտեք ամենասարսափելին ո՞րն էր, որ ոստիկանական բաժանմունքում դաժանորեն էին վերաբերվում մեզ հետ, որպեսզի մեղքը մեզ վրա վերցնենք: Էլեկտրաշոկ կիրառում, մահակով խփում և նույնիսկ մասերի արանքում մասիս կամ բութ գործիքներ դնելով սեղմում: Իսկ խցակիցներին ցանկություն էլ չեմ ունեցել տեսնելու ու չեմ տեսնվել»: «Նախ ես 3 տարի տուս էի ազատվել: Էդ ընթացքում անընդհատ թաղայինի մեջ հսկողության տակ եմ եղել, հետո միջի անընդհատ ներկայանայի բաժին: Բայց դրանից հետո էլ, ինչքան թաղում գողություն էր լինում, կանչում էին հարցաքննության: Են որ ասում են՝ «լավ ա մարդու աչքը դուրս գա, քան անունը», հիմա իմն ա: Էս վերջերս էլ կանչեցին: Ինչքան ուզում ա ինձ լավ պահեմ, գողի, բանտ նստածի պիտակն ինձնից ա կպել: Էս վերջերս էլի գողություն էր եղել, նորից կանչեցին...»

## 7. Աշխատո՞ւմ եք, թե՞ ոչ, եթե այո՝ ինչպե՞ս եք աշխատանք ձեռք բերել, խոչընդոտների հանդիպե՞լ եք, թե՞ ոչ:

*Հարցվածներից 6-ը չեն աշխատում, 7-ը նշել են, որ աշխատանք ձեռք բերելուց հանդիպել են խոչընդոտների, դատվածությունն ազդել է, և ստիպված փոխել են աշխատանքի բնույթը, 5-ը հարցին չեն պատասխանել, մնացածը պատասխանել են, որ աշխատում են և որևէ խնդիր չեն ունեցել:*

«Հիմնական աշխատանք չունեմ: Բայց պատահում է, որ բանվորություն եմ անում, մի երկու կոպեկ են տալիս: Մեքենա եմ առել ու տաքսու տակ եմ դրել, որ իմանում են՝ ի՛նչ անցյալ եմ ունեցել, էլ չեն նստում: Փոքր թաղում ապրելն էլ իր դժվարություններն ունի»: «Ամենածանրը աշխատանք չգտնելն էր: Ես բանկային համակարգից էի գնացել, որտեղ նորից վերադարձ չկար, և չնայած ինձ չէին արգելել իմ գործունեությամբ զբաղվել, պաշտոն չէին սահմանել, բայց, համենայն դեպս, այդ բնագավառ նորից մուտք գործելն արդեն անհնարին էր: Բնական էր՝ թույլտվություն չէր լինելու, ես էլ չփորձեցի անգամ դիմել»: «Հիմնական աշխատանք չունեմ՝ ռեմոնտ, շինարարություն, կաֆել եմ կպցնում: Սկզբից, որ կաֆելի գործ

սկսեցի անել, մարդիկ զարմացան, որ ես կարամ աշխատեմ ու կաֆել կոցնեմ, ասին՝ յա՞, էս դո՞ւ ես։ «ՎիվաՍելում» օխրաննիկի գործ կար, ուզում էի մտնեմ, աշխատեմ, չստացվեց, ասին՝ վրեդ դատվածություն կա, տենց գործերի համար խանգարում է։ Հիմա Ռուսաստան եմ գնում-գալիս»։

## 8. Ազատազրկումն ազդե՞ց ձեր առողջության վրա, եթե այո, ապա՝ ինչպե՞ս։

*Հարցվածներից 20-ը դատապարտվելուց հետո ունեցել են առողջական խնդիրներ։*

«Ազդեց, որ դուրս եկա, մի քանի ամիս հետո իմացա, որ թոքերումս ջուր է հավաքվում։ Հիվանդանոց պառկեցի։ Բացի էդ էլ ներվային համակարգիդ վրա է ազդում, ներվային ես դառնում, ագրեսիվ, ո՞նց կարա չազդի։ 18 տարեկան էի, որ ընկա ըստեղ, 22 տարեկան դուրս եկա, սաղ լավ տարիներս անցավ ըստեղ, դաժան դպրոց էր»։ «Առողջությանս վրա ակնհայտ ազդեցություն չի եղել, բայց ես ավելի դյուրագրգիռ եմ դարձել, հոգեբանությունս ա փոխվել ու ավելի շատ դեպի «գողական»։ Որքան ժամանակով էլ որ բանտում լինես, մեկ ա, հոգեբանորեն փոխվում ես։ Հետաքրքիրն էն ա, որ մեր խցում նման բաներ չի եղել, բայց բերդն իրանն ասում ա։ Շատ ժամանակ մանր-մունր երեխաներին բերդ ուղարկելով՝ մտածում են՝ դաստիարակում են... չկա տենց բան։ Հարյուր երեխա են բերել մեր խուց, գիշերներն արթուն եմ մնացել, զրուցել իրենց հետ, որ կարողանամ հետ պահել էդ ճանապարհից։ Բայց արի ու տես, որ բերդն ավելի հզոր էր, քան դու ինքդ։ Նույնիսկ թողել եմ ճնշեն, որ հասկանան, թե ուր են ընկել, բայց ոչինչ չի օգնում։ Բերդ ընկած երեխաներից շատերը, կարելի է ասել, անդարձ կորած են հասարակության համար։ Այդ հարցը պետք է ինչ-որ ձևով կարգավորվի։ Մի քանի կիլո ալյումինի համար բերում, բանտ են քցում։ Ու թեկուզ այդ մի քանի ամիսը արդեն հերիք է մարդու ներաշխարհը փոխելու համար։ Պետք է այլ պատժամիջոցներ կիրառել, բայց ոչ բանտը»։

## 9. Ի՞նչ ազդեցություն է ունեցել ազատազրկումը ձեր և ձեր ընտանիքի վրա։

*Հարցվածներից 12-ը նշել են, որ շատ վատ է անդրադարձել ընտանիքի վրա, իսկ 2-ը նշել են, որ իրենց ընտանիքը քայքայվել է։*

«Ամուսնուս միջոց չունենալու պատճառով էր, որ հայտնվել էի բանտում, և դա ավելի վատ էր անդրադառնում և՛ իմ, և՛ իմ ընտանիքիս վրա։ Երեխաներս ևս ամաչել են, որ իրենց պապան բանտ է նստել։ Սկզբնական շրջանում ոչ մեկը չէր շփվում իմ երեխաների հետ։ Հասարակության համար, եթե բանտ ես նստել, ուրեմն ամենավերջին հանցագործն ես»։ «Իմ ընտանիքի ու ինձ վրա թողել է մի սպի, որ ջնջելն անհնարին է։ Երկար ու ձիգ տարիներ են անցել, բայց մոռանալն անհնարին է։ Ես այս քայլով փչացրեցի իմ ու ընտանիքիս կյանքը։ Ես հիմա դժվարությամբ եմ կիսվում իմ անցյալով ու ամաչում եմ իմ ընտանիքի համար։ Ամաչում եմ, որ անչափահաս երեխաներս կարոտով են սպասել իրենց պապային ու չգիտակցելով, թե որտեղ է իրենց պապան, ու ես ստիպված հիմա եմ պատասխան տալիս նրանց հարցերին, որը շատ դժվար է»։ «Ծանր ազդեցություն է ունեցել և՛ հոգեպես, և՛ ֆինանսապես, բայց ավելի շատ՝ հոգեպես, քանի որ ես անմեղ տեղս եմ նստել մի տարի՝ ոչ մի բան չարած լինելով։ Հիմա էլ փորձում եմ մոռանամ ամեն բան»։ «Մայրս ծերացավ 5 տարվա ընթացքում, հայրս մահացավ, էլ չտեսա նրան։ 2/3-ով ինձ պիտի ազատեին, բայց, չգիտես խի, դատս ձգձգեցին 6 ամիս, նոր նոյեմբերին ազատեցին։ Հերս ջղայնացել էր, սիրտը չէր դիմացել, մահացավ... Մերոնք տունը ծախեցին, որ ազատեն ինձ, ու պարտքերիցս էլ պրծնեմ։ Վրես ազդում էր շատ,

որ իմ խաթեր մեր տունը կորցրեցինք: Բայց աշխատեցի, փող հավաքեցի, նորից հետ առանք»:

«Իմ ազատազրկումը շատ վատ անդրադարձավ նաև ընտանիքիս վրա: Ո՛չ ֆինանս էի թողել, ո՛չ էլ աշխատանք: Երեք անչափահաս երեխա ունեի, հաշմանդամություն ունեցող թոշակառու կին»:

## 10. Կպատմե՞ք բանտում պատահած մի դեպք, որն ավելի վառ է տպավորվել ձեր մեջ:

«Շատ ա եղել, բայց ամենաշատը տպավորվել ա «լալը», որի մասին միշտ ընկերներով հիշում էինք: Բանտակիցներից մեկը դուռը բացել էր ու կախված դատապարտյալ տեսել, դրանից հետո չէր կարողանում խոսել: Երկար ժամանակ՝ համարյա մի տարի, էր չէր խոսում... Մի օր նախօրոք ընկերներով պայմանավորվել էինք իրան բրթեինք... բարձրությունից ընկնելուց հետո նա սկսեց խոսել...»:

«Մի ռուս աղջիկ, ում դավադրաբար «փոսն են գցել» հայերը: Ես առաջին անգամ երբ տեսա այդ աղջկան, կարծես կենդանի դիակ լիներ անկողնու վրա պառկած, լուռ, անկենդան և տանջվում էր թմրանյութի պակասից: Ես սկսեցի խնամել նրան, կերակրել իմ բաժնից, օգնեցի նրան դուրս գալ այդ վիճակից, և նա սկսեց կազդուրվել, սկսեց աշխատել, մաքրել պատուհանները, դռները: Շնորհակալությունից բացի նա խնդրեց ինձ, որ թույլ տամ իրենից հիշատակ թողնել՝ ձեռքի վրա դաջվածք, ինչն էլ ես հիմա թաքցնում եմ ժամացույցի տակ: Ազատվելուց հետո ես զանգեցի նրա տված համարով, որտեղ նա վարձով էր ապրել, սակայն մարդ չի պատասխանում, բայց ես հուսով եմ, որ եթե նա ազատության մեջ լինի, անպայման կգտնի ինձ, և մի օր մենք կրկին կհանդիպենք արդեն ազատության մեջ»:

«Մեկը փող էր կրվել, բերել էին մեր կամեռ, մենք չգիտեինք, հետո երբ արդեն պարզ դարձավ, նա վախից իրան վենա կտրեց, թեքև կտրտել էր թևը, բայց արյուն կար, դրա համար մեր վրա լիքը թեմաներ էր լինելու ադմինիստրացիայի կողմից: Մտանք խուց, տեսանք ինչ ա արել, կամեռ նայողը ջղայնացավ, մոտը բրիտվա կար, հանեց ու էդ վնասվողի վենեն փրթեց խորը, ու, հիշում եմ, արյունը ո՞նց էր շփում»:

«Մի անգամ նոր եկած մի 18-19 տարեկան երեխա «զոն նայողին» չէր ճանաչել ու քֆուր էր տվել: Պատճառն էն էր, որ սա ուզեցել էր «զոն նայողի» բիտեդկի պուլպուլակից ջուր խմի, «զոն նայողն» ասել էր՝ մի՛ խմի, ու տեղից վիճաբանություն էր առաջացել: Սա չիմանալով, թե ում հետ ա խոսում, քֆել էր: Էնքան էին ծեծել էս էրեխին, որ հիվանդանոց ընկավ, գժվեց: Հոգեկանը խանգարվելու պատճառով ազատել էին: Բայց ազատվելով չէր փրկվել: Իրանց հարևանի տղեն մեզ հետ էր նստած, պատմեց, որ սա իրանց տանը սուխոյ սպիրտները շարում ա պարկետի վրա, ուզում ա վառի. դե, արդեն հոգեկանը խախտված էր, չի հասկացել՝ ինչ ա անում: Մերը մտնում ա տուն, արգելում, սա էլ դանակը վերցնում է ու մորը խփում, սպանում... Վերջնականապես գժվում է, ընկնում հոգեբուժարան»:

«Շատ բաներ են տպավորվել, շատերն էլ մոռացվել, բայց ամեն բան չես պատմի: Մեզ մոտ Կոշ տեղափոխել էին մի քանի անչափահասների, որոնց հետ պետք է զրույց տարվեր հասկանալու համար, թե իրենց մոտ կարգն ինչպես է, և բացատրելու մեր կարգերը, որովհետև իրենց մոտ «զոն նայող»-բան չկար, իսկ մեր մոտ ուրիշ էր: Երբ զրուցում էինք իրենց հետ, շատ վախեցած էին ու դա բացատրեցին հետևյալ կերպ. իրենց մոտ երբ որ ղեկավարները փորձել են իրենց պատժել, կարգի հրավիրել, ապա վախեցրել են այն փաստով, որ եթե իրենց խելոք չպահեն, ապա կտեղափոխեն Կոշ, որտեղ ամեն բան շատ սարսափելի է, և իրենք էլ չեն

դիմանա: Այդ խեղճ էրեխեքն էլ էդպես վախեցած եկել էին՝ սպասելով ամենասարսափելիին, բայց հետո հասկացան, որ որոշ բաներ այդքան էլ նկարագրածի պես չէ, որ այստեղի մարդիկ կարող են անել այնպիսի բաներ, որ մտքովդ էլ չի անցնի, բայց, դե, այստեղ անգամ դեռ մարդկային բոլոր արժեքները չի, որ կորցրել են, որպեսզի «հարձակվեն» անչափահաս երեխաների վրա...»

«Կար շատ մեծ խստականություն արվամոլների և նրանց հետ շփվողների նկատմամբ: Մի անգամ «զոն նայողը» բոլորի ներկայությամբ մի արվամոլի էր ծեծում երկաթե խողովակով, պատճառը տեղյակ չեմ: Ծեծելու ժամանակ ոչ ոք չէր խառնվում: Շատ դաժան ձևով ծեծեց: Բայց նա էլի հետո մնաց գաղութում»:

## Առանձին պատմություն -1

71-րդ խցում Միերը, որ խցի պալաժենեցն էր, շատ նորմալ մարդ էր, իսկ նա ինձ խաղի մեջ չէր ներգրավել: Խցում Վազգեն անունով մի մարդ կար, ով սկսեց պատմել բանտի կյանքի մասին: Սա մեր տունն է, ուղղակի մենք առանձին խցերում ենք մնում: Նրանք բանտն ընդունում են որպես գողական տուն, ու եթե դու մտնում ես այստեղ, պիտի ընդունես այստեղի կանոնները: Այդ ժամանակ, երբ ես ամեն ինչից անտեղյակ էի, ինձ շատ հեշտ էր խաբելը, ամեն ինչի մեջ ներքաշելը: Իմ բախտն այնքանով բերեց, որ ես հայտնվել էի նորմալ խցում: Այնպես չէր, որ մտա խուց, ու ինձ գրկաբաց ընդունեցին: Սկզբում նստեցինք, խոսեցինք, իմացան իմ՝ բանտում հայտնվելու պատճառը: Բանտում բանավոր խոսքը ոչ մի բան է: Երբ որ դու մտնում ես ՔԿՀ, նայում են սանկցիայի որոշմանը, որտեղ մոտ 2 էջով ներկայացված է, թե ինչ ցուցմունք ես տվել:

Երբ որ ես սկսել եմ հասկանալ, թե ուր եմ ընկել, ես իմ խցում դրել եմ իմ դրվածքը: Ռազմական ոստիկանությունում 3 ամիս մնալու արդյունքում հասկացել եմ, թե ոստիկանների հետ ինչպես խոսեմ, համոզեմ... Ռազմական ոստիկանության խցերում զուգարան չկա, ու ամեն անգամ պիտի հսկիչին կանչես, որ քեզ տանի զուգարան: Ծխել թույլատրվում էր միայն հացից հետո: Այնտեղ պահելու հիմնական նպատակը նա էր, որ մեր մարմնական վնասվածքները անցնեին: Այնտեղ մեզ հետ ամենաանմարդկային ձևով էին վարվում, ու լավագույն բանը, որ կարող էինք անել, գիրք կարդալն էր:

Երբ երկրորդ անգամ տեղափոխեցին Նուբարաշենի բանտ, ես դարձա մեր խցի ռաբածյակը, ով գողական չի, բայց աշխատող կյանքով ապրող, նորմալ, մաքուր, ճիշտ տղա ես, ու գողականները հարգում են իրեն:

Խցից խուց խոսում էինք կա՛մ ճաղերի արանքից, կա՛մ վալչոկով: Բայց էդ վալչոկն էլ բացելու համար էլի ընդհանուր վերաբերմունք ա պետք ցույց տալ հսկիչին: Եթե ՔԿՀ գող ա մտնում, ապա բոլոր խցերը իրար նամակ էին ուղարկում, որ գող կա բանտում, ու որոշակի կանոններ փոխվում էին:

**Թռածների խուց:** Թռածներն այն մարդիկ են, ովքեր չեն կարողանում խցում մնալ, գոռում են, որ գան իրան տանեն խցից. «Տարեք ինձ այստեղից, ինձ էստեղ ուտում են»: Նրանց տանում են իրենց նմանների խուց, որոնց ոչ մեկ չի հարգում: Նրանք ուր էլ գնան, պետք է քնեն հատակին կամ նստարաններին, ամենավատ գործերն անեն, որը կախված էր խցի «ասողի» խղճից: Թռածները գեյերից վատ մարդիկ են:

Գեյերին չեն կպնում, ձեռքով չեն բարևում, նրանց գողական խցում չեն պահում, եթե մնա էլ, պիտի քնի զուգարանում կամ մահճակալի տակ: Նրանց հետ չեն ապրում, եթե ապրես, խոսակցության թեմա, բազար ա քեզ համար: Որպես մարդկային հատկանիշներ ունեցող՝ գեյերն ավելի բարձր են գնահատվում, քան թռածները, քանի որ շատ հնարավոր է, որ

իրանք խաբար չտան, բերանից մինդ լինեն (բերան չտան):

Թռածները խաբար տվողներ են, ու իրանց տանելուց հետո կարող ա գան, մեզ ծեծեն կամ բոլոր հարցերը կարգավորողներին կանչեն ասեն՝ էս ի՞նչ ա կատարվում: Գեյերն էստեղի բառիգներն են, ովքեր կատարում են դեղորայքի առևտուր, որը գողականում ընդունված չի: Նորմալ հարգված մարդը չի կարա դեղ կամ նույնիսկ օղի վաճառի: Նա պիտի հյուրասիրի, ոչ թե վաճառի, հակառակ դեպքում կստանա բառիգ պիտակը: Եթե լավ տղեն փող չունի, ուրեմն կայֆը չպիտի ուտի՞: Ոնց կարա տենց բան լինի:

Գեյերի մեջ խելացի մարդիկ կան: Եղել է նաև, որ գողականները մեկին նակազաս են արել ու քցել գեյերի խուց: Եթե ոստիկանը վաստություն անի ու քցի գեյերի խուց, էլի հնարավոր ա՝ մի ձև ներվի, իսկ եթե գողականներն են քցում գեյերի խուց, էդ արդեն աններելի ա: Բայց եթե տանում քցում են գեյերի խուց, ու էդ տղան ինչ-որ կանոններ չի պահպանում (երակները կտրել, ինքնասպանության փորձ անել), որ իրեն տանեն էդ խցից, ուրեմն էլի չեն ների նրան: Այսինքն՝ դու քո ճշտի համար քո արյունով պաստուպիտ չարեցիր»:

Եթե հանկարծ խցում գաղտնի գեյ պահես, ամբողջ խուցդ կսարքեն գեյնոց (գեյերի խուց): Կարող՝ ա իրականում գեյ չի, բայց ընենց մի արարք ա արել, որ գողական օրենքով չի ընդունվում:

## Առանձին պատմություն - 2

Յուրաքանչյուր գաղութում կարցերներ կան, եթե խելոք չմնացիր՝ տանում են 3-4 օր կարցերում պահում: Խելոք չմնալ կարող է համարվել, օրինակ, ռեժիմի խախտումը: Ես մի անգամ գիշերը հեռուստացույց էի նայում, հսկիչն ինձ տարավ կարցեր: Նման դեպքերում հաջորդ օրը պետը պետք է տեսնի (օրերի քանակը [պատժի] պետն է որոշում), պետի հարցին պատասխանելով, որ հայրենասիրական երգեր էի լսում, նա հասկացավ ու պատիժ չնշանակեց: Բայց հսկիչին հնարավոր չէ բացատրել... Իսկ ռեժիմի ժամերը գրված են. 10:30-ին ասբոյ է, պետք է անպայման պառկես...

Եղել է դեպք, որ ազատազրկվածներից մեկի նկատմամբ բերդում եղած ժամանակ վարչակազմը բռնություն է կիրառել, ծեծել են նրան: Հարցվողի կարծիքով՝ նա լավ մարդ չէր, իրենից բաներ էր հորինել, հրապարակային էր դարձել, որ քսիֆը հասցնելը 5 հազար դրամ է: Քանի որ այն ժամանակ հեռախոսներ չկային, նամակ էին գրում, և պետք է հսկիչին փող տային, որ նա նամակը տուն հասցներ: Նա բանտային այդ ներքին կուխնյան հրապարակայնացրել էր: Դրա համար էլ ադմինիստրացիան կբռներ, հերը կանիծեր:

Հարցին, թե հրապարակայնացված տեղեկությունն իրականում այդպե՞ս էր, թե՞ ոչ, նա պատասխանեց, որ՝ այո, բա ո՞վ առանց փողի նամակդ կտանի, տնեցիներիդ կտա:

Կա հնարավորություն՝ նամակը գրել և փոստով ուղարկել, բայց այդ դեպքում ադմինիստրացիան նամակները կարդում է: Եթե ցանկանում ես, որ չկարդան, ուրեմն պետք է ներքին կարգով ուղարկես: Իսկ բանտի ներքին կուխնյան դուրս հանելու իրավունք չկա:

## Առանձին պատմություն - 3

Երբ ես խուց նայողն էի, խաղ չէի առաջարկում, բայց առաջարկում էի ամեն մեկս մի որոշակի գումար դնենք, որ փակվենք ամսականը:

Մոտ 3 ամիս հետո խուց բերեցին 2 հոգի, ովքեր դումարբազ էին ու անընդհատ ուզում էին ինձ կրել: Նրանք կարտ էին բերել, բայց ես շաշկի էի կարողանում լավ խաղալ: Բանտում այնպես ա, որ եթե ոչ մի բան չկարողանաս էլ խաղալ, կասեն՝ արի թքենք, տեսնենք՝ ո՞վ կկա-

րողանա երկար թքել, կամ քար քցենք... այսինքն՝ ցանկացած մի բան, որի արդյունքում ինչ-որ մեկը կարա մի բան ավելի լավ անել, քան մյուսը: Ես առաջարկեցի շաշկի խաղալ, իսկ եթե գողական տղա ես, իրավունք չունես հրաժարվել խաղից: 100 հազար դրամ կրեցի շաշկիով, հետո կարս խաղացինք, ոչ ոքի դարձանք: Էս տղաները այնքան էին կապաղել, որ գիշերը 200 հազար դրամ կրեցին խցի մի գյումրեցի տղայից, ով շատ էր նման իմ մանկության ընկերոջը, և ես շատ էի հարգում: Էլի խաղում եմ ու էլի այդքան կրում, ոչ-ոքի անում: Նրանք իմ դեմ ոչինչ չէին կարողանում անել: Խցում մեկին ծեծում են, իրանց տանում են դատաժախուց, որից հետո էլ նրանց տեղափոխում են իմ ընկերոջ խուց: Ինձ վստահություն անելու համար ընկերոջս հետ խաղում են ու 40 հազար դրամ կրում:

Դժվար կյանք է այստեղ, ուղղակի պետք է կամքի ուժ ունենաս, չկոտրվես ու մի քիչ ճարպիկ լինես: Եթե գիտես գողական կանոնները, կարող ես որոշակի ձևով ճնշել, ձեռ առնես: Օրինակ՝ ես միայն տետրիս եմ կարողանում խաղալ, բեր խաղամ: Ինքը ոչինչ չի կարողանա ասել: Էդ եմ կարողանում... էդ եմ խաղում:

Գողական կանոններից է նաև քնած մարդուն չարթնացնելը. դա համարվում է մլիցայություն: Չնայած որ այդ նույն կանոններ ընդունողները մարդու չեն թողնում քնի: Հենց ուզում ա աչք կպցնի, կանչում են՝ վե՛ր կաց, վե՛ր կաց, ախպե՛ր: Իսկ եթե դու գիտես այդ կանոնները, կարող ես պալաժենեցին մի քիփ ուղարկել, ասես՝ ինչ ա կատարվում, պալաժենեցն էլ ականջները քաշի:

Եթե էդ համակարգը ուզենա քեզ կրի, անպայման կկրի, բայց նա ուզում ա կրի նրան, ով փողատեր ա: Եթե սովորական ընտանիքից ես, ուրեմն դա քո խելքից է, կամ էլ ընկել ա կռիսների խուց, ովքեր բացի ախորժակից ամեն ինչ կորցնում են:

Ղումարի շատ քիչ մասն ա մնում քեզ. մի մասը՝ օբշչյակ, մի մասը՝ պալաժենեց:

## Առանձին պատմություն - 4

Իր ազատազրկման տարիներին բանտերում կրոնական փոքրամասնությունների պատկանող անձինք չեն եղել, իսկ սեռական փոքրամասնության ներկայացուցիչներ բոլոր տեղերում [բերդ, գաղութ] եղել են, որտեղ ես եղել եմ:

Կային մարդիկ, ովքեր սեռական փոքրամասնության ներկայացուցիչ դարձել են հենց բանտում, քանի որ երկար տարիներ հակառակ սեռի ներկայացուցչի չեն հանդիպել:

Հնարավո՞ր է արդյոք, որ ճնշումների արդյունքում դառնան այդպիսին, նա ասաց՝ ոչ, նման բան չի կարող լինել, դա լինում է փոխադարձ համաձայնությամբ:

Սեռական փոքրամասնության ներկայացուցիչ համարվում է զույգի միայն պասիվ կողմը: Նրանք իրավունք չունեն բոլորի հետ նույն տարածքում քնել, նրանց հատկացված վայրն առանձին է, նրանք «մաքուր» բանտախցում քնել չեն կարող [իրավունք չունեն]: Ի՞նչ է նշանակում մաքուր բանտախուց հարցին նա պատասխանեց, որ բանտախուցը կարող է մաքուր համարվել, բայց միայն այն պատճառով, որ այդտեղ քնում են սեռական փոքրամասնության ներկայացուցիչները, դրանով արդեն այդ բանտախուցը մաքուր չի համարվում: Նրանց սպասքն առանձին է, նրանք իրավունք չունեն օգտվել ընդհանուրի համար նախատեսված սպասքից: Դա չի վերաբերում զույգի ակտիվ կողմին:

Լինում են դեպքեր, որ ազատազրկվածները սիրահարվում են միմյանց և իրար հետ ապրում են: Հարցին, թե նման դեպքում արդյոք զույգը բնակության համար մեխանիկորեն տեղափոխվո՞ւմ է սեռական փոքրամասնության ներկայացուցիչների համար նախատեսվող տա-

ռածք, թե՞ ոչ, նա ասաց, որ միայն զույգի պասիվ կողմ հանդիսացող անձն է այդ հասվածում քնում: Դա նորից չի վերաբերում զույգի ակտիվ կողմին:

Թե ինչպես է բոլորի համար պարզ դառնում, որ մարդը սեռական փոքրամասնության ներկայացուցիչ է, նա ասաց, որ զրուցելու ընթացքում կիսվում է այլ ազատազրկվածների հետ, այդպես էլ խոսակցությունը տարածվում է: Եթե ինչ-որ մեկն իմացել է այդ փաստի մասին և տեղյակ չի պահել մյուսներին, հետագայում բացահայտվելուց հետո վատ է լինում նրա համար, նրան էլ չեն թողնի «լավ կռուգի» մեջ, դրա համար նա պետք է անպայման այդ մասին տեղյակ պահի մյուսներին:

Օրինակ՝ եթե նա իմացել է և ինձ չի ասել, ապա ես առանց իմանալու, կարող է, նույն բաժակից թեյ խմեմ. դա չի կարելի, դրանով նա ինձ էլ է պղծում, փչացնում: Փաստը բացահայտվելուց հետո այդ մարդը միանգամից տեղափոխվում է իրենց համար առանձնացված տեղը, ծեծել չկա: Հիմնականում իրենք են ասում այդ մասին, որովհետև եթե իրենք այդպիսին են, ապա հենց իրենք են փնտրում իրենց նմանին, ով իրենց դուր է գալիս, մոտենում են և առաջարկում:

Այնտեղ էլ են սիրահարվում. քանի որ կին չկա, տղան տղային էլ է սիրահարվում, հատկապես եթե ժամկետը մեծ է: Դրա համար ոչ ոք չի պատժվում, ծայրահեղ չի ընդունվում, այլ բնական է:

## Առանձին պատմություն - 5

Ազատություն... Թե ինչ է մեզ համար նշանակում այս բառը, որևէ մեկը չի զգա այն, ինչ մենք ենք զգացել՝ դատապարտյալներս: Ժիր ու կայտառ երիտասարդ էի... Երիտասարդ էի ու չէի հասկանում կատարածիս հետևանքները: Ես կարող էի ինձ օգնել, բայց չկարողացա ու հայտնվեցի այնտեղ, որտեղ դադարում են ապրել: Կյանքիս լավագույն տարիները անցան ճաղերից այն կողմ, կարոտով ու սպասումով լցված: Երկար ու ձիգ տարիներ են անցել, բայց չեմ ուզում հիշել անցյալը, այն շատ ծանր է: Բանտ նստելուց հետո շատ դասեր քաղեցի, կյանքը դարձավ ավելի քաղցր ու սկսեցի գնահատել իմ ապրած ամեն մի օրը:

Երանի՜ նորից ծնվեի, այդ սխալը երբեք չէի կրկնի...

Բանտում կան ազատազրկված մարդիկ, որոնք առանձնակի անմարդկային դաժանության են արժանի ու արժանանում են: Բանտում պատիժ էր կրում 70-ամյա մի ծերունի, որը բռնաբարել էր իր 12-ամյա թոռնուհուն: Այնպես, ինչպես նրան էին վերաբերվում, դեռ նրան քիչ էր: Նրան վերաբերվում էին ինչպես անասունի: Բանտում նրա նմաններին ձեռքով խփել չկար, խփում էին ոտքով, նվաստացնում: Ծերունին ուտում, քնում էր միայն սանհանգույցում: Գրեթե ողջ օրը անցկացնում էր այնտեղ: Նույն հոդվածով կային շատ դատապարտյալներ: Նրանց բոլորին նույն կերպ էին վերաբերվում: Նրանց նմաններին նաև սեռական շահագործման են ենթարկում: Նրա նմանները բանտում երկար կյանք չեն ունենում: Սպանում են, ու գիտե՞ք ինչպես. դատապարտյալները կռիվ են սարքում դիտավորյալ, խփում են ու, գլուխը կպցնելով երկաթե մահճակալին, սպանում էին՝ իբրև թե դժբախտ պատահար: Ապրում ես անորոշության մեջ: Աստված մի արասցե, եթե մեկ էլ հայտնվեմ նույն իրավիճակում. ավելի լավ է ինձ սպանեմ, քան հայտնվեմ ճաղերի հետևում: Էլ ուժ չեմ ունենա պայքարելու... Ես 62 տարեկան մարդ եմ, ու ինձ համար շատ դժվար է նորից հիշել ու վերապրել այդ ամենը: Ես իմ ցավերն ու վիշտը մեծ մասամբ փարատում եմ օղու մեջ»:

## Առանձին պատմություն - 6

Եղել եմ երկու բանտախցում (75, 54), 75-ը 12 հոգանոց բանտախուց էր: Նախկինում պատուհանին ամրացված էին հաստ ցանց ու ճաղավանդակ, իմ ժամանակ ցանցը հանեցին, ու լուսավորության հարցը լուծվեց: Չեմ հիշում` լույսը մե՞նք էինք անջատում, թե՞ չէ, բայց երբեք խնդիր չէր լինում: Բայց ճաղերի մեջ լույս կար, որ դրսից էին միացնում-անջատում:

Ամենահիմար բանն այն էր, որ զուգարանի պատը կիսատ էր շարված, իսկ զուգարանի օդանցքը` բետոնած: Այսպիսի մի սովորություն կար. եթե մեկը մտնում էր զուգարան, մնացածին ասում էր` մի՛ ծամեք, այսինքն` սեղանից մի օգտվեք: Ու մեկ այլ սովորություն էլ ունեինք, որ զուգարանի թուղթը փաթաթում էինք, ծխացնում` էդ տհաճ իրավիճակից դուրս գալու համար: Երբ բերդի պետը փոխվեց, մի նոր սկզբունքով հանդես եկավ. եթե կալանավորը կարողանում է իր հաշվին բարելավել իր կենսապայմանները, թող անի:

Մենք էլ հաստակը ներկեցինք, գրեթե ամբողջ բերդը զուգարանները պատեց մինչև վերջ, օդանցքները բացեցինք ու օդափոխիչ տեղադրեցինք:

54-րդ խուցը ավելի բարվոք վիճակում էր: Կալանավորներից մեկը (էլի պատահականորեն էր այնտեղ հայտնվել) կահույքի արտադրամաս ուներ, ու իր շնորհիվ նույնիսկ պահարաններ ունեցանք: Նույնիսկ եվրոպատուհան էինք տեղադրել:

Երբ որ բանտախցի չափորոշիչներ սահմանեցին, երկհարկանի մահճակալները հանեցին, խցակիցներից ոմանք սեփական անկողին չունեցան: Մահճակալները շրջանաձև շարված էին պատի տակ, իսկ մեջտեղում սեղանն էր` իր երկու նստարաններով: Եվ սեփական անկողին չունեցող կալանավորները քնում էին հենց այդ նստարանների վրա: Այսինքն` չափորոշիչները սահմանեցին, բայց կալանավորների քանակը մնաց նույնը: Ու ստիպված էին հանած մահճակալները նորից հետ բերել:

Մեր խցերն արևկող էին, խոնավություն այնքան էլ չեմ զգացել: Իմ ժամանակ պատժախուցը զրո հարկից տեղափոխվեց առաջին հարկ, որը բավականին դրական փոփոխություն էր: Երբ նոր էի գնացել բանտ, ամեն խուց մի ձեռք տաք հագուստ էր պահում, որ պատժախուց իջնելիս տանեն իրենց հետ: Բայց այդ խնդիրն էլ լուծվեց:

## Առանձին պատմություն-7

Մի անգամ մեր խուց բերեցին Կարեն անունով միջին տարիքի մի կալանավորի, ում առաջին ատյանի դատարանը տասը ամիս տված դատավճռությունից հետո դատապարտել էր, ուստի նրան պետք էր տեղափոխել այլ` դատապարտյալների խուց: Տասնիհնգ օրը լրանալուց հետո, երբ կարելի է խցի նորեկին դոմար առաջարկել (սա գողական **прогон**-ներից` հրահանգներից է), խցի հին կալանավորներից մեկը` Սերոբը, սկսեց Կարենին անընդհատ դոմար խաղալ առաջարկել: Վերջինս հրաժարվում էր` ասելով, որ հնարավորություն, այսինքն` փող չունի. նախորդ խցում խաղացել էր մի քանի ամիս, սակայն իսկապես այլևս հնարավորություն չուներ: Սերոբն իրենն էր պնդում. «Խաղացել ես, ինչո՞ւ հիմա չես խաղում: Ում հետ ասես չես խաղացել, ես լավ տղա եմ, ինձ հետ չե՞ս խաղում»: Այսպես մի քանի օր շարունակ` օրվա բոլոր ժամերին` ցերեկ լինի, երեկո, թե գիշեր: Զգացվում էր, որ Սերոբը վերջիվերջո հասնելու է իր նպատակին, և այդ դեպքում Կարենը կպարտվի ու թավանի տակից չի կարողանա դուրս գալ` դրանից բխող բոլոր բացասական հետևանքներով: Իսկ որ դա այդպես էր լինելու, պարզ էր, քանի որ Սերոբը ճարպիկ զառ խաղացող էր, այնքան ճարպիկ, որ խաղի ժամանակ բոլորից աննկատ կարողանում էր

զառերը փոխել: Եվ Կարենին էլ հենց առաջարկում էր զառ խաղալ:

Ես որոշեցի օգնել Կարենին և ազատել Սերոբի ճանկերից: Հերթական առաջարկի ժամանակ մոտեցա և ասացի Սերոբին. «Ի՞նչ ես ուզում մարդուց, տեսնում ես՝ խաղալու հնարավորություն չունի»: Սերոբն անմիջապես իմ կողմը շրջվեց՝ ասելով. «Ի՞նչ ա, **поступит** ես անո՞ւմ»: Իսկ դա գողական օրենքով նշանակում է, որ «այո» ասելու դեպքում դո՛ւ ես պարտավորվում առաջարկողի հետ դումար խաղալ: Լսելով իմ «այո»-ն՝ Սերոբը շատ ուրախացավ անակնկալ հաջողությունից, և այն է՝ պատրաստվում էր զառերը բերել, երբ ես անցա իմ մտահղացման իրագործմանը: Ասացի, որ զառ չեմ խաղում, այլ շաշկի եմ խաղում և խնդրեցի, որ տղերքը շաշկին բերեն: Ես լավ գիտեի, որ Սերոբը շաշկի վատ էր խաղում (իսկ ես սիրողական մակարդակով քիչ թե շատ կարողանում էի խաղալ) և չի ցանկանա ինձ հետ շաշկի խաղալ. սա էր իմ պլանը, քանի որ ամենևին ցանկություն չունեի Սերոբի նման խարդախի հետ դումար խաղալու: Այդպես էլ եղավ. Սերոբը չուզեց շաշկի խաղալ և պնդում էր զառի վրա: Իսկ ես հրաժարվեցի զառ խաղալուց և մերժեցի: Իսկ դա «գողականով» թույլատրելի է: Այսպիսով՝ ինձ հաջողվեց իրականացնել իմ պլանը:

Արդյունքում՝ գողական օրենքների իմացությունն օգնեց ինձ և՛ Կարենին ազատելու փորձանքից, և՛ ինձ՝ անվնաս դուրս գալու փորձությունից:

# ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՀՀ քրեակատարողական օրենսգրքով սահմանված են դատապարտյալների պահելու պայմանների, նրանց իրավունքների և ազատությունների մասին հիմնական դրույթները՝ հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վավերացրած մի շարք միջազգային պայմանագրեր և իրավական ակտեր: Այդուհանդերձ, պետության վերաբերմունքը ազատազրկվածների նկատմամբ չի փոխվել: Ազատազրկվածներն անտեսված են իշխանությունների կողմից, և այդ ոլորտի բարեփոխումները օրակարգում չեն: Այդ են վկայում ՔԿՀ-ների պայմանները, ազատազրկվածների նկատմամբ ոչ հումանիստական վերաբերմունքը, քրեակատարողական հիմնարկներում դեռևս խորհրդային ժամանակներից մնացած «քրեական» օրենքները և հիերարխիկ հարաբերությունները:

Միջազգային և տեղական կազմակերպությունների հնչեցրած ահազանգերին պաշտոնյաները տալիս են նման դեկլարացիվ հայտարարություններ. «Նոր քրեակատարողական հիմնարկ կկառուցվի, և վիճակը կփոխվի», «Մեզ ժառանգություն են մնացել Խորհրդային Միությունից մնացած շենքեր և պայմաններ», «Չունենք բավարար ֆինանսավորում» և այլն:

Սույն զեկույցում ներկայացված արդյունքներն ամբողջությամբ չեն արտացոլում իրականությունը, պատկերն իրականում ավելի բազմաշերտ է:

## 1. Պահելու պայմանները

Քրեակատարողական հիմնարկները հիմնականում ծանրաբեռնված են, երբեմն որոշակի թվով անձանց համար նախատեսված խցերում պահվում են կրկնակի և ավելի թվով անձինք, օրինակ՝ 8 անձի համար նախատեսված խցում կարող է պահվել մինչև 20 և ավելի անձինք: Լոգանքը որոշ դեպքերում ընդունում են ավելի ուշ, քան շաբաթը մեկ անգամ, ավելի հաճախակի լոգանք ընդունելու համար սովորաբար պետք է վճարել:

Ազատազրկվածները հնարավորության դեպքում սնունդը, սպիտակեղենը և հիգիենայի պարագաները ստանում են դրսից՝ հարազատների և բարեկամների կողմից: ՔԿՀ-ում տրամադրվող սննդից օգտվում են միայն այն անձինք, ովքեր դրսից ստանալու հնարավորություն չունեն:

Քրեակատարողական հիմնարկներում լուրջ խնդիր է աշխատանքի բացակայությունը, ազատազրկվածների հիմնական զբաղմունքը հեռուստացույցն է, զբոսանքը, ընթերցանությունը և տարբեր խաղերը, այդ թվում նաև՝ գումարով:

Բուժսպասարկման որակը ոչ բավարար մակարդակի վրա է: Ոչ միշտ են հիվանդները ստանում համապատասխան դեղորայք և բուժում: Հիմնականում լուրջ բուժմամբ զբաղվում են այն դեպքում, երբ հիվանդի վիճակը

վաստարանում է, կամ էլ համապատասխան վերաբերմունք են ցուցաբերում:

Հարազատների հետ ավելի հաճախ տեսակցությունները տրվում են գումարի կամ ծանոթ-բարեկամի միջոցով: Կապն արտաքին աշխարհի հետ հիմնականում տարվում է տաքսաֆոնների և բջջային հեռախոսների միջոցով, վերջինը թեև արգելված է, սակայն շատ դատապարտյալներ ունեն:

## 2. Միջանձնային հարաբերություններ

Քրեակատարողական հիմնարկներում կան մի քանի խավի մարդիկ, օրինակ՝ «քրեական» օրենքներով առաջնորդվող մարդիկ, «աբսլուգներ» (տնտեսական մասի աշխատողներ), «միասեռականներ» (անձի նման կարգավիճակը որոշ դեպքերում կապ չունի սեռական կողմնորոշման հետ, ՔԿՀ-ում այդ անձանց այլ անվամբ են կոչում, այդ կարգավիճակը կարող է կապված լինել կատարած արարքի հետ, որի պատճառով որպես պատիժ տվյալ անձը նվաստացվում է «քրեական» օրենքներով առաջնորդվող այլ դատապարտյալների կողմից): Միջանձնային հարաբերությունները կարգավորվում են «քրեական» օրենքներով: Ներքին կարգուկանոնը հսկում են «քրեական» հեղինակությունները: Ամեն խուց և ամեն հարկ ունի իր «նայողը», ով անհրաժեշտության դեպքում միջամտում և լուծում է առաջացած խնդիրները: Ազատազրկված անձանց միջև հաճախ է լարվածություն առաջանում: «Քրեական» օրենքով անընդունելի արարք կատարած անձանց, ում նաև անվանում են «արվամոլներ», ճնշում են և ստիպում, որ կատարեն ամենանվաստացուցիչ աշխատանքները:

Քրեակատարողական հիմնարկի աշխատակիցների հետ հարաբերությունները հիմնականում նորմալ են լինում, եթե դատապարտյալներն իրենց «խելոք» են պահում: Խցերում միշտ լինում են մարդիկ, ովքեր աշխատակիցների հետ կապ են պահում: Աշխատակիցներին պարբերաբար վճարում են գումար՝ տարբեր ծառայությունների, օրինակ՝ խուցը չխուզարկելու, բջջային հեռախոսից օգտվելու և այլ արտոնությունների համար: Երբեմն նաև կոնֆլիկտներ են ծագում դատապարտյալների և աշխատակիցների միջև, որոշ դեպքերում աշխատակիցները կարող են անհամաչափ ֆիզիկական ուժ կիրառել ազատազրկվածների նկատմամբ:

Ազատազրկվածների համար որպես պատիժ հիմնականում կիրառում են պատժախուցը, մահակը և ծեծը:

Քրեակատարողական հիմնարկներում պահվող թմրամոլները թմրամիջոցները ձեռք են բերում տարբեր եղանակներով, հիմնականում՝ աշխատակիցների միջոցով և տնից բերված սննդի հետ:

Քրեակատարողական հիմնարկներում մեծ տարածում ունեն գումարով խաղերը: Թեև կան այնպիսիք, ովքեր կամավոր են ներքաշվում խաղերի մեջ, սակայն մեծ մասամբ անձանց խաղերի մեջ են ներքաշում տարբեր կարգի հոգեբանական ճնշումներով: Պարտվելու դեպքում պարտքը մարվում է հարազատների կողմից: Պարտքը չմարելու դեպքում անձը ենթարկվում է ստորացումների և տարբեր տեսակի ճնշումների:

Աշխատակիցները ցուցաբերում են խտրական վերաբերմունք տարբեր դատապարտյալների նկատմամբ, որը կախված է վերջիններիս զբաղեցրած դիրքից, ֆինանսական դրությունից և ծանոթ-բարեկամ ունենալուց:

ՔԿՀ ընդունվելուց հետո անձը որոշ ժամանակ պահվում է կարանտինային խցում, որից հետո միայն նրան տեղաբաշխում են այլ խցում: Ըստ ներքին չգրված օրենքների՝ այլ խուց տեղափոխվելու ազատազրկվածի խնդրանքը վատ է ընկալվում քրեական աշխարհի կողմից, անձը պետք է համակերպվի խցում տիրող բարքերին, հակառակ դեպքում կարող է խնդիրներ ունենալ:

Խնդիրներ ունենալու դեպքում դատապարտյալները հիմնականում դիմում են «քրեական» հեղինակություններին, «խուց նայողին» կամ «զոն նայողին»: Քրեակատարողական հիմնարկներում չգրված օրենք է, որ վարչակազմի և հիմնարկի պայմանների դեմ բողոքները հարգի չեն: Վարչակազմի կամ խցակիցների դեմ բողոքները բացասաբար են ընկալվում ինչպես «քրեական» հեղինակությունների, այնպես էլ վարչակազմի կողմից: Նման անձանց կարող են մեկուսացնել և ենթարկել նվաստացումների հենց իրենք՝ դատապարտյալները: Այդ անձինք կարող են հայտնվել «թռածների» խցում, որտեղ պահվում են «քրեական» հիերարխիայի մեջ ցածր կարգավիճակ ունեցող անձինք:

Որպես կանոն՝ վարչակազմը միջանձնային հարաբերություններին չի միջամտում, այն քիչ ազդեցություն ունի միջանձնային հարաբերությունների վրա, նման հարցերը հիմնականում կարգավորում են «քրեական» հեղինակությունները: Վարչակազմը երբեմն միջամտում է, երբ բանը հասնում է ծեծկռտուքի:

Քրեակատարողական հիմնարկներում վարչակազմի կողմից լինում են ֆինանսական միջոցներ կորզելու պահանջներ, երբեմն՝ անուղղակի ձևով: Հնարավոր է ստեղծվի այնպիսի իրավիճակ, երբ անձը սեփական նախաձեռնությամբ առաջարկի ֆինանսական միջոցներ: Յուրաքանչյուր ծառայության համար վճարվում է որոշակի գումար:

Դատապարտյալների ճնշող մասը ֆինանսական ներդրում է ունենում ընդհանուր հաշվին, որը կոչվում է օբշչյակ, այն փոխանցվում է «զոն նայողներին», ովքեր էլ տնօրինում են այդ գումարը: Գումար չունենալու դեպքում, որպես կանոն, դատապարտյալները ինչ-որ կերպ ներդրում են ունենում ընդհանուրի համար, օրինակ՝ կարող են իրենց հանձնուքից ինչ-որ բաժին առանձնացնել կամ կատարել որոշակի աշխատանքներ: Նման մասնակցություն չունենալու դեպքում տվյալ անձին խցակիցները չեն հարգում: Անձը տարբեր եղանակներով պարտադրված մասնակցություն է ունենում: Եթե անձը ունի որոշակի ֆինանսական միջոցներ, ապա այնպիսի իրավիճակ է ստեղծվում, որ նա ստիպված է լինում այդ գումարը այս կամ այն կերպ փոխանցել «ընդհանուրին»:

Քրեակատարողական հիմնարկներում լինում են պարտադրված աշխատանքի դեպքեր, մասնավորապես, խցերի մաքրման աշխատանքները որոշ դեպքերում կատարում են ավելի անպաշտպան և ցածր կարգավիճակ ունեցող անձինք: Քրեակատարողական հիմնարկում ամենանվաստացուցիչ համարվող աշխատանքները, որոնց թվին է դասվում, օրինակ՝ կոյուղին մաքրելը, կատարում են «միասեռականները»: Այդպիսի անձինք այլ դատապարտյալներից առանձին են պահվում, կիսաբաց տիպի ՔԿՀ-ներում դրանց անվանում են «բրիգադներ», որոնք ապահովում են հիմնարկի մաքրությունը, այդ թվում՝ կոյուղու և աղբահանությունը: Անհրաժեշտության դեպքում ՔԿՀ-ի աշխատակիցները նույնպես նման անձանց կարգադրում են կատարել այլ աշխատանքներ:

Սպասարկման աշխատանքներում ընդգրկված անձանց անվանում են «աբսլուգներ», նման անձինք հիմնականում աշխատում են ճաշարանում և կատարում են մաքրման աշխատանքներ: Երբեմն նման անձինք ընդգրկվում են այդ աշխատանքներում՝ խցերում չմնալու համար: Այդպիսի աշխատանքներում ընդգրկված անձինք չեն հարգվում մյուսների կողմից, նրանք այլևս «քրեական» շրջապատի մեջ չեն կարող ընդգրկվել և միջամտություն ունենալ տարբեր հարցերում:

Քրեակատարողական հիմնարկներում կան արտոնյալ պայմաններում գտնվող դատապարտյալներ: Արտոնություններից օգտվում են քրեական հեղինակությունները, մասնավորապես, «զոն նայողը» և իր շրջապատը, ֆինանսական միջոցներ, ծանոթ-բարեկամ ունեցողները կամ աշխատակազմի հետ համագործակցող դատապարտյալները: Նման անձինք կարող են

գտնվել ավելի լավ խցերում, ավելի հաճախակի լոգանք ընդունել, զբոսանքի դուրս գալ և տեսակցություն ունենալ, ստանալ ցանկացած տեսակի սնունդ:

Քրեակատարողական հիմնարկներում տարածված են ինքնավնասման դեպքերը, որոնք դրսևորվում են աչքերը կարելով, երակները, մատները կտրելով, սուր գործիքներով վնասելով և նման այլ ձևերով: Լինում են նաև ինքնասպանության դեպքեր: Ազատազրկվածների ինքնավնասման դեպքերը հիմնականում կապված են նրանց քրեական գործերի և նրանց նկատմամբ դրսևորված վատ վերաբերմունքի հետ կամ որոշակի խնդիրներից խուսափելու նպատակ են հետապնդում:

## 3. Ազատ արձակվելուց հետո և վերաինտեգրում

Դատապարտյալների մի մասը վաղաժամկետ ազատվելու համար գումար է վճարում: Ազատ արձակվելուց հետո ազատազրկվածների հիմնական խնդիրները կապված են աշխատանքի, բնակարանի և հասարակությանը վերաինտեգրման հետ:

Ազատ արձակվելուց հետո դատապարտյալների հարազատները, որպես կանոն, նրանց լավ են ընդունում, սակայն հասարակության կողմից ոչ միշտ են հանդուրժողական վերաբերմունքի արժանանում, երբեմն ենթարկվում են խտրական վերաբերմունքի, նրանց նկատմամբ զգուշավորություն են ցուցաբերում:

Նախկին ազատազրկված անձինք գտնվում են ոստիկանության թիրախում, յուրաքանչյուր գողության կամ այլ հանցագործության դեպքում նրանք են կասկածի տակ հայտնվում: Երբեմն նրանց անհիմն տանում են ոստիկանություն և ստիպում հանձն առնել չբացահայտված հանցագործությունների կատարումը՝ հաճախ բռնությունների դիմելով:

Ազատության մեջ հայտնվելուց հետո նախկին դատապարտյալները աշխատանք փնտրելիս հայտնվում են որոշակի խնդիրների առջև, երբեմն գործատուները նրանց չեն վստահում, իսկ շատերն էլ ստիպված են լինում փոխել իրենց աշխատանքի բնույթը:

Մեծ մասամբ ազատազրկումն ազդում է մարդկանց առողջության վրա: Ազատազրկումից հետո շատերը ձեռք են բերում նոր հիվանդություններ, իսկ ով տառապել է որևէ հիվանդությամբ, ապա դրանք սրվում են:

Ազատազրկումը վատ է անդրադառնում անձանց ընտանիքների վրա, երբեմն նույնիսկ քայքայվում են ընտանիքներ, մարդիկ կորցնում են իրենց հարազատներին:

# ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հետևելով զեկույց գրելու ընդհանուր կանոններին՝ զեկույցի հեղինակները զերծ են մնում ընդհանուր բնույթի առաջարկություններ ներկայացնելուց։ Եթե ՀՀ իշխանությունները իրական ցանկություն ունենան քրեակատարողական հիմնարկների պահելու պայմանները և ազատազրկվածների նկատմամբ վերաբերմունքը փոխելու, ապա ձեռնամուխ կլինեն ուղղակի կատարել ՀՀ քրեակատարողական օրենսգրքի, «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» ՀՀ օրենքի պահանջները, միջազգային պայմանագրերով, այդ թվում՝ Եվրոպայի խորհրդի առջև ստանձնած պարտավորությունները, ինչպես նաև ԵԽ Խոշտանգումների կանխարգելման կոմիտեի առաջարկությունները։ Հեղինակների առաջնահերթ առաջարկությունն է իշխանությունների վերաբերմունքի կտրուկ փոփոխությունը ազատազրկվածների նկատմամբ։ Այդ համատեքստում ներկայացնում ենք մի քանի առաջարկություններ։

*ա. Արդարադատության նախարարությունը պետք է լիազորված և պատասխանատու լինի քրեակատարողական հիմնարկների համար։ Լիարժեք պատասխանատվության համար քրեակատարողական վարչության պետը պետք է նշանակվի ՀՀ արդարադատության նախարարի կողմից։*

*բ. Անկախ դատարանի որոշումից, քրեակատարողական հիմնարկներում ազատազրկված անձանց լրակազմը լրանալու դեպքում նոր ազատազրկված անձ չընդունել։*

*գ. Քրեակատարողական հիմնարկների աշխատակիցների նոր մտածողությունը և սերնդափոխությունը ապահովելու համար Երևանի պետական համալսարանում բացել հատուկ բաժին, որտեղ ուսուցման ուղղվածությունը կլինի քրեակատարողական հիմնարկներում մարդու իրավունքները։*

# *Կյանքը քրեակատարողական հիմնարկի ներսում*

## Վերջերս ՔԿՀ-ից ազատ արձակված քաղաքացու հուշերից

Շատերն են դիտարկել քրեակատարողական հիմնարկների ներսի կյանքը և գրել դրա մասին, շատերն էլ գրելու են, քանի դեռ դրանք գոյություն ունեն:

ՔԿՀ-ն մի ուրույն աշխարհ է, որ գոյություն ունի «սահմանի» կամ ճաղերի ներսում՝ աշխարհ աշխարհի մեջ՝ իր կառավարությամբ, քաղաքականությամբ, ֆինանսական շրջանառությամբ, կրկնակի օրենքներով ու դրանց ենթարկվող կամ չենթարկվող բնակիչներով, մեղավորներով ու անմեղներով, մի խոսքով, այս աշխարհը մի կողմից փակ համակարգ է՝ կտրված դրսի աշխարհից, մյուս կողմից՝ հենց նույն արտաքին աշխարհի առավել թանձր ու մռայլ գույներով գրոտեսկային կրկնօրինակը...

Այստեղ ներկայացվում է «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկի ներքին կյանքը, քանի որ այն Հայաստանի Հանրապետությունում ամենածանրաբեռնված և վատթարագույն պայմաններ ունեցող ՔԿՀ-ն է:

ՔԿՀ մուտք գործելիս կալանավորները ենթարկվում են բուժզննման, քանի որ հաճախ ոստիկանությունից նրանց արդեն վնասվածքներով են բերում: Սակայն իրականում կալանավորները, որպես կանոն, չեն բողոքում ոստիկանությունում իրենց հասցված վնասվածքներից: Գուցե հենց սա է պատճառը, որ ոստիկանն իրեն անպատժելի է համարում, և ոստիկանության բաժիններում տիրում է ամենաթողության մթնոլորտ: Երբեմն ոստիկանությունում իրականացված խոշտանգումների հետևանքով մարդիկ այնքան վատ վիճակում են հայտնվում, որ կալանավայր շտապօգնություն են կանչում: Զննումից հետո կալանավորը տեղափոխվում է արդեն «կարանտին» կոչվող բաժանմունք, որտեղ քրեակատարողական հիմնարկ բերվող կալանավորը մինչև խուց տեղափոխվելը կարող է մնալ մինչև յոթ օր: Պայմաններն այստեղ ավելի վատ են, միջավայրն ավելի կեղտոտ, քան խցերում, պատուհաններին ապակիներ չկան, ցուրտ եղանակին դրանք փակում են ծածկոցներով:

«Նուբարաշեն» ՔԿՀ-ի խուցը շենքի՝ շրջանի ձև ունենալու հետևանքով երկրաչափական սեղանի հատակագիծ ունի. դռան պատը մոտ 4 մետր է, հանդիպակացը՝ կես մետրով ավելի, կողքի պատերը՝ մոտ 6 մետր: Կա պետքարան՝ բաղկացած կոյուղուց և լվացարանից, սեղան, երկաթե պահարան ամանեղենի համար, սառնարան (շատ տեղերում՝ դեռ խորհրդային ժամանակաշրջանի), հեռուստացույց, երբեմն՝ DVD, գործարանային արտադրության էլեկտրական սալիկ: Դրանք ձեռք են բերվում կալանավորների միջոցով և միջոցներով: Ընդհանրապես ցանկացած հարմարություն, որն անհրաժեշտ է գոյության և կեցության նվազագույն պայմաններ կամ մաքրություն ապահովելու համար, ստեղծում են բացառապես կալանավորները:

Խցերը նախատեսված են եղել ութ կալանավորի համար: Ընդամենը 24-25 քառակուսի մետր մակերեսի վրա սկզբնապես տեղաբաշխված է եղել չորս երկհարկանի մահճակալ (**шконка**), որոնք ամբողջապես պատրաստված են երկաթից՝ վրան հնամաշ անկողին: Ժամանակի ընթացքում կալանավորների թվաքանակի շատացմամբ պայմանավորված՝ յուրաքանչյուր խցում ավելացվել են ևս երկուսը: Դրանք տեղադրված են պատերի մոտ: Սակայն, որպես կանոն, խցերում բնակվում են շատ ավելի մեծ թվով կալանավորներ. նրանց թիվը կարող է հասնել նույնիսկ 24-ի (շատ ավելի, քան խուցը կարող է տեղավորել): Բնական է, որ կալանավորներն այս դեպքում չունեն իրենց մշտական մահճակալը, քնում են հերթափոխով: Դժվար չէ հաշվարկել, թե քանի՞ քառակուսի մետր է բաժին ընկնում յուրաքանչյուր կալանավորի նման գերբեռնված տարածքում: Խուցն ունի մոտ 1 քմ մակերես ունեցող ճաղապատ պատուհան: Ցուրտ եղանակին դրանք փակում են ցելոֆանով կամ ապակիով, եթե գոյություն ունեն: Պատուհանից կարող են ավելի շատ

լույս և օդ ներթափանցել, սակայն, չգիտես ինչու, դրանք երկու կողմից փակված են մետաղե թիթեղներով: Եթե այս ամենին ավելացնենք ամռանը 35-40 աստիճան շոգը, գիշեր-ցերեկ անընդմեջ ծխող տղամարդկանց և նրանց հակահիգիենիկ վիճակը, հին կոյուղուց փչող գարշահոտությունը (զուգարանը խցի ներսում է), դժվար չէ պատկերացնել, թե խցում բնակվող մարդու շնչած օդի մեջ քանի՞ տոկոս թթվածին կա, և մարդը որքա՞ն կարող է դիմանալ այդպիսի պայմաններում: Իսկ եթե նկատի առնենք այն հանգամանքը, թե ի՛նչ տեմպերով և ձգձգվածությամբ են ընթանում դատավարությունները մեզանում, երբ քննիչներն ամենևին չեն շտապում ավարտել նախաքննությունը, իսկ դատարաններն այնքան ծանրաբեռնված են, որ նիստերը հաճախ նշանակվում են ամիսը մեկ անգամ, ապա «Նուբարաշեն» ՔԿՀ-ում մեղադրյալը կարող է մնալ մեկ, երկու, գուցեև ավելի տարիներ. ստացվում է, որ մարդու (թեկուզև կալանավորի) իրավունքները ոչ միայն ոտնահարված են, այլև նա մոռացված է որպես կատեգորիա: Նման պայմաններում ավելորդ է խոսել հիվանդ մարդկանց առողջության ու խնամքի մասին: «Իսկ մի՞թե կալանավորը մարդ է, և նրա կյանքը որևէ արժեք ունի...». պարզվում է՝ նա, ով հայտնվեց ճաղերից այն կողմ, այլևս դադարում է մարդ լինելուց...

## Հիգիենայի մասին

Ջուրը ՔԿՀ-ում տրվում է ժամով՝ առավոտյան 9-12-ը, երեկոյան 18.00-21.00-ը: Խմելու և պետքարանի համար խցերում ջուր են հավաքում շշերի և 10-50 լիտրանոց բաքերի մեջ (14-24 մարդու համար): Պետքարանը ծառայում է նաև որպես լոգասենյակ: Այստեղ համապատասխան բաքի մեջ էլեկտրական տաքացուցիչով (**кипитильник**) ջուր է տաքացվում լողանալու համար: Շատ քիչ խցերի պետքարանում պատից կախված են ինքնաշեն կամ գործարանային արտադրության բաք և ցնցուղ, դրանք էլ կազմակերպված են կալանավորների կողմից և միջոցներով: Իսկ պաշտոնապես բաղնում ցնցուղով երկու բաղնիք կա: Դրանք գործում են առավոտյան 9-ից մինչև 17.00 կամ 18.00: Երկշաբաթյա գրաֆիկով կալանավորներին տանում են բաղնիք՝ միանգամից 6-8 հոգի, 30-50 րոպեով: Սակայն բանտի գերծանրաբեռնվածության պատճառով բոլորը չէ, որ այդ ժամկետում հասցնում են լողանալ. յուրաքանչյուր խցին ըստ գրաֆիկի միայն մեկ անգամ է հերթ հասնում, այսինքն՝ միայն 6-8 հոգու է բախտ վիճակվում ցնցուղով լողանալու: Մյուսները լողանում են խցերում՝ «լցնովի»: Խցում տիրող հակահիգիենիկ պայմանների մասին դժվար չէ պատկերացնել:

Ինչպես ցանկացած ՔԿՀ-ում, այնպես էլ «Նուբարաշենում», կալանավորը ենթարկվում է երկու «ռեժիմի»՝ ադմինիստրացիայի և գողական օրենքներին: Յուրաքանչյուր հարկի պատասխանատուներն են՝ ռեժիմի պետը, օպերլիազորը, ադմինիստրացիայի կողմից հսկիչները և այսպես կոչված «զոն նայողը»՝ գողական աշխարհի կողմից, որը նույնպես կալանավոր է, բայց նշանակված է «օրենքով գողերի» կողմից:

Համապատասխանաբար կա ֆինանսական երկու շրջանառություն, որոնք հաճախ են մեկը մյուսին հատվում:

Գողերի ֆինանսական շրջանառության մի զգալի մասը գոյանում է մոլախաղից. կալանավայրում թույլատրելի խաղերն են՝ շախմատը, շաշկին, դոմինոն, արգելված են զառը, խաղաթղթերը, նարդին (նարդու տախտակը ներկվում է սեղանի վրա՝ սփռոցի տակ, որպես քարեր օգտագործվում են շաշկու քարերը, մնացածը հարմարեցվում է): Մոլախաղին մասնակցում են համարյա բոլոր կալանավորները. մի մասը խաղում է հոժարակամ, մյուսը՝ հոգեբանական ուժեղ ճնշման տակ. «Բա էս կյանքի համար չե՞ս ուզում օգտակար լինես...» (շահումի 30-50 տոկոսը ուղարկվում կամ տրվում է գողերին՝«տուպիկ»), իսկ բանտարկյալների մի փոքր մասն էլ չխաղալու համար պարբերաբար որոշակի գումար է վճարում: Խաղը, որպես կանոն, լինում է ապառիկ. նշանակվում է ժամկետ, որի վերջնաժամկետը նշանակված օրվա կեսգիշերն է: Խաղը ընդմիջումներով կարող է շարունակվել մինչև ժամկետի վերջը: «Զոն նայողի»

տարտականություններ մեջ են մտնում մոլախաղի գործիքները՝ խաղաթղթերը, զառերը և այլն համապատասխան խուց ուղարկելը, խաղի վերջնահաշվարկը գրանցելը և գումարները հավաքելը: Յուրաքանչյուր խաղացող կարող է տարվել մինչև 200.000 դրամ: Եթե տարվողը ցանկություն ունի շարունակելու խաղը, թույլտվության համար դարձյալ դիմում է «զոն նայողին»: Թույլտվությունը կախված է խաղացողի վճարունակությունից, որի մասին, անշուշտ, «զոն նայողը» համապատասխան տեղեկություն ունի: Եթե տարվողը նշանակված ժամկետում տարտքը չի փակում, ենթարկվում է պատժի. նրան կարող են **шконка**-ի տակ պահել, մինչև պարտքի կամ, ինչպես ասում են, թավանի մարումը, կարող է «զոն նայողի» հանձնարարությամբ խցում ծեծի ենթարկվել, ինչից թավանի տակ մնացածները երբեմն փորձում են խուսափել՝ հատուկ (N 68) խուց փախչելով և այլն: Նրանց անվանում են «թռածներ»:

Պարտված գումարները միմյանց և գողերին վերադարձնելու ժամանակ է, որ «ներսի» ու «դրսի» աշխարհները կապվում են միմյանց. այս գործընթացի մեջ ներգրավվում են նաև բանտարկյալների ազգականներն ու ընկերները, ովքեր ստիպված են լինում պարտված գումարները «ներս» ուղարկել աշխատողների միջոցով, անշուշտ, համապատասխան վարձատրության դիմաց (դա կազմում է գումարի 10 տոկոսը), համապատասխան հեռախոսահամարներ լիցքավորել, դրսում փոխանցել հաղթողի հարազատներին կամ «զոն նայողի» նշած մարդուն:

Փաստորեն, ներսի աշխարհն իր անմիջական ներգործությունն է ունենում արտաքին աշխարհի մի զգալի շերտի վրա: Համակարգն ակտիվորեն գործում է և ձեռնտու է թե՛ գողերին, թե՛ ադմինիստրացիային, ովքեր ոչ միայն քաջատեղյակ են այս ամենին, այլև իրենց շահագրգռությունն ունեն դրանում: Այս համակարգը եղել է, կա և, հավանաբար, կշարունակի գոյություն ունենալ ցանկացած կալանավայրում: Ֆինանսական այս մեծ շրջանառության մեջ տուժում են, փաստորեն, կալանավորների հարազատները, ովքեր իրենց և ՔԿՀ-ում գտնվող իրենց հարազատի ապրուստը հոգալուց զատ, մոլախաղի պարտք փակելու և իրենց հարազատին սպառնացող վտանգից փրկելու համար անվերջանալի գումարներ հայթայթելու և դրանք փոխանցելու անընդհատ շրջապտույտի մեջ են:

Ֆինանսական շրջանառության մի ճյուղն էլ կազմում է խցում ամենամսյա դրամահավաքը. ամեն ամիս խցում յուրաքանչյուր բանտարկյալից գանձվում է 10.000 դրամ. այն նախատեսվում է ռեժիմի պետի, օպերլիազորի (մոտ 20.000-ական դրամ յուրաքանչյուրին), հսկիչների՝ օրական 1000-2000 դրամ, և որոշ գումար՝ հնարավոր խուզարկությունները «մեղմ» անցկացնելու համար, որը կարող է արժենալ մոտ 5000 դրամ: Եթե գումար է ավելանում, ինչը հազվադեպ է լինում, փոքրիկ գնումներ են կատարվում բանտի կրպակից:

«Զոն նայողը» ամեն օր սուրճի, թեյի և ծխախոտի առաքում է կազմակերպում կարանտինի, իսկ ուրբաթ օրերին՝ սովորական խցեր. դա գողերի ամենաշաբաթյա «գրեյֆն» է: Իսկ ընդհանրապես «զոն նայողը» ունի նաև այլ՝ ոչ ֆինանսական պարտականություններ. այսպես, եթե խցում կալանավորների միջև որևէ կոնֆլիկտ կա, որը տեղում չի լուծվում, ապա դժգոհ կողմը դիմում է «զոն նայողին», ով հաշտարար դատավորի դեր է կատարում այս պարագայում: Նրա վճիռն անվերապահ է, թեև բավարարված չլինելու դեպքում կողմերը կարող են դիմել «օրենքով գողին», եթե այդպիսին կա կալանավայրում, եթե ոչ՝ բանտից դուրս գտնվող գողերին և այլն: Ինչ վերաբերում է խցում տիրող միջանձնային հարաբերություններին, ապա դրանք կանոնավորվում են յուրաքանչյուր խցում առկա «լավ տղաների» կողմից: Նրանք լավ գիտեն այսպես կոչված «գողական օրենսգիրքը» և գողական աշխարհին մատուցած որոշակի ծառայություններ ունեն: Խցում ծագող ամեն կարգի կոնֆլիկտները, որոնք, որքան էլ տարօրինակ է, շատ չեն լինում, «լավ տղաներն» են փորձում հարթել, մարել և կողմերին հաշտեցնել: Նրանց պետքն է, որ կոնֆլիկտը մարի և խցի պատերից

դուrս չգա ու չիասնի մինչև «բանտը նայողը» և առավել ևս՝ ադմինիսtrացիա:

«Նուբարաշենում» կալանավորված մոs 1500 մարդիկ խայտաբղետ խճանկար են կազմում, որը մեr hասարակության ստվերային մասն է ներկայացնում: Յուraքանչյուr խցում hավաքված է լինում բազմազան «hասարակություն», և տarբեr խավերի ներկայացուցիչների hամատեղ կեցությունը բանտախցի չափազանց փոքr, բայց գերծանrաբեռնված մակերեսի վրա ամենևին էլ դյուrին չէ: Կրթված մարդու hամար, ով ինչ-ինչ պատճառներով hայտնվել է այս միջավայrում, միակ զբաղմունքը, որը կարող է շեղել նրան անմակարդակ ու գռեհիկ խոսակցություններից, անճաշակ ու նյարդերը քայքայող ռաբիս երաժշտությունից, ընթերցանությունն է, իհարկե, եթե լուսավորությունը թույլ է տալիս. «Նուբարաշեն» ՔԿՀ-ի խցերում բավարար լուսավորություն չկա ոչ միայն երեկոյան, այլև ցերեկը: Իսկ դա վաs է անդրադառնում ոչ միայն տեսողության, այլև նյարդային hամակարգի վրա:

Ընդհանrապես, խցում չարժե անկեղծանալ, բարձրաձայնել դատական գործի, ունեցվածքի hետ առնչվող տեղեկությունները. ՔԿՀ-ում ամեն մի ինֆորմացիա «գին» ու «գնորդ» ունի:

Աղանդավորներ ՔԿՀ-ներում ևս hաճախ են hանդիպում: Նրանց նկատմամբ չկա ճնշում ո՛չ ադմինիսtrացիայի, ո՛չ գողական աշխարհի և ո՛չ էլ կալանավորների կողմից, սակայն hոգեորության փորձերը կասեցվում են:

Առաքելական եկեղեցու սպասավոր hոգևորականները կանոնավոր այցելում են ՔԿՀ-ներ. այդ նպատակով Սբ. Էջմիածինն առանձնացրել է կալանավայրերը սպասարկող hոգևորականներ: «Նուբարաշենում», սակայն, շփման hամար այդ առումով ամենաանբարենպաստ պայմաններն են, քանի որ hոգևորականներին չի թույլատրվում խցեր մտնել: Հոգևորականի hետ hանդիպել ցանկացողները կարող են դա անել hարկի ռեժիմի պետի սենյակում. բնականաբար, դրանք սովորաբար hավատացյալ մարդիկ են, ում hամար hոգևորականի hետ hանդիպումն ու զրույցը նշանակություն ունեն: Այդպիսի hանդիպումները «Նուբարաշենում», ի տարբերություն գաղութների, hազվադեպ են լինում: Մինչդեռ hավատացյալի hամար hոգևորականի hետ զրույցը կարող է նպաստավոր լինել hոգևոր hավասարակշռության, իր արարքների վերաիմաստավորման ու վերաարժևորման տեսանկյունից: Ի վերջո, քրեակատարողական hիմնարկը ոչ միայն պատժիչ, այլև ուղղիչ, դաստիարակիչ նպատակ պետք է ունենա:

Առանձին միավոր են արվամոլները. նրանք պահվում են առանձին խցերում: Ադմինիսtrացիան սովորական խցեր արվամոլ չի ուղարկում: Նրանք «անձեռնմխելիներն» են. շփումը մյուս կալանավորների hետ նվազագույնն է. չի կարելի նրանց ձեռքով բարևել, նրանցից ուտելիք կամ որևէ այլ բան վերցնել, բացի բջջային hեռախոսից և դրամից: Ադմինիսtrացիան ևս նրանցից մարդ չի վերցնում աշխատանքի: Սակայն արվամոլներն ունեն երկու շատ կարևոր «առաքելություն»՝ պետքարանների կոյուղու խցանումները բացել, որն արժի 1000 դրամ, և վաճառուական: Վերջին ծառայությանը գրեթե բոլոր դիմողները թավանի տակ մնացածներն են, որոնց ժամանակ է պետք՝ պարտքը փակելու hամար: Նման «բանկային ծառայությունն» իրականացվում է առանց գրավի, սակայն բավական ծանր պայմաններով՝ 2-3 շաբաթվա hամար պահանջվում է տրված գումարի մոտ 10 տոկոսը:

Ինչպես նշվեց, փողի շրջանառություն կա նաև ՔԿՀ աշխատակիցների կամ ադմինիսtrացիայի շրջանում, որը գոյանում է տարբեր՝ թույլատրելի կամ արգելված «ծառայություններից»: Այս ամենի hամար գոյություն ունի որոշակի գնացուցակ. օրինակ՝ hանձնուքի ընդունումը, բոլորին hայտնի չգրված օրենքի hամաձայն, արժի 1000-3000 դրամ. ըստ էության՝ վասն ոչնչի: Գրաֆիկից դուրս բանտախցի 2-3 կալանավորին 30 րոպեով լոգասենյակ տանելն արժի 1000 դրամ: Կարանտինից hետո կալանավորին իր ուզած խուցը տանելը hարազատներին 40.000 դրամ կարժենա: Բնականաբար, ամեն ծառայություն իր գինն ունի՝ կախ-

ված դրա բովանդակությունից. բոլոր խցերում կան բջջային հեռախոսներ, թմրամոլներն էլ առանց թմրամիջոցի չեն մնում...

## Բժշկական ծառայությունների մասին

ՔԿՀ-ում կա նաև հիվանդանոցային բաժանմունք: Այստեղ նույնտիպ խցեր են, սակայն քիչ են ծանրաբեռնված: Այդ բաժանմունք կալանավորները կարող են տեղափոխվել, եթե միայն բավական ծանր վիճակում են կամ բավականաչափ ֆինանսական միջոցներ ունեն (500 դոլարից սկսած): Սովորական հիվանդությունների ժամանակ կալանավորները, որպես կանոն, բժիշկ չեն կանչում, քանի որ 1500 կալանավորի պայմաններում բժիշկը պարզապես ֆիզիկապես չի հասցնում շրջել բոլոր կանչերով, և կալանավորներն իրենց ուժերով են փորձում վերացնել խնդիրը՝ ճնշում իջեցնել, սիրտ ու ստամոքս «բուժել» և այլն: Եթե բժիշկը գալիս է, միևնույն է, բուժման մասին խոսք չի կարող լինել. տրվում են առաջին օգնության ամենաընդհանուր դեղահաբեր, ասենք՝ պարացետամոլ «կյանքի բոլոր դեպքերի համար»՝ ախտանշանները վերացնելու համար. ուրիշ հնարավորություն բժիշկը չունի էլ: Յուրաքանչյուր կալանավորի համար անհրաժեշտ դեղերը բերվում են տնից:

## Սնունդը

Առավոտյան բաժանվում է ամբողջ օրվա համար հացը, որը մինչև երկու տարի առաջ շատ վատ որակի էր և դժվար էր ուտելի համարել, իսկ դրանից հետո համեմատաբար լավացել է: Կեսօրին բանտի խոհանոցից ուղարկվում է «բալանդը», որը բաժանում է **обслуг**-ի (աշխատող կալանավորները)՝ խոհանոցին կցված անձնակազմը՝ տվյալ հարկը սպասարկողը: «Բալանդը» սովորաբար խաշած մակարոնեղեն է, կաղամբ, ոլոռ, կարտոֆիլ, բազուկ՝ տարբեր համադրությամբ. ցանկալիից ավելի ջրալի է և, բնականաբար, նորմալ սննդի համ չունի, իսկ երեկոյան սովորաբար կորկոտ է: «Բալանդը» բավականաչափ մաքուր է. մաքրությունը հսկում են և՛ ադմինիստրացիայի աշխատողը, և՛ «բանտը նայողը»: Ցանկության դեպքում կալանավորը կարող է չափաբաժնից ավելի ստանալ, քանի որ կան այնպիսիք, ովքեր «բալանդ» չեն վերցնում: Բնական է, որ «բալանդով» մարդը չի կարող տարիներով յոլա գնալ: Բանն այն է, որ հանձնուքների միջոցով բանտ մեծ քանակությամբ սնունդ է մտնում: Հանձնուքի սնունդն ուտում են ամբողջ խցով: Հանձնուք ուղարկելու համար առավոտից արդեն մեծ հերթեր են գոյանում: Կարելի է ասել, որ կալանավորի հարազատներն էլ, ֆինանսական մեծ ծախսերից բացի (որպես կանոն՝ ուտելիքը բերվում է ոչ թե մեկ անձի, այլ ողջ խցի համար՝ մեծ չափաբաժիններով), նաև ֆիզիկական ու բարոյական զրկանքներ են կրում այս առումով: Չգիտեմ՝ արդյոք որևէ լրագրող փորձե՞լ է Նոր տարվա նախօրեին (դեկտեմբերի 26-27-ից հետո) նկարահանել «Նուբարաշեն» ՔԿՀ-ի՝ հանձնուքների ընդունման կետը և հարյուրավոր մարդկանցից կազմված այն հերթը, որը հավաքվում է արդեն վաղ առավոտից և մինչև երեկո չի պակասում: Լինում են մարդիկ, ովքեր ամբողջ օրը դրսում կանգնել-սառչելուց հետո էլ չեն կարողանում հանձնուքը մուտք անել ու ստիպված են հաջորդ օրը նորից գալ, թեև աշխատողներն այդ օրերին երկար են մնում: Սա է պետության իրական դեմքը. ոմանք խեղճուկրակ, ոմանք էլ քաղաքավարի սպասում են իրենց հերթին, ոմանք՝ փողատերերը, փորձում են անհերթ մտնել (որոշակի վարձատրության դիմաց, անշուշտ), ոմանց համար «վերևից» են միջնորդում և այլն: Լինում են նաև մարդկային վերաբերմունքի այնպիսի «զարմանալի» դրսևորումներ, երբ աշխատողները, ամիսների ու տարիների ընթացքում արդեն լավ ճանաչելով կալանավորի հարազատին և անգամ հարգելով նրան՝ որպես կիրթ ու ազնվաբարո մարդու, առանց որևէ փոխհատուցման օգնում են նրան՝ անհերթ ընդունելով նրա հանձնուքը կամ հերթը մի քիչ առաջ գցելով, հաճախ չեն էլ ստուգում նրա բերած հանձնուքը՝ վստահ, որ ազնիվ մարդ է և անօրի-

նական ու կարգազանց բան անելու ընդունակ չէ: Իսկապես ապշեցուցիչ բան է, բայց, փաստորեն, մեզանում դեռ կան այդպիսի երևույթներ, և անգամ բանտում ազնվությունն ու մաքրությունը կարող են նկատվել ու արժևորվել: Զարմանալի է, քանի որ կալանավորի հարազատը նույնպես, եթե նրա համար «չի ասվել» կամ գումար չի վերցվել, այս հիմնարկում նույն արժեքն ունի՝ «մարդ չի, եթե այստեղ է հայտնվել»:

Միանգամայն ողորմելի վիճակում է նաև կալանավորների և նրանց այցելած մարդկանց հանդիպումների համար նախատեսված «վայրը». այստեղ կալանավորների հարազատները հասնում են հողե կամ կիսատ-պռատ բետոնած հատակ ունեցող միջանցքներով, որոնք, ըստ էության, ոչ թե շինության ներսում են, այլ դրսում: Սենյակը նույնպես բետոնի հատակ ունի, կեղտոտ է, ցուրտ՝ ձմռանը և խեղդուկ՝ ամռանը: Հանդիպումը տեղի է ունենում այնքան վատորակ ու կեղտոտ պատուհանի հետևից, խոսակցությունն իրականացվում է հեռախոսներով, որոնց մեջ հաճախ այնպիսի աղմուկ է, որ մարդիկ իրար դժվար են տեսնում ու լսում: Ոմանց հաջողվում է խնդրել-համոզել աշխատողին՝ մի 3-4 րոպեով կամ ամբողջ ընթացքում (եթե վճարել է համապատասխան ծառայության համար) բացել միջանկյալ դուռը և անմիջականորեն շփվել: Սարսափելի է այս հանգամանքներում երեխաների տեսնելը: Թեև հատուկ դեպքերում և մարդկանց համար ներսում քիչ թե շատ տանելի մի սենյակ կա, որտեղ «ծանոթներին» կամ «վճարողներին» հնարավորություն է տրվում անմիջական հանդիպում ունենալու իրենց կալանավորի հետ: Բայց այդտեղ ընկնելն էլ դժվար է. հերթը մեծ է, ծանոթները՝ շատ: Բուն հանդիպումը «Նուբարաշենում» տևում է 30-60 րոպե, սակայն նախապատրաստման ամբողջ գործընթացը՝ դիմումը հանձնելով, դրսում ու ներսում փուլ առ փուլ սպասելով, կարող է 2-3 ժամ տևել:

Այսպիսով, կարելի է ընդհանրացնել, որ պետությունը ՔԿՀ-ներում կալանավորներին մարդավայել՝ մարդուն վայել, պահելու անհրաժեշտություն, կարծես չի տեսնում. գուցե դա՞ էլ է մտնում «պատժի» մեջ: Իսկ եթե մեղադրյալն անմեղ է (որպիսիք քիչ չեն), այդ դեպքում ինչպե՞ս պետք է փոխհատուցվեն այն տառապանքները, որ մարդը կրել է «Նուբարաշեն» ՔԿՀ-ում առկա անմարդկային պայմաններում՝ փորձելով գոյատևել և վերականգնել քայքայված առողջությունը (եթե դա հնարավոր է): Միգուցե սա է պատճառներից մեկը մեր դատական համակարգում չգրված, բայց համատարած գործող այն օրենքի, ըստ որի՝ եթե մարդը ձերբակալվել է, ուրեմն նրան ամեն գնով պետք է դատապարտել (հատկապես որ նախաքննությունն ու դատական գործընթացը, ինչպես արդեն նշվել է, տարիներ են տևելու). արդարացման որոշումներ գրեթե չեն կայացվում:

Շատ բան կարելի է պատմել քրեակատարողական այս հիմնարկի մասին, որը, թերևս մսաղացի հետ կարելի է համեմատել, սակայն բավարարվենք այսքանով՝ ամփոփելով. թե՛ ադմինիստրացիան, թե՛ «զոն նայողը» ունեն միևնույն նպատակը, խնդիրներն ու քաղաքականությունը՝ չխաթարվի ներսի աշխարհի վաղուց հիմնադրված, լավ մշակված ու կանոնավորված կարգը՝ չլինեն արտակարգ դեպքեր, չդադարի փողերի շրջանառությունը, ամեն ինչ ընթանա խաղաղ, իր հունով, ամեն ինչ մնա կլոր պատերի ներսում:

## *Հատված «Դիտորդում» հրապարակված Վարդգես Գասպարի նյութից*

Կալանավայրում ամեն ինչի տեր ու տնօրենը կալանավայրի պետն է:

Կալանավորների ընկալմամբ՝ պետն է կատարում ոստիկանության, քննիչների, դատարանի, նոտարի և այլոց գործառույթները: Թե ինչքանով է դա համապատասխանում իրականու-

թյանը, այլ հարց է, բայց կալանավորները գիտեն, որ դա այդպես է: Ու քանի որ, իրոք, կալանավայրը փակ համակարգ է, ուստի, գոնե մասամբ «խախտված» է իշխանության երեք թևերի տարանջատումը, որի հետևանքով կարող են ավելի շատ անարդարություններ լինել:

Կալանավայրում կա մի տեսակետ, որ «կալանավայրերում հարցերն ավելի հեշտ են լուծվում»: Միևնույն ժամանակ կալանավայրում մտավախություն կա «չէպէ»-ի տակ ընկնելու: Այս երկու հակադիր մտայնության համատեղ լուծման բանաձևը կախված է այն հանգամանքից, թե ինչ հարաբերությունների մեջ ես կալանավայրի պետի կամ նրա ենթակաների հետ, քանի որ, կոպիտ ասած՝ հենց նրանք են օրենսդիր, գործադիր և դատական մարմինները:

Օրինակ՝ պատմում են, որ կալանավայրում մարդասպանության համար կալանքի ժամկետը երկարացվել է ընդամենը երեք տարով, իսկ հսկիչին սուր, կտրող-ծակող գործիքով վնասելը (կալանավորի կողմից) պատժվել է ընդամենը մի քանի օրով՝ նրան պատժախուց փոխադրելով, կամ՝ կալանավորի մոտ թմրանյութ հայտնաբերելու դեպքում կալանքի ժամկետը երկարացվել է ընդամենը մեկ ամսով և այլն:

Ադմինիստրացիային կից աշխատում է «գողական կառույցը»՝ ադմինիստրատիվ բոլոր հատկանիշներով: Այն կատարում է գործող իշխանության առավել անօրինական հանցավոր գործառույթները: Ավելի կոնկրետ՝ «գողական» համակարգի ակտիվ գործունեությունն ու իշխանությունների անգործությունը առավել ակնհայտ են դարձնում կալանավայրում կատարվող հանցագործությունների մասին լռության պահպանումը, իրական փաստերի կոծկումը և այլն:

Քաղբանտարկյալների շրջանում ինտենսիվ քարոզվում է, որ «էստեղ պետք չի ոչինչ անել, դուրս կգաք՝ կպայքարեք»:

Ըստ ստացված որոշ լուրերի՝ մարտի 1-ի կալանավորների նկատմամբ այլ կալանավորների կողմից նախնական շրջանում եղել է կոշտ և բացասական վերաբերմունք: Նրանց ընկալել են որպես ազգի և հայրենիքի դավաճանների: Ըստ որոշ լուրերի՝ մարտի 1-ի որոշ կալանավորներ ժխտում կամ թաքցնում էին իրենց առնչությունը շարժման և ընդդիմության հետ, եթե պայմանները շատ անբարենպաստ էին լինում: Սակայն, որոշ ժամանակ անց իրավիճակի փոփոխության հետևանքով ղեկավարությունը հասկացրել էր, որ «նորեկներին» չնեղեն: Այդ «հասկացնելը» արտահայտվել է տարբեր ձևերով: Մասնավորապես՝ ամենօրյա «պրավերկայի» ժամանակ (բնականաբար, ոչ ամեն օր) ուղղակի դիմել են տվյալ անձին և հարցրել նրա որպիսությունը, դա արդեն բավարար է, որ կալանավորներն իմանան, որ տվյալ անձին իրավունք չունեն նեղելու: Մարտի 1-ի դեպքերից հետո կալանավայրերում զանգվածաբար հայտնվեցին քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներ, ովքեր կալանավայրերում առաջին շրջանում բախվեցին գողականության, ավելի ճիշտ՝ իշխանության որոշակի գործակալների հետ: Ակնհայտ տարբերություն կար նրանց և մյուս կալանավորների կենցաղի և ապրելակերպի միջև (այլ հետաքրքրությունների շրջանակ, թերթ կարդալու ցանկություն, «Ազատություն» ռադիոկայանի հեռարձակումներին հետևել և այլն):

Նախնական շրջանում կալանավայրերում ընդգծված հակակրանքով էին վերաբերվում այդ դեպքերի ժամանակ ձերբակալվածներին՝ ուղղակիորեն կրկնելով «Հայլուրի» մեղադրանքները: Նրանց էին դիմում՝ «Խեղճ սալդատին ընչի՞ էիք ծեծում», «Ընչի՞ էիք ավտոները վառում», «Խի՞ էիք Օպերան դարձել աղբանոց» և այլ հարցերով: Թեև, ժամանակի ընթացքում, աստիճանաբար նրանց հանդեպ վերաբերմունքը փոխվեց, սակայն քիչ թե շատ շարունակում էր պահպանվել այն դրվածքը, որ «էստեղ բերդ ա, պետք չի ոչինչ անել, դուրս կգաք, ինչ կուզեք՝ կանեք»: Թվում էր, թե սա իշխանությունների մշակած ծրագիրն էր՝ անհնազանդ քաղաքացիներին իրենց քաջածանոթ միջավայրում մշակելու համար:

Բերդ մտնող յուրաքանչյուր կալանավոր հաշվառվում է նաև գողական ադմինիստրացիայում: Դեռ կարանտինի խուց մտնելիս սկսվում է կալանավորների հավաքագրումը: Նորեկ, անծանոթ կալանավորին մոտակա խցերից ուղարկում են ծխախոտ, սուրճ, շաքարավազ, ուտելիք և այլն: Կարանտինը կարող է տևել մինչև մեկ շաբաթ: Այս շրջանում նորեկ կալանավորը դեռ հանձնուք չի ստանում և կարիք ունի նյութական և բարոյական աջակցության, ինչը ստանում է ոչ թե ադմինիստրացիայից, այլ՝ գողատեսարանից՝ դրանով իսկ կախման մեջ ընկնելով գողական համակարգից, ինչին չի կարող լավատեղյակ չլինել կալանավայրի ադմինիստրացիան:

Հենց այստեղից էլ շրջանառվում է նորեկ կալանավորի մասին ինֆորմացիան, իսկ հիմնական խուց փոխադրվելուց հետո արդեն նրա մասին ճշգրիտ ինֆորմացիան ուղղահայաց և հորիզոնական ուղղություններով գնում-հասնում է «գողատեսարան»:

Ադմինիստրացիային կից գործող «գողական» կառույցը նման է ֆաշիստական դրվածք ու գաղափարախոսություն ունեցող կուսակցության: Կալանավայր մուտք գործող յուրաքանչյուր ոք (կալանավոր) պարտադիր դառնում է այդ կուսակցության անդամ: Ոչ ոք չի հանդգնում հակակրանք արտահայտել: Ամեն մարդ աշխատում է հարմարվել, նույնիսկ դրանում դրական կողմեր տեսնել (օգնում են չունևորներին և այլն):

Կուսակցական անդամավճարը ամսական 5-10 հազար դրամ է (գումար չունեցողները հատուցում են աշխատանքով): Այն գանձվում է ամեն խցում առանձին: Յուրաքանչյուր խցի պատասխանատուն՝ «կամեր նայողը», հավաքված գումարի մոտ կեսը փոխանցում է բերդի գողատեսին, իսկ մյուս կեսը պահում՝ պետք եղած դեպքերում օգտագործելու համար: Դրվածքն այսպիսին է «Նուբարաշենի» 1-ին, 2-րդ, 3-րդ և 4-րդ հարկերի համար: 5-րդը՝ ցմահների հարկն ունի առանձին «կուսակցություն» իր գողատեսով:

Յուրաքանչյուր նորեկի առանձին բացատրվում է «կուսակցության» կանոնադրությունը և զգուշացվում է դրանից շեղվելու դեպքում պատժվելու մասին:

«Կանոնադրության» առաջնային խնդիրը գաղտնապահությունն է. այս օրենքը խախտողներին սպառնում են պատժել՝ իրենց և իրենց ընտանիքի անդամներին: Ամենադաժան խոշտանգման ենթարկվածը, սովորաբար, չի հանդգնում այդ մասին բարձրաձայնել:

Կանոնադրության 2-րդ կետը «կուսակցության» գերակայությունն է: Մասնավորապես՝ ոչ ոք իրավունք չունի ոչ մի հարցով դիմելու ադմինիստրացիային, եթե այն նախօրոք չի համաձայնեցրել «կուսակցության» հետ: Հաճախ «կուսակցության» խցերի պատասխանատուները գերազանցում են իրենց լիազորությունները՝ թույլ չտալով կալանավորին օգտվել ամենատարրական իրավունքներից, օրինակ՝ դիմել հանրային պաշտպան խնդրելու համար: Կանոնադրությունն իրականացվում է հոգեբանական ճնշման կիրառմամբ, կենցաղային ամենատարբեր առիթներն օգտագործելով: Կանոնադրությանը չենթարկվող անձանց սաստում և քննադատում են խմբակային մեթոդով:

Խցերում, կացարաններում (բարաքներ) ձևավորվում է հիերարխիա: Գաղութի գլուխն է գողատեսը, հաջորդ ամենաբարձր մակարդակում են խաղամոլները (ղումարբազները), որոնք տալիս են ամենամեծ եկամուտը հանցավոր իրավահարաբերությունները կարգավորելու գործում: Ամենաբարձր դիրքում գտնվող անձին ծառայում են բոլորը, ամենացածր դիրքում գտնվողին իշխում են բոլորը: Ստորին դիրքի կալանավորները կատարում են շեֆերի լվացքը, մաքրությունը և այլն: Նրանք կոչվում են «ճուտ»: Ամեն գողական թիմ ունենում է իր շեֆից մինչև ծառայողը: Կալանավայրի ծառայողները (աշխատող կալանավորները) համարվում են նվաստ, ոչ հարգված, իսկ գողերը չեն աշխատում, նրանք «մենթերի ոտի տակը չեն մաքրում»:

Ամենուրեք քիչ թե շատ հարգում են տարեց-

ներին: Իսկ հիերարխիայում տեղերը բաշխվում են ըստ կատարած հանցագործության, ըստ բերդի կամ գաղութի գողատեսի հետ ունեցած հարաբերությունների և մատուցած ծառայության:

Բերդերում թեև խցերը լինում են դասակարգված՝ դատվածներ, չդատվածներ, համենայն դեպս, սպանություն գործածը բարձր դիրքի թեկնածու է համարվում, իսկ մանր գողություն կատարածը՝ ցածր դիրքի: Բերդում կա ինտենսիվ կուսակցական պայքար. «վերադասները» «ստորադասներին» ըստ էության համոզում են, թե ինչքան հզոր է գողատեսությունը: «Օրենքով գողի» հետ ցանկացած շփում համարվում է մեծ պատիվ: Պաթոսով են պատմում գողատեսի մասին, թե ինչպես է իր կամքը թելադրում կալանավայրի պետին:

Գողատեսի (պետերի) արտոնություններից է նրանց ազատ տեղաշարժը բերդում. ասում են՝ նրանց խցի դուռը միշտ բաց է: Նրանք անարգել օգտվում են բջջային հեռախոսից: Նույնիսկ դատի գնալիս են այն տանում և բացահայտ օգտագործում:

Զարմանալի և նախանձելի ձևով է աշխատում «կուսակցականների» վերարտադրման պրոցեսը: Շատ կարճ ժամանակում (գուցե 1-2 ամսում) մարդիկ բարձրանում են «կուսակցության» սանդղակով՝ նորեկ հալածյալից վերածվելով դաժան հալածողի:

Գողատեսական բուրգի հիերարխիան, նրա կենսունակությունը և «օրենքները» հարկադրելու համար առանձնապես նվաստացվում են որոշ կալանավորներ: Այդ անձինք մեծամասնության կողմից ենթարկվում են ծաղրուծանակի՝ դիպչելով նրանց ամենաանձնականին: Հայտնի ասացված է. «Բերդը կոտրում է մարդկանց»:

Խցում կամ կացարանում մի մասը՝ գողական փոքրամասնությունը, մշտական սթրեսի մեջ է պահում մյուս մասին: Առիթները լինում են կենցաղային ամենապարզեր հարցերը: Որոշ մարդիկ խիստ սթրեսի պատճառով ձեռք են բերում հիվանդություններ (մարմնի մասերի՝ ձեռքերի-ոտքերի ուռածություն): Առավել դաժան դեպքերում մարդիկ կորցնում են ինքնավստահությունը, նույնիսկ կանգնում են ինքնությունը կորցնելու և խելագարության շեմին: Դա արվում է այլոց ցույց տալու և նրանց հնազանդեցնելու համար:

Կալանավորին նվաստացնելու դասական եղանակ է որպես «գալուբոյ» ներկայացնելը, նրան իգական սեռի անունով դիմելը, նրա հասցեին գռեհիկ «սիրային» արտահայտություններ անելը, նրան ծաղրելը և խմբովի ծանակի ենթարկելը: Դա մինչև ինքնասպանության աստիճանի ճնշող երևույթ է, և դժվար թե որ որևէ մեկը բողոքի իր նկատմամբ նման բռնություն կիրառվելու դեմ:

Կալանավայրերում տարածված է դումարը, բայց, իհարկե, պարտադիր չէ: Ասում են՝ իբր չի թույլատրվում միամիտներին խաղի մեջ «քաշել» և, օրինակ՝ ձեռքից խլել նրա տունն ու տեղը: Սակայն ոչ քիչ դեպքերում մի դատապարտյալ փաթաթվում է մյուս դատապարտյալի «վզին» և անվերջ կրկնում. «Բա կյանքի համար մի հատ չխաղա՞նք»:

Դումարից գոյացած գումարի մեկ երրորդը փոխանցվում է գողատեսին: Գոյություն ունի դումարի չափի վերին սահման՝ 100.000 դրամ: Դրանից ավելի գումարով խաղալու դեպքում պետք է նախօրոք այդ մասին տեղյակ պահել գողատեսին:

## *Քաղբանտարկյալը կալանավայրում*

### 9 մարտի 2008 թ. «Նուբարաշեն», Վարդգես Գասպարիի հուշերից

Դեռ մարտի 1-ից լինելով հացադուլի մեջ՝ ինձ որպես հացադուլավորի տեղափոխեցին «Նուբարաշենի» հացադուլի 04 խուց, որը գտնվում է նկուղային հարկում: Այդ խցում էր ոմն Տիգրան Թադևոսյան, ով իբր 50 օր հացադուլի մեջ էր: Հետո իմացա՝ կրկնահանցագործ էր: Խուց մտնելուն պես Տիկոն հարցրեց՝ փող ու-

նե՞մ: Հարցրի՝ ինչի՞ համար, պատասխանեց՝ փիսամինի հաբեր գնելու...

Որպես նորեկի՝ այդ խուց տեղափոխվելու լուրը շուտով հասավ «պալաժենիա» (բերդի ելումուտի մասին ամբողջ ինֆորմացիան անմնայուն ճշգրտությամբ փոխանցվում է «պալաժենիա»), ուստի հարցում արին՝ արդյոք ծխո՞ւմ եմ: Տիկոն ուզեց, որ հա ասեմ, որպեսզի ծխախոտի իմ բաժինն էլ վերցնի: Ես էլ հակառակի պես ճիշտն ասացի, որ չեմ ծխում, ու էդտեղից սկսվեց իմ ու Տիկոյի և, ընդհանրապես, գողականների ջրբաժանը, ինչու չէ՝ նաև անհամատեղելիության պրոբլեմը: Դրանից հետո սկսվեց բարիկադավորումը... Ես մնացել էի մեն-մենակ քրեական հանցագործների և մարտի մեկի սպանդն իրականացրած ռեժիմի ներկայացուցիչների միջև, ընդ որում՝ դրանց փաստացի միասնական գործունեության դաշտում:

(Դեռ միջանցքում տեսել էի, որ «զոն նայողը» (երևի նույն Երոն) կոկիկ (կասեի՝ տնական) հագնված, բջջային հեռախոսը ձեռքին, օրը ցերեկով անարգել շրջում էր միջանցքով, նայում խցերը...)

Իմ ներկայությունը շուտով անտանելի դարձավ Տիկոյի համար, և նա որոշեց ինձ լարել, հեռացնել «իր» տնից: Ես, իհարկե, հետո գլխի ընկա... Ասեմ, որ պրոֆեսիոնալ հանցագործները կալանավայրը իրենց տունն են համարում (փորձով վերամբարձ տոնով սկսնակ հանցագործներին ասում են. «Հլը լսի, քեզ նորմալ պահի, դու դեռ տուն պետք գնաս, իսկ ես արդեն եկել եմ իմ տունը...»):

Իմ ներկայությունը խանգարում էր Տիկոյի գաղտնի սնվելուն և, ընդհանրապես, պարելակերպին: Ուստի շարունակ անտեղի վեճ էր հրահրում, ինձ պահում մշտական լարվածության մեջ: Պահանջում էր՝ թերթ չկարդամ, որովհետև ճխկճխկում է, չգրեմ՝ խրթխրթում է, չհազամ, որովհետև դրա ձայնը խանգարում է իրեն... Ինքը ցերեկը քնում էր, գիշերը խանգարում՝ չթողնելով ինձ քնել: (Ի դեպ, կալանավայրում այդպես է՝ ցերեկը քնում են, գիշերը՝ արթուն մնում, իբր, գիշերը հսկողությունը թույլ է, դումար են խաղում, բջջային հեռախոսից օգտվում և այլն):

Անընդհատ լարվածության աճը այնտեղ էր հասցրել, որ արդեն 2 կամ 3 օր չէի քնել. ցերեկը քնելու սովորություն չունեմ, իսկ գիշերը փաստացի չէր թողնում քնեի... Այդպես 2-3 օր մի կերպ ձգեցի, սակայն երրորդ օրը բողոքեցի, որ անհամատեղելի է ինձ և Տիկոյին նույն խցում պահել և մեզ պետք է առանձնացնել:

Երեկոյան խուց մտավ բերդի պետի տեղակալը և հայտնեց, որ ոչինչ անել չի կարող. «Ի՞նչ անենք, սա է մեր հնարավորությունը»: Դա պարզ ազդանշան էր Տիկոյին, որ ինչ ուզի՝ կարող է անել, իրեն բան ասող չի լինի:

Արդեն չեմ հիշում՝ քանի գիշեր էր էս մղձավանջը շարունակվում... Եթե հանկարծ աչքս կպնում էր, մեկ էլ հանկարծ Տիկոն մի բան էր շպրտում ինձ վրա կամ սուսուփուս գալիս-կանգնում էր գլխավերևումս՝ հասկացնելով, որ կարող է այդպես աննկատ մոտենալ և իր ուզածն անել: Սպառնում էր, որ սպանելու է ինձ՝ էլեկտրահարելով, խեղդելով...

Ասեմ, որ մինչ այդ էլ ինձ դումարի մեջ ներքաշելու նրա համառ փորձերը անհաջողության էին մատնվել, և նա խիստ զայրացած էր նաև դրանից: Պարտադիրոջ լկտիությամբ շարունակ կրկնում, պահանջում էր՝ սաա տնից փող բերեն...

Ինքն ակտիվ շփվում էր հսկիչների հետ, ակտիվ կապի մեջ էր «պալաժենիայի» հետ, ներկայանում էր որպես կալանավայրի տեր ու տիրական, իսկ ես՝ որպես խեղճուկրակ, բանդայի ճիրաններում հայտնված անօգնական մեկը...

Նման անելանելի իրավիճակում ես ընդամենը դիմումներ էի գրում կալանավայրի պետին, ՄԻՊ-ին և... Իսկ «գրելը», այսինքն՝ «բողոք գրելը» կալանավայրում անվանում են բոզություն, որի համար նախատեսված է ամենախիստ պատիժը: Ուրեմն Տիկոն արդեն արտոնված էր պատիժն ի կատար ածելու:

Ինքը պարբերաբար կանչում էր հսկիչին, նրա միջոցով փոխանցում էր քսիվ (գրություն)՝

խցի, իմ և իրավիճակի մասին և համապատասխան ցուցումներ ստանում «պալատեինիայից»: Անընդհատ կրկնում էր, որ հեսա-հեսա գալու են, իմ վերջը տան...

Մութն ընկնելուն պես ցերեկվա ձևական կարգուկանոնը չքանում էր, ավելի ուշ արդեն տիրում էր կատարյալ անօրենությունը. միջանցքից լսվում էին անսովոր, արտառոց անցուդարձի ձայներ, աղմուկ, որը գնալով ավելի էր ուժգնանում: Լսվում էր շատ բարձր փողոցային թուրքական, արաբական երաժշտության վայնասունը (երևի այլ ձայները խլացնելու նպատակով): Միջանցքում կարծես ինչ-որ մարդիկ ռազբիրաս էին անում, հայհոյում, գոռգոռում էին...

- Երո՜, Երո՜...

- Կմորթե՜մ, կմորթե՜մ...

Երբեմն ձայներն այնքան մոտիկ էին, որ թվում էր՝ հենց խցի դռան հետևում ինչ-որ մեկին դաժան բռնության են ենթարկում: Ամենաշատ լսվում էր «կմորթե՜մ, կմորթե՜մ» հիստերիկ գոռգոռոցը: Մերթընդմերթ քացով խփում էին դռանը, այնքան ուժգին, որ ամեն վայրկյան թվում էր՝ դուռը կբացվի, և ներս կխուժեն սալդատները...

Պարզ էր արդեն. լուրը հասել էր «զոն նայողին», որ ես հանդգնում եմ չենթարկվել գողական բերդի կանոններին:

Տիկոյից (և գողական համակարգից) հեռու մնալու իմ ամբողջ ջանքերը ընդամենը մի փոքր հետաձգեցին իրադարձությունների զարգացումը: Ի վերջո, մարտի 11-ի լույս 12-ի գիշերը Տիկոյի դուխը հերիքեց իր սպառնալիքներն ի կատար ածելու:

Գիշերները ընդհանրապես երևի ավելի հանգիստ էր խմում քաղցր թեյ, վիտամինի հաբեր և այլն, ավելի էր աշխուժանում, ավելի ագրեսիվ դառնում...

Ասեմ, որ արդեն ձախողվել էր նրա հերթական, ամենաասոր սպառնալիքներից և ահաբեկման փորձերից մեկը, թե իբր որպես տղամարդու փչացնելու են ինձ: «Կնիկդ էլ որ իմանա սրա-նրա, սաղի ... -ն ես ...ում, կզզվի քեզնից, կթողնի-կգնա, հետո կտեսնեմ...»

Ես փորձում էի հեռու մնալ նրա հետ որևէ շփումից, փորձում էի տարածություն պահել, ինչը Տիկոն գնահատում էր որպես իր նկատմամբ արհամարհական վերաբերմունք, որից ավելի էր գազազում:

Նրա ինտրիգներից մեկն էլ այն էր, որ ներկայանում էր որպես թոքախտավոր: Գազազած ինձ վեճի, քաշքշուկի սադրելիս 1-2 անգամ թքեց ինձ վրա, ջուրը ողողեց բերանում և թափեց ինձ վրա՝ ցինիկաբար հռհռալով, որ ես էլ արդեն վարակվել եմ թոքախտով, և որ երբեք էլ չեմ կարող գրկել, համբուրել որդուս: Ի դեպ, այս բոլոր կտտանքների մասին ես բողոքեցի նաև իմ դատավարության ժամանակ, ինչին, ըստ Քրեական օրենսգրքի, դատավորը պարտավոր էր անդրադառնալ և հետաքննություն նշանակել: Սակայն ո՛չ դատարանը հետաքրքրվեց այդ հարցով, ո՛չ էլ մենք կարողացանք բավարար չափով զբաղվել քաղբանտարկյալներին խոշտանգումների ենթարկելու հարցերով:

Ինչևէ: Մարտի 11-ի լույս 12-ի գիշերը Տիկոն ավելի գազազած և ագրեսիվ էր և արագ սադրեց, հրահրեց հերթական վեճը: Տեսնելով իմ պասիվությունը՝ մոտեցավ, բռնեց շորերիցս, փորձեց քաշ տալով ինձ «հանել» խցից: Ասեմ, որ դա կալանավորի կապիտուլյացիայի իրավիճակ է, երբ ինքը մոտենում, խփում, թակում է դուռը, և խցի դուռը բացվելուն պես կալանավորն իրեն դուրս է նետում: Այսպիսի կալանավորը ամբողջ բերդում հայտնի է դառնում որպես կոտրված, ոչնչացված, և նրա հետ բոլորը որպես այդպիսին են վերաբերվում:

Տիկոյի հարձակումները ինձ վրա տևեցին մի քանի ժամ: Մերթ գազազում, մերթ հանդարտվում էր: Ես ոչ միայն փորձում էի պաշտպանվել, այլ նաև փորձում էի հանկարծ նրան չվնասել: Պարզ է՝ ես, որ միանգամայն անհիմն մեղադրվում էի քաղաքի կենտրոնում ոստիկանին քաշքշելու մեջ, Աստված մի արասցե մի փալասի վրա ձեռք բարձրացրած լինեի, էն էլ՝ ավազակապետության միջնաբերդում:

Տիկոն բռունցքներով և քաշքշելով արդյունքի

չհասնելով՝ վազեց-վերցրեց երկարացման լարը, նախ փորձեց այն գցել իմ պարանոցը, որ ինձ խեղդի: Դա իր ուժերից վեր նկատելով՝ լարը մի քանի ծակ արեց և, թափով պտտեցնելով, փորձեց լարի ծայրի «տրայնիկով» իմ գլխին հարվածներ հասցնել: Մի քիչ անց ինձ հաջողվեց նրա ձեռքից խլել լարը և մի կողմ շպրտել: Դրանից հետո նա իր շալվարի ներսից հանեց ինքնաշեն դանակը և սկսեց թափահարել իմ դեմքի և որովայնի կողմերը: Այս ամբողջ ընթացքում ո՛չ այս քաշքշուկից, ո՛չ էլ Տիկոյի գազազած վայնասունից ոչ մի հսկիչ չմոտեցավ, այն դեպքում, որ երբ Տիկոյին էր պետք լինում, նույնիսկ կամաց ձայնով հսկիչին կանչելիս նա սահուն, շտապ գալիս, մոտենում էր:

Թե ինչքան տևեց այդ քաշքշուկը, չեմ կարող ասել. այդպես անցավ գրեթե ողջ գիշերը... երբ նկատեցի՝ լույսն աստիճանաբար բացվում է, այսինքն՝ արդեն անցել էր անտեր անտիրության պահը:

Ինչպես հարկն էր՝ պատրաստեցի դիմումս և ժամը 10-ին՝ ամենօրյա «պրավերկայի» ժամանակ, այն հանձնեցի: Ինձ տարան հերթապահ մաս, բացատրություն վերցրին: Ի դեպ, ես նկարագրեցի միայն ֆիզիկական բռնության փաստը, մասնավորապես ծխախոտով ձեռքս այրելը (դե, հոգեբանական բռնությունները շատ ավելի դժվար է ապացուցել): Բայց նույնիսկ ֆիզիկական բռնությունները կարգին չգրանցվեցին, օրինակ՝ դաստակի այրելը, սակայն նույնիսկ դա չգրանցեցին: Դե, դատաբժշկական քննության և էդ բաների մասին դեռ չգիտեի, նաև այն, որ դեռ 2008-ի մարտն էր, օրենքներն ավելի անկատար էին:

Ինձնից բացատրություն վերցնելուց հետո խուզարկեցին խուցը, և հայտնաբերվեց 50-օրյա «հացադուլավոր» Տիկոյի թաքցրած թեյը, շաքարավազը...

Այնուամենայնիվ, ինձ այդ խցում ևս մեկ օր թողեցին, իսկ մարտի 14-ին տեղափոխեցին մեկ այլ՝ 5-րդ հարկում (ցմահ դատապարտյալների բաժին) գտնվող N 79 խուց, որտեղ ես արդեն մենակ էի: Մենակ, հարաբերական հանգիստ... մասնավորապես արդեն չկար փողոցային երաժշտության վայնասունը:

Մարտի 14-ի գիշերը շատ լավ եմ հիշում, որովհետև հաջորդ օրը առավոտյան քնից արթնանալով հիշեցի, որ նախկին խցում մեկ շաբաթ ես չէի քնել կամ համարյա չէի քնել:

Ես չեմ կարող միանշանակ գուշակել՝ ո՛րն էր հենց այդ ժամանակ ինձ տեղափոխելու պատճառը, արդյոք դա միտված էր իմ անվտանգության պաշտպանությա՞նը, թե՞ արդեն բացահայտվել էր 50 օրվա կեղծ հացադուլավորը, և նրան պիտի տանեին խցից... թե՞ այն հանգամանքը, որ հենց այդ օրը «Նուբարաշեն» պիտի այցելեին Խոշտանգումների կանխարգելման կոմիտեի ներկայացուցիչները: Համենայն դեպս, նույն այդ օրը ինձ հանդիպեց Կոմիտեի անդամներից մեկը, ում ես հնարավորության սահմաններում բացատրեցի իրավիճակը:

Դրանից 2 օր անց ինձ հանդիպեցին Հայաստանի ՄԻՊ-ի երկու ներկայացուցիչներ, որոնցից ես իմացա, որ նրանք իմ 3-4 դիմումներից ոչ մեկը չեն ստացել: Ավելի ուշ (մոտ մեկ ամիս հետո) իմ համառ հետևողականության արդյունքում պարզեցի, որ մինչ այդ իմ բոլոր դիմումները ստացել և պարզապես աղբամանն են նետել... և, փաստորեն, բառի բուն իմաստով այդ ընթացքում խզել իմ կապը արտաքին աշխարհի հետ: Նշեմ նաև, որ այդ օրերին ինձ ևս այցելեցին հասարակական դիտորդներ Ավետիք Իշխանյանը և Արման Դանիելյանը, որոնք, իմ ընկալմամբ, վախվորված և զգուշավոր էին: Հիշում եմ՝ երկու անգամ հիշեցրին, որ ես արգելանքի տակ եմ, և իրենց հետ շփումը այդ շրջանակում է:

Նշեմ նաև, նրանք հետագայում էլ մի քանի անգամ այցելեցին, սակայն այդ մասին այլ առիթով կգրեմ:

## *«Երբեմն հսկիչները ջարդում կամ խցից տանում էին այն ամենը, ինչ բանտարկյալների հարազատներն էին բերել»*

2004 թ. Մատաղիսի զորամասում երկու զինծառայողների սպանության գործում մեղադրվող Արայիկ Զալյանը, ում ցմահ ազատազրկման էին դատապարտել, 2 տարի 8 ամիս անազատության մեջ գտնվելուց հետո արդարացվեց: Այդ անվերջանալի թվացող տարիներին նա հասցրել է լինել «Գորիս», «Նուբարաշեն» և Ստեփանակերտի (այժմ տեղափոխվել է Շուշի) քրեակատարողական հիմնարկներում: Իսկ մինչ այդ ռազմական ոստիկանությունում 72 ժամի փոխարեն 3 ամիս անօրինական կերպով պահելու վրա էլ աչք փակել հնարավոր չէ: «Դե, դա բնական էր... ո՞վ կմտածեր, որ անօգնական զինվորը ինչ-որ բան կարող էր անել»,- պատմում է Արայիկ Զալյանը:

Թե ի՞նչ է կատարվում զարհուրանք պատճառող բանտի պատերի ներսում, այդ մասին որոշեցի զրուցել Զալյանի հետ: Եվ թեև Արայիկին արդարացնելուց հետո արդեն տարիներ են անցել, և հնարավոր է՝ որոշակի փոփոխություններ էլ արված լինեն բանտերում, բայց հարցերին տված նրա պատասխանները ինձ և, հուսամ՝ շատերին հնարավորություն կտան որոշակի պատկերացում կազմելու Հայաստանի ՔԿՀ-ներում տիրող իրավիճակի ու պայմանների մասին:

Ինչպես բոլոր ՔԿՀ բերած կալանավորներին, Արայիկին էլ սկզբում տեղավորել են կարանտինի խցում: Երեք օր շարունակ զինվորին այնտեղ պահելուց հետո են որոշել, թե ո՛ր խուց են տեղափոխելու: Ըստ երևույթին, կալանավորին տեղափոխում են նույն կարգավիճակում գտնվող կալանավորների խուց (դատապարտյալների, մինչդատական վարույթի, պատիժը կրողների և այլն):

Երբ հարցրի, թե արդյո՞ք նախնական բուժզննում անցել է, Զալյանը պատասխանեց. «2004-ին դեռ բուժզննում անցնելը նորմալ կարգավորված չէր: Ես նույնիսկ չեմ հիշում՝ առաջին անգամ բուժզննում անցա՞, թե՞ չէ»:

Կարանտինի խցի սանիտարահիգիենիկ վիճակը ծայրահեղ անմխիթար էր, քանի որ այնտեղ հիմնական բնակիչ չի լինում: Կեղտոտ պատերով, խոնավ, ցուրտ սենյակ էր, զուգարանի պատը կիսով չափ շարված ու դուռ չուներ. «Ամենաճնշող խցերից էր, ոչ մի պայման չկար... Ով գալիս էր, մի բան փչացնում, գնում էր»,- պատմում է Արայիկը: Նրան տեղավորում են 71-րդ խցում, որը նախատեսված էր դատական քննության մեջ գտնվող, առաջին անգամ կալանավորվածների համար:

Խցի պատերի տակ վեց հատ երկհարկանի մահճակալներ էին, իսկ կենտրոնում՝ սեղան՝ երկու նստարաններով: Իսկ երբ 2006-ի հունվարի 11-ին Եվրոպայի խորհրդի անդամ պետությունների համար «Եվրոպական բանտային պայմանների մասին» հանձնարարականով սահմանվեց բանտախցում մեկ կալանավորի համար 4 քմ տարածք ունենալու նորմը, երկու մահճակալը հանեցին, բայց կալանավորների թիվը չկրճատվեց, և ոմանք քնում էին նստարաններին: Արայիկի խոսքով՝ նման իրավիճակում հայտնվում էին այն կալանավորները, ովքեր բանտում են հայտնվել անմարդկային արարքի համար, և հենց այդ նույն կալանավորներն էլ զբաղվում էին խցի մաքրությամբ: Խուցը, որտեղ Արայիկն էր պահվում, մյուսներից տարբերվում էր մաքրությամբ, զուգարանի պատն էլ մինչև վերջ շարված էր, տեղադրված էր սալօջախ, իսկ ուտելիքը հարազատներն էին բերում:

Արդարությունը վերականգնելու նպատակով Արայիկը մոտ երկու ամիս հացադուլ է արել: Հացադուլը օրինական դաշտ տեղափոխելու համար դիմում է գրել ՀՀ գլխավոր դատախազին՝ պահանջելով արդարացնել իրեն, և ՔԿՀ պետին՝ իրեն հացադուլավորների խուց տեղափոխելու համար: Եվ չնայած ամեն ոք ինքն է որոշում՝ սնվե՞լ, թե՞ չսնվել, ՔԿՀ ղեկավարության

կարծիքով՝ Զալյանն իր հացադուլով խախտում էր ՔԿՀ ռեժիմը, և այդ պատրվակով նրան որոշ ժամանակով տեղափոխում են պատժախուց:

Նախկին դատապարտյալը հիշում է, որ պատժախուցը նախատեսված էր երկու հոգու համար: Առաջին հարկում էր ու կիսով չափ գետնի տակ, բնական լույսն ու մաքուր օդը խուց չէին թափանցում: Ճաղավանդակը մի մեծր առաջ էր: Խցի պատին ամրացված էին երկու ծալովի մահճակալներ, որոնք ցերեկը ծառայում էին որպես սեղան: «Ընդհանուր առմամբ պատժախցերում ծանր պայմաններ էին: Խոնավ ու ցուրտ խցեր են: Իմ հանդեպ վերաբերմունքն այլ էր, քանի որ ես հացադուլի համար էի այնտեղ հայտնվել: Ինձ նույնիսկ թույլ տվեցին հետս վերցնել ներքնակն ու տնից բերված վերմակը,- պատմում է Արայիկը և շարունակում,- հացադուլով կարողացա հասարակության մի ստվար զանգվածի ուշադրությունն ինձ վրա սևեռել: Իմ կողքին էին բազմաթիվ հասարակական կազմակերպություններ, լրագրողներ, իրավապաշտպաններ, ուղղակի քաղաքացիներ: Այդ աջակցությունն ի վերջո բերեց արդարության վերականգնմանը»:

Վերաքննիչ քրեական դատարանի կողմից ցմահ դատապարտման վճռի կայացումից հետո Զալյանին տեղափոխում են ցմահների 90-րդ խուց: Նրա պատմելով՝ ցմահների խցերը հիմնականում միատեսակ, 4 հոգանոց խցեր են: Նրանք ունեն իրենց հեռուստացույցը, սառնարանը, որը բերել են իրենց հարազատները:

Լինում են դեպքեր, երբ աշխատակազմի հսկիչները ջարդում կամ խցից տանում են այն ամենը, ինչ բանտարկյալների հարազատներն էին բերել: «Բանտի սննդից չէինք օգտվում, միայն հացն էինք վերցնում: Մեր հարազատներն էին ուտելիք բերում, մենք էլ հենց խցում պատրաստում էինք: Չկար հիգիենայի ոչ մի պարագա»,- հիշում է Արայիկը, ապա հավելում, որ բաղնիքի համար սահմանված օր կար, և այդ օրը տանում էին լողանալու: «Բաղնիք էլ չէր, է... մի խողովակ էր, միջից ջուրը թափվում էր գլխիդ»: Ամռանը իրենք իրենց գլխի ճարը տեսնում էին՝ շշերը ջուր էին լցնում, դնում ճաղավանդակի արանքում, տաքանում էր, ու խցում լողանում էին:

Իսկ թե ինչպես է կազմակերպվում կալանավորների զբոսանքը, Արայիկը նշում է, որ ուղղակի գնում ես բանտի կտուրի վրա քայլելու: «Նույն բետոնե պատերն են, միայն վերևից մաքուր օդ ա գալիս: Մի այլ զբոսանքի տեղ էլ կար. քանի որ բանտը կլոր էր, մեջտեղում քառակուսի կտրած էր ու էլի վերևը՝ ցանց: Այդտեղից էլ արև ես տեսնում: Ցմահներին աշխատում էին ամեն աշխատանքային օր տանել զբոսանքի, բայց ամեն օր անիմաստ էր գնալը»,- դառնությամբ հիշում է նախկին բանտարկյալը:

Խոսելով տեսակցության մասին՝ Արայիկը պատմում է, որ նախաքննության փուլում քննիչն է որոշում՝ կարո՞ղ ես տեսնել բարեկամներիդ, թե՞ ոչ, իսկ արդեն դատավարության ընթացքում դատապարտյալը ենթարկվում է բանտի կանոններին: Չնայած ամիսը երկու անգամ էր տեսակցության օր նշանակված, բայց հնարավոր էր՝ բարեխոսեիր և մեկ անգամ ավել գնայիր տեսակցության, իսկ ուտելիք կարող էին բերել ամեն աշխատանքային օր: Ցմահ բանտարկյալների համար նաև երկարատև տեսակցություն էր նշանակված, երբ հարազատները կարող էին գիշերը մնալ բանտարկյալի հետ:

**Անահիտ Բաղդասարյան**

## *Բանտից՝ Ռուսաստան*

37-ամյա Արթուրը (անունը փոխված է) «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկից ազատ է արձակվել՝ 6 տարի այնտեղ անցկացնելուց հետո:

«Հիշում եմ, թե առաջին անգամ ինչպես մտա բանտախուց, և այն զգացողությունները, որ ապրեցի այդ պահին: Միայն ուզում էի փախչել, հետո՝ այն մտքին էի, թե ուր որ է՝ կգան և կհանեն ինձ այնտեղից: Խցակիցներս հարցնում էին, թե ինչի՞ համար եմ եկել, իսկ ես չգիտեի ի՞նչ պատասխանել: Առաջին օրը քնելու տեղ չունեի, որովհետև այն խցում, որտեղ ես էի, 10 մահճակալ էր դրված, բայց 25 հոգի պետք է քներ,

իսկ ես չմտա այդ 10-ի մեջ»,- պատմում է նա:

Մի քանի շաբաթ անց Արթուրի համար այլևս սովորական էին դարձել հազվադեպ լոգանք ընդունելը, առանց սափրվելու մնալը, օրերով մի կտոր հաց ուտելը, մեկ-մեկ էլ՝ 3-անգամյա սնունդը: Բայց արդեն հոգնել էր լոբով պուր ուտելուց, իսկ մսի մասին երազելն անգամ անհնարին էր, հարազատներն ինչքան կարողանում էին՝ ուղարկում էին:

Ավելին, փոքրին սրբելը նույնպես դարձան նրա պարտականությունը: Երբ պատմում է այս մասին, ասես ինքն իրեն մխիթարում է. «Մենք մեր տունն էինք մաքրում, ուրիշ տեղ չէինք մաքրում, հասկանո՞ւմ ես»:

- Ամիսը մեկ, հազվադեպ՝ երկու անգամ տանում էին իբր թե զբոսանքի, էդ էլ հազիվ մաքուր օդ էինք շնչում ու դեռ ժամ չանցած՝ արդեն լսում էինք՝ հավաքվե՜ք,- շարունակում է պատմել Արթուրը: - Անազատության մեջ խցակիցների հետ հարաբերությունները շատ լավ էին, բոլորի հետ բառացիորեն էիր հարցեր լուծում, էնտեղ ճիշտ ու սխալ կա, գաղափար հասկացությունը կա, իսկ էստեղ՝ ով փող ունի՝ կարողանում է իր ճիշտն առաջ տանել: Էնտեղ անպայման արտոնյալ էլ կա, նրանք են հիմնականում բոլոր հարցերը ճշտում:

Բանտում նրանք ֆինանսական խնդիրներ էլ էին ունենում. խաղում էին կամ գումար մուծում, որպեսզի չներքաշվեն խաղի մեջ: «Ամսական գումար կար, մուծում էինք ու տենց պրծնում»,- ասում է Արթուրը, թեպետ չի էլ ժխտում, որ երբեմն ինքն էլ էր խաղում:

Արթուրը նաև խոսում է ջահելների մասին, որոնք իրենից տարիքով փոքր են և հայտնվել են այնտեղ: «Թող պետությունը մտածի, գրված օրենքներին համապատասխան վարվի, թե չէ մեղք են ջահելները՝ երակ են փրթում, բերան կարում»,- ասում է և հիշում այն դեպքը, երբ կրտսեր բախտակիցներից մեկի ընկերուհին զանգել էր և ասել, որ այլևս նրա հետ չի ուզում կապ ունենալ...

Այս ամենը պատմելիս հուզվում է և, այլևս չկարողանալով արցունքները զսպել, ասում. «Գիտե՞ս, եթե հիմա մտնեմ դասարան, և դասավորն ինձ ասի՝ էլի 6 տարի պիտի նստես, ինձ համար դա սովորական կլինի, որովհետև չեմ կարողանում հարմարվել: Ինձ դեռ թվում է, որ առավոտյան պիտի մինչև 12-ը լվացվեմ, հետո ջուր չի լինի, ջուր հավաքեմ, ավելը վերցնեմ»:

Արթուրի համար չկա ոչ մի վառ հիշողություն այդ 6 տարիներից:

- Մի երիտասարդ կար՝ Կրասնոդարից էր եկել, ասում էր. «Արթո՛ւր, նայի՛, նայի՛, կարիճները գնում են, աղվեսները կգան, մեզ կուտեն»: Երևի հոգեկան խնդիրներ ուներ:

Նշում է նաև, որ բանտում աշխատում էին հոգեբաններ, որոնք միշտ չէ, որ օգնում էին:

Ազատության մեջ գտնվող Արթուրը մեր զրույցի պահին արդեն Ռուսաստանի տոմս էր գնել, շուտով մեկնելու էր: «Ինձ այստեղ վաս եմ զգում,- ասում է: - Բոլորն ինձ մի տեսակ են նայում: Ոչ ոք չի ուզում հասկանալ, որ այն, ինչ արել եմ, եղել է զուտ ֆինանսական խնդիրների պատճառով: Գնում եմ, մեկին կսիրեմ ու կամուսնանամ, իմ երազած ընտանիքը կկազմեմ, անգամ թուրքի (երկար մտածեց – Ա. Գ.), ռուսի, եզդիի, կարևորը՝ հասկանա ինձ: Ես դեռ երջանիկ եմ լինելու, վստահ եմ»: Դեռ հանում է թաշկինակը և սրբում արցունքները:

**Անահիտ Գրիգորյան**

## *«Ախր դու չես պատկերացնում՝ ի՜նչ տեղ ա բանտը»*

Միջին տարիքի տղամարդ է Արամը (անունը փոխված է), բայց տարիքից մեծ է երևում: Կյանքը կարծես դեմքին դաջած լիներ կորածի ու կործանվածի դրոշմը, որից երևում էր, որ նա անցել է ազատազրկման վայրերի՝ ֆիզիկական, հոգեկան ու բարոյական մսաղացի միջով:

Շատ է ծեծվել, այդ էին վկայում կոտրված քիթը, ատամների բացակայությունը...

Մի քանի դատվածություն ունի: Տարբեր հանցագործությունների համար 12 տարվա

ազատազրկման է դատապարտվել: Պատիժը կրել է «Կոշ», «Սևան», Շուշիի և «Գորիս» քրեակատարողական հիմնարկներում: «Գորիս» քրեակատարողական հիմնարկում եղել է 2003-2009 թթ... Մինչ այդ աշխատում էր քեռուն պատկանող ավտոտեխսպասարկման սրահում՝ հանապազօրյա հացը վաստակելով: Բայց հետո նրա կյանքում ամեն ինչ փոխվեց ... Վատ շրջապատ էր ընկել... Հարազատների համառ ջանքերն ապարդյուն էին անցել, չէին կարողացել նրան հանել այդ ճահճից ու կամաց-կամաց երես թեքեցին նրանից:

Շատ հարցեր ուղղակի շրջանցում էր Արամը, պատասխանել չէր ուզում կամ էլ մռայլվում ու դադարներով էր խոսում: Երբեմն զրույցն ընդմիջում էր, դուրս էր գալիս ծխելու: Ո՞վ գիտի՝ ինչե՞ր է տեսել բանտում: Հավանաբար տանջող, վատ հիշողությունները շատ էին: Երկու անգամ եմ նրան հանդիպել. առաջին անգամ թույլ տվեց ձայնագրիչը միացնել, իսկ երկրորդ հանդիպմանն ավելի լարված էր, նյարդային, անհանգիստ, կարծում էր, թե ձայնագրիչը թաքուն նկարում է, ասում էր. «Ես գիտեմ, է՜, մի սռոկ էլ քո պատճառով եմ նստելու»: Ակնհայտ էր, որ վախեցած է:

Չի թաքցնում, որ Գորիսում՝ նախակալանքի տակ եղած ժամանակ, ոստիկանությունում իրեն շատ են ծեծել. «Բանտում միշտ էլ լինում են վիճաբանություններ, տարբեր մարդիկ են, տարբեր բնավորություններով: Էնտեղ էլ են ինձ ծեծել, բայց ամենաշատը ոստիկանությունում են ծեծել»,- պատմում է Արամը: Հիշում է, որ մի անգամ բանտում սահմանված չափով ծխախոտ չտրամադրելու դեմ ընդվզելու պատճառով իր ու ռեժիմի պետի միջև վիճաբանություն է ծագել, որին հաջորդել են ծեծկռտուքը, և ստիպված էր մի քանի օր պատժախցում անցկացնել:

«Գորիս» քրեակատարողական հիմնարկում պատիժը կրելիս «աշխատողների բրիգադում» է եղել Արամը, խցակիցներն էլ էին նույն բրիգադից, միասին բանտի վերանորոգման աշխատանքներին են մասնակցել: Ասաց, որ իր ներդրումն «օբշյակին» այդ կերպ է եղել: Խցակիցների հետ խնդիրներ չի ունեցել: Արամի խոսքով՝ բանտախցի մաքրությամբ բոլորն էին զբաղվում: Լինում էին դեպքեր, երբ խցակիցներն իրար հետ չէին կարողանում նույն խցում ապրել, ու ծայր էին առնում վիճաբանությունները, և այդ դեպքում խնդրի միակ լուծումը մեկին ուրիշ բանտախուց տեղափոխելն էր: «Դժվար ա, մի մարդու հետ երկար ապրելուց հոգնում ես, ու էդտեղից էլ սկսվում են վիճաբանությունները»,- ասում է նա:

Սննդի որակից չէր դժգոհում, նշում է, որ սնունդը ռեժիմով էին տալիս, օրվա մեջ պարտադիր երեք անգամ սնվում էին: Հիգիենայի պարագաները (լվացքի փոշի, օճառ, ատամի մածուկ, սպիտակեղեն) նույնպես հաճախակի էին տրամադրում և շաբաթական մեկ անգամ կարողանում էին լոգանք ընդունել:

Բանտարկյալներն իրենց օրը տարբեր կերպ են լցնում՝ զբոսանք, հեռուստացույց, գիրք: Ընթերցասերները հնարավորություն ունեն բանտի գրադարանից օգտվելու, որը շաբաթը երկու անգամ բաց է լինում: Նախկին բանտարկյալը նաև նշում է, որ բանտում գտնվելու ժամանակահատվածում դժվար է չներքաշվել ազարտային խաղերի մեջ:

«Ես ինձ հեռու էի պահում դրանից: Երբ խաղում ես, պիտի վստահ լինես, որ կարողանալու ես պարտքդ փակել, իսկ եթե ոչ՝ ավելի լավ ա ինչքան հնարավոր ա հեռու մնաս,- ասում է նա,- բայց խաղացողը խաղում ա: Քաշում են, խաղացնում են, ասում են. «Եկել ես, էս կյանքին ինչո՞վ պիտի պիտանի լինես, կարգեր կա, բան կա, պիտի էդ մարդկանց մի բանով օգնենք»: Բժշկական կենտրոնին էլ են էդ փողերով օգնում, բերդի պետն էլ ա դրանից փող աշխատում, ռեժիմի պետերն էլ... Շուշիում ամեն ինչ շատ խիստ էր, էնտեղ ամեն ինչը վերահսկվում էր, էդպիսի բաներ չկային, իսկ Գորիսում «գողական զոնա» է, ոչ մի բան չի արգելվում»:

Արամը պատմում է նաև, որ եթե պարտվածի հարազատները փող չէին ունենում, պարտքի դիմաց առաջին անհրաժեշտության իրեր, մթերքներ

էին բերում՝ հագուստ, ծխախոտ, սուրճ, թեյ, շաքարավազ: Ամենամեծ գումարը, որ խաղերի ժամանակ պարտվել էր բանտարկյալներից մեկը, 20 հազար դոլար էր:

Պարտվողներն ամեն գնով փորձում էին պարտքը փակել, որ «գալուբոյ զոնա» չընկնեն: Եղել է դեպք, երբ կալանավորներից մեկն ինքն իր մասը կտրել ու տուն է ուղարկել, որ հարազատներն օգնեն: «Գալուբոյ զոնա» ընկնելն ամենաստորացուցիչ բանն է: Էնտեղ ամենակեղտոտ աշխատանքներն են անում՝ զուգարաններն են մաքրում, ուրիշների կեղտոտ հագուստը լվանում...

Բանտից հետո շատ բան էր փոխվել Արամի կյանքում, հայրական տունը դատարկ էր... Ազատվելուց հետո սկսել էր ցավը խմիչքի մեջ մոռացության տալ, տանն այլևս իրեն սպասող չուներ, միակ սպասողը մայր պիտի լիներ, իսկ նա չկար. Արամը բանտում էր, երբ մահացավ իր համար ամենաթանկ մարդը... Երբ մայրը դեռ ողջ էր, ամսվա մեջ պարտադիր երկու անգամ՝ տեսակցության օրերին, այցելում էր որդուն:

Երկու եղբայր ունի, ովքեր ընտանիքներով այլ քաղաքներում են ապրում, բայց ոչ մի կապ չկա նրանց միջև:

Արդեն մի քանի տարի է, ինչ Արամն ազատության մեջ անցկացնում է իր խղճուկ օրերը: Չի աշխատում, փոխարենը՝ հարևաններին է օգնում մի փոր հացի համար, իսկ երբ ձեռքը փող է ընկնում, ավելի շատ է սկսում խմել:

Մեր զրույցը կիսատ մնաց, Արամն ուզում էր շուտ գնալ, պատճառաբանեց, թե հոգնած է ու մի քիչ էլ ծարավ: Մի բաժակ ջուր էի ուզում բերել, բայց դառը ժպիտով ասաց. «Պետք չի, գնամ պիվա խմեմ...» Երևի մոտը փող կար: Գնալուց առաջ խոստացավ, որ էլի կգա, ասելու շատ բան ուներ, ասաց. «Ախր դու չես պատկերացնում՝ ի՞նչ տեղ ա բանտը...»

Գնաց ու էլ չեկավ:

**Քրիստինե Հայրապետյան**

# *Էլ չէր ուզում հիշել...*

1983 թ. Սամվելի (անունը փոխված է) նկատմամբ քրեական գործ է հարուցվել՝ պաշտոնեական լիազորությունները չարաշահելու և յուրացում կատարելու համար: Վեց տարվա պատիժը կրել է «Գորիս», «Նուբարաշեն» և «Կոշ» քրեակատարողական հիմնարկներում:

Չնայած շուրջ երեսուն տարի է անցել, բայց նա շարունակում է հիշել արևի լույսից զրկված իր խուցը, երկհարկանի անկողինը...

Պատմում է, որ չորս պատերի մեջ ստեղծված փոքրիկ «քաղաքն» ունի գրված ու չգրված օրենքներ, խնդիրներ, որոնք տարիների ընթացքում այդպես էլ չեն լուծվում: «Առավոտյան մի բաժակ քաղցր թեյ էին տալիս՝ մի փոքր կտոր հացով: Դա հաց չէր, այլ ջրիկ մի մասսա, որն ուտել հնարավոր չէր. խմորը կոկորդիդ էր մնում: Ստիպված քամիչով անց էինք կացնում ու մի կերպ ուտում»,- սննդի որակի մասին նշում է նա:

Զգալով, որ այն վաս է անդրադառնում առողջության վրա, հրաժարվում է բանտի սննդից: «Հիմնական ուտելիքը հարազատներիցս էի ստանում: Խցակիցներիս հետ գրաֆիկ էինք կազմել, թե ով երբ պետք է բերի»,- շարունակում է նա: Հենց անորակ սննդի պատճառով էլ նախկին դատապարտյալը ստամոքսի խոց է ունենում: Պատմում է, որ հաճախ է բուժզննման կարիք ունեցել, բայց ադմինիստրացիան դժվարությամբ է բժիշկ տրամադրել: «Ավելի ճիշտ՝ չէին հավատում, որ առողջական խնդիրներ ունեի: Իրենց թվում էր, թե ուղղակի պատճառ էի փնտրում, որ արևի լույս տեսնեի»,- հիշում է նա և հավելում, որ մինչև վիճակը չէր սրանում՝ բժիշկ չէին տրամադրում:

Սամվելը պատմում է այն մասին, թե ինչպես մի անգամ խցակցին ինչ-որ պատրվակով ծեծեցին: «Պարզվեց՝ դրսից հանձնարարություն էր, վրեժխնդրություն էր, մեկին գումար էին տվել, որ հանձնարարությունը կատարի»: Նրա խոսքով՝ նման դեպքերում արդարության համար խցերում բողոքի ակցիաների վերածված անկարգություններ էին սկսվում՝ ափսեներ

կոտրելուց մինչև հայհոյանքներ ադմինիստրացիայի հասցեին: Լինում էին դեպքեր, երբ բանտի աշխատակիցներն ինչ-որ մեկին պատժելու համար խցի բանտարկյալների զբոսանքի պահին խառնում էին դատապարտյալների իրերը:

Սամվելի կարծիքով՝ տարիների ընթացքում բանտային պայմանները փոքր-ինչ բարելավվել են, չնայած դրան, բանտարկյալների նկատմամբ վերաբերմունքն ավելի անտանելի է դարձել:

Գաղտնիք չէ, որ բանտարկյալների առօրյայի հիմնական մասը խաղերն են կազմում: Խաղամոլությունը վարակիչ հիվանդություն է: «Այն իրականությունից փախչելու միջոց է: Եթե դու դրսում էլ էիր խաղում, ուրեմն այդ «փոսն» արդեն քո մեջ կա, ու դու բանտում առիթը բաց չես թողնի, որ նորից խաղաս: Բացի դրանից, եթե պարտվում ես՝ անընդհատ ուզում ես խաղալ, որ հետ բերես պարտվածդ: Մի այսպիսի նրբություն էլ կա. որ խաղում կրես-չկրես՝ միևնույն է, պարտված ես: Հաղթում են «հատուկները»,- ասում է Սամվելը:

Պատժախցի մասին պատմելիս Սամվելի դեմքն ավելի է մռայլվում: Ծխախոտ է վառում, սկզբում հազիվ լսելի, պա ավելի բարձր ձայնով, հավանաբար, հասկանալով, որ այդ ամենն արդեն անցյալում է, հիշում է, որ դա մի փոքր ներքնահարկ էր, որի պատերին խոնավությունից բորբոս էր կպել, իսկ առաստաղից անընդհատ ջուր էր կաթկթում: «Ցրտից սիրտված պետք է անընդհատ շարժվել, այլապես կսառես, պահում էին 15 օր, ամեն օր տալիս էին մի կտոր հաց ու մի բաժակ գոլ ջուր...»

Հիմա Սամվելն ընտանիք ունի: Բանտից հետո նրա կյանքը դժվարությամբ, բայց դասավորվեց: Միայն չկարողացավ նախկին աշխատանքում վերականգնվել. «Երբ ունես լավ պաշտոն, դժվար է տարիներ անց վերադառնալ նույն աշխատանքին: Իսկ քեզ փոխարինողներ միշտ էլ կգտնվեն: Դե, ընտանիքդ սոված չմնալու համար էլ պատրաստ ես նույնիսկ լավ պաշտոն ունենալուց հետո բանվորություն անել»:

Էլ չէր ուզում հիշել...

**Մարիամ Մաթևոսյան**

# «Ամեն ինչ հասկըցա, ամեն ինչ գիտեցա»,- առանց ափսոսանքի ասում է նախկին դատապարտյալը

Ալիկը դատապարտվել է գողություն կատարելու փորձի համար: Քրեական օրենսգրքով՝ այդ հանցանքի համար սահմանված է 2-6 տարվա ազատազրկում: Ալիկը մալուխ գողանալու փորձ էր կատարել ընկերների հետ: Նեղ պայմաններում են եղել ինքն էլ, ընկերներն էլ, և որոշել են գողության միջոցով հացի, «պատիրոսի փող հանեն»: Իրենցից առաջ արդեն տարած էին եղել գողության «թիրախը»՝ կաբելը, ընդամենը 3-4 մետր է մնացած եղել: Ոստիկաններն այս անգամ տեղում են գտնվել և հասցրել են բռնել չտարված գողերին: Գողերն էլ, ո՛չ դես, ո՛չ դեն, խոստովանել են իրենց մտադրությունը, նաև՝ մեղքը: 40-ամյա Ալիկը պատիժը կրել է «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկում: Անազատության մեջ, ճիշտ է, երկար չի գտնվել, բայց դա էլ բավական է եղել հիմնովին ճանաչելու «բերդ» կոչված երևույթը՝ իր ներքին օրգանիզմով և կենսագործունեությամբ: Ու, որ ամենակարևորն է, իր ինքնակարգավորվող բնազդով:

«Ազատվել եմ 1/3-ով, նստել եմ ութ ամիս,- ասում է նա: - Հաշվի առան, որ առաջին դատվածությունս է, հետո՝ լավ եմ պահել ինձ, ու ազատեցին»: Պատիժը կրել է բանտախցում, որտեղ 12 կալանավորներ են եղել: Հարաբերությունները վերակացուների, ադմինիստրացիայի հետ լավ է բնութագրում, ասում է. «Ծեծել-մեծել չկար, ով որ խելառություն կեներ կամ սուս խելառ կխաղար, ընոնց կծեծեին, ով որ իրան խելոք կպահեր՝ ձեռ չէին տա: Էդ խելառություն էնողներին էլ հետո կսուսկեին, որ սրանք խելոք մնային: Օրը երեք անգամ հաց կուտային, մեկ անգամ պռագուլկի կհանեին»:

«Բերդում գողը մեկն է, բայց մե կամեռըմ հո բդի նստած էղնի: Գողին էլ բերդում Քեռոբ կը-

սեն, մնացածը սաղը «հարիֆ» են կոչվում»: Ալիկն ասում է, որ ամեն խցում մեկը կա, որ այդ խցի «նայողն» է, որ կարող էր գող չլինել, բայց հասկացող՝ «խառոչի» կամ գողին հավասար տղա լինել: Ասում է՝ կարգն այդպես է. «Դրսից որ բան կուղարկեին, ինքը ռասպառիժասցը կեղներ, թե ում ինչ տա, ում չտա՝ «քեզի են բերե, բայց ես կվերցնեմ» էդ կարգի»:

Հարցնում եմ՝ իսկ ի՞նչ չափանիշներով էր ինքը դառնում այդ «խցի նայողը», նրանցից ամենաուժե՞ղն էր: «Չէ,- ասում է,- ինքը միջների հասկըցողն է, ժամանակին ասպարեզի տղա է եղել, ուղղակի իրան մամենտի տակ «թռցրել» են: Օրինակ՝ կար մեկը, իրան գիտեի, թևերը, դոշերը պիսկռտած, ինքը վախտին կարգին տղա էր եղել, կնայեր էդ տղոնցը»:

Տեսակցություններ լինում էին ամիսը մի անգամ: Ապակեպատից էին մարդիկ զրուցում: Ապակու վրա անցքեր կան, որոնք թույլ են տալիս միմյանց լսել: Անձնական տեսակցություններ էլ էին լինում: Սնունդը լավ էր, շարունակում է Ալիկը, երեք անգամ կերակրում էին, իսկ եթե ուզեիր՝ լրացուցիչ էլ կստային: Ամբողջ օրը խցում էին լինում, մեկ-երկու ժամ զբոսանքի էին հանում՝ ցանցապատված մի տարածությունում, հետո տանում էին խցերը:

Հիգիենայի պարագաները կալանավորները տնից էին ստանում: Սայրերը տալիս էին միայն սափրվելիս, հետո հետ էին վերցնում, վտանգավոր է համարվում կալանավորի մոտ սայր թողնելը: Ալիկն անձամբ բուժսպասարկման կարիք չի ունեցել, բայց բուժկետում, պատմում է, ատամ էլ էին հեռացնում, կույր աղիքի վիրահատություն էլ էին անում: Կալանավորները չէին դժգոհում:

Երբ խցում ընդհարում էր լինում կալանավորների միջև, գործը վերակացուների միջամտությանը չէր հասնում՝ «Հասկըցող տղա կար, ըմպես կեներ, որ ըդիկ կանխեր»: Բանտի աշխատակազմի վերաբերմունքը բոլոր կալանավորների հանդեպ միանշանակ չէր, դա կախված էր այն հանգամանքից, թե ով ինչ հոդվածով էր նստած: «Օրինակ՝ մե հոգիմ եկավ, 15 տարեկան աղջիկ էր բռնաբարել, ըդուր ծեծեցին: Սկզբից որ էկել էր, 30-40 հոգանոց կամեռ էր, սկզբում ընտեղ կնստին, «նայող» չկա, հետո կորոշվի, թե ում ուրտեղ ուղարկեն»:

Կրոնական և սեռական այլ կողմնորոշում ունեցողները միևնույն խցում էին նստում: Մի իսկական աղջիկ էին բերել՝ երկարամազ, երկար եղունգներով, փարթամ կրծքով, շրթներկով: Պարզվել էր՝ իրականում իրեն Նառա անվանողը ծնունդով Հովհաննեսն է, «որ տեսնեիր, չէիր ասի, թե ըդիկ տղա է: Կըսեր, թե տասը տարեկանից ըդուրով է զբաղվել՝ համ ըմպես կենե, համ ըմպես, մե խոսքով՝ էրկու տեսակով դուս ընկած էր»: Այս Նառան ընկերոջը ծեծելու համար էր բերդ ընկել: Ընկերը նրան դավաճանել էր՝ ամուսնացել էր մի աղջկա հետ: Հենց դա էլ Նառայի վրեժխնդրության պատճառ էր դարձել:

Մոլախաղի մեջ ներքաշելու դեպքեր էլ էին լինում: «Բայց եթե չէիր ուզե ղումար խաղա, կերթայիր, կդիմեիր գողին,- պատմում է Ալիկը,- ինքը կկանչեր, կասեր, թե էդ տղուն մի կանչե ղումար խաղալու, դու գործ չունես իրա հետ: Գուզես, կըսեր, արի հետս խաղա»:

Այսօր, երբ Ալիկը բերդի մասին հիշում է որպես իր կյանքում թերթած մի էջի, հարցնում եմ, թե, այնուամենայնիվ, ի՞նչ տվեց նրան ազատազրկումը.

«Բանտը ընձի էդ տղոնց մեջն էղնելու, իրանց հասկընալու հնարավորություն տվեց: Առաջ, որ չէի եղել, ուզում էի հասկընալ իրանց հոգեբանությունը: Գնացի, սաղ տեսա: Էն տպավորությունն է, որ լրիվ ուրիշ տեղ կերթաս: Ճանապարհորդության պես մի բան է: Ամեն քայլը ճիշտ բդի դնես, որ ծուռ չէղնի, ճիշտը բդի խոսաս, ուրիշի ունեցածը, տիրոջ չիմանալով, չվերցնես, որ «շկոդնիկ» չէղնիս»:

Իսկ թե ինչից զրկեց իրեն բանտը, որքան էլ զարմանալի է, Ալիկը պատասխանում է. «Կհավատա՞ս՝ ոչնչից: Տանը չէի, բայց գալիս էին տեսակցության: Ճիշտ է, շատ չեմ նստել, բայց և հեչ մի բանից էլ չեմ զրկվել: Ամեն ինչ հասկըցա, ամեն ինչ գիտեցա»:

**Սամվել Հունանյան**